

# ՂՐԻՎՈՒՄ

1993  
ԳԱԼ-ՁԵՐ





# Էջմիածին



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՎՑ  
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր - Դեկտեմբեր

1993



ՀՐԱՄԱՆԱԿ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱԹԱԶՆՈՑ

ՎԵՃԱՓՈԽ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՑՈՑ



71-95

18208-24



## Խմբագրական

### Ի ԽՆԴԻՐ ՈԳԵՂԵՆԻ

Սերօրյա մարդկային կյանքի հարափոփոխ ընթացքը տարութերվող ովկիանի ծփանքի նման «հոգևոր կյանքի անսպառ բարիքները» ջրամույն է դարձնում և մարդկանց կլանում մարմնավոր տեշչանքների հորձանուտը:

Հոգևոր կյանքի բացակայությունը լրացվում է աշխարհը սիրելու ցանկությամբ: Լուսափառ կյանքի ճառագայթը համակվում է մնացնչողի սրբություն կուտակվող խավարային թմբիրով, բայց Աստված, որ առան է ողորմությամբ (Եփես. Բ 4), միշտ էլ ներդում է մեր մեղքերն ու հանցանքները և հրավիրում զղչման, «որովհետև նրա արարածներն ենք՝ Քրիստոս Հիսուսվ ատեղծվածներ բարի գործերի համար» (Եփես. Բ 10):

Մարդը իր հոգևոր աշխարհով, իր էությամբ, ներքին ապրումներով հոգևոր հարատև փոփոխությունների մի անքակտելի ընթացք է, որը մենք ներդի ձմեռն է գործում իր սառնամանիքներով, մենք էլ՝ հավատի գարունը իր բուրմունքներով:

Մենք Տիրոջ պատվերի մաքուր հոգեկիրն է, մենք էլ խստագոյն ու հակամարտը: Սիրով ու հոգարությամբ Աստծուն մոտեցողը, բարիքներ ու ողորմածություն կատարողը: Մարդը միշտ հոգևոր պատերազմի մեջ է, կյանքի նեղությունների ու չարչարանքների, բանտի, աքսորի ու տարագրության ինշպե՞ս հայդել այդ ամենին. օրինությամբ ու սրբաբանությամբ, համբերությամբ ու ողորմածությամբ, հավատրով, հույսով և սիրով, այլապես անհնարին է երկրավոր կյանքում դիմագրավել բազմապատիկ նախատինքներն ու անարգանքները:

Ուկնդիր լինենք առաջալի հուսադիրչ խոսքերին. «Սիրելինե՛ր, տարօրինակ մի՛ համարեք այն այրող նեղությունը, որ ձեզ փրկելու համար է...»

Այլ, որպեսզի նրա փառքի հայտնության ժամանակ էլ ցնծանք և ուրախանանք» (Ա. Պետ. Գ 12-13):

Անօրենության շղթաները կարելի է փշրել միմիայն Աստծու շնորհների հաղթական գինվածությամբ: Ուրքան էլ հալածիչ բանարկուն հարձակումներ գործի, միևնույն է, Աստծու շնորհների լուսավոր կարգի մեջ թիրախ է դառնալու և դատապարտվելու կորսույան: Բանարկուն դեմ է բարեվաշտության: Քրիստոնեության կատաղի թշնամին գործում է իր արբանյակներով: Սակայն մենք Աստծու փառքի համար հոգևոր պատերազմի մեջ պետք է հաղթանակած դուրս գանք, եթե նոյնիսկ նախատվենք: Լսենք նոյն առաջայի հավատահաստ պատգամը. «Եսկ եթե նախատվեք էլ Քրիստոսի անվան համար, երանելի՞ եք, քանի որ փառքի և զորության անոնք և Աստծու Հոգին է հանգչում ձեր վրա» (Հակ. 14):

Նախ քաջալերված՝ Հիսուս ինքը հոգևոր պատերազմում, առաջինացած խրախուսեց. «Այստեղ, աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեք, որովհետև ես հայդեցի աշխարհին» (Հովի. ԺԶ. 33):

Աշխարհին հաղթած Երկնավոր Թագավորը խրախուսում է նաև հայ ժողովրդին հաղթանակած դուրս գալու հոգևոր պատերազմից: Հայ ժողովրդը գենք ու զրահ, սաղմոսարան ու քնար առաջ Աստծու անվան արծանի մարտավարը, վստահությամբ է կրկնում Դավիթ մարգարեի խոսքերը. «Քոնց ազգերը շրջապատեցին ինձ, բայց Տիրոջ անվամբ հայթեցի նրանց: Շորոջ բոլորս բռնեցին, միահամուռ պաշարեցին ինձ, բայց Տիրոջ անվամբ վանեցի նրանց» (Սահմ. ԾԺԷ 10-11):


Այս, հայդեանակած Աստծու հաղթության լույսով գոտեանդված, շերմացած ու տոգորված ի խնդիր ոգեղենի, հայ ժողովրդը շարունակում է իր ընթացքը դեպի «Նավահանգիստը լուսավոր հույսի» կորսույան մատնելով բանարկուների որոգայթները, որպեսզի փառավորվի արդարների մեռ՝ կասեցնելով մահվան բազմահնար հարձակումները՝ հայացքը դեպի փրկչական մեռն, բայցում է առաջ, նիշելով .... «Հիսուս Քրիստոս թող ուղի մեր ճանապարհները» (Ա. Թեսադ. Գ 11): «Ահա թե ինչու մենք պետք է ավելի ևս ուշադիր լինենք» (Եբր. Բ 1), պահպանելու մեր հայրերի անաղարտ հավատը, մեզ փոխանցած բրիստոնեությունը: Հավատքը Աստծու կողմից փոխանցված մեր հայրերին, իսկ մեր հայրերն էլ իրենց հերթին իրենց սրտերի և հոգիների միջով մեզ փոխանցածը մենք ապրեցնելով փոխանցնենք մեզնից մետս եկող մեր զավակներին:

Ի խնդիր մեր հայրերի, մեր ժառանգած հավատքի, մենք պետք է ապրենք «ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտի, կատարեալ հաւատով» (Ժամագիրը): Առանց ճշնարիտ հավատքի, առանց հավատքի ճշշմարիտ դավանության չենք կարող արժանանալ Երկնքի արքայության, որովհետև «Հավատքը Երկնքի արքայության բանապին է, որն Աստված տվեց, որպեսզի նա, որ հավատքի զորություն ունենա, բացի և արքայություն մըտնի» (Հովի. Երգնակացի): Եվ եթե այսօր շատերը փորձում են մտնել «Այրարատ աշխարհը» Երկնավոր մշակներ Թադեոս և Բարդուղեմետոս սուրբ առաջալների անդաստանը» (Խորենացի), սերմանված փրկության Ավելատարանի կենաց խոսքերով, այսօր շարժնակիում է ոռոգվել Մայր Եկեղեցվոր քարոզիչների շանադրությամբ, միևնույն է, չեն արժանանալու «վեհ ճահաշման»:

Գոտեափին է Հայոց աշխարհը իր վերադիտողներով, իր հոգեստես հայրերով, որոնք հայոց հավատքի ծաղկումին վատահ, հպարտ գործա-

կիցներով, շարունակելու են Հայ Եկեղեցիով քրիստոնեության հայացումը նոյն նախանձախնդիր ոգով, ինչպիսիք եղան մեր հայրերը, առանց կըդգիացման ընդհանուր քրիստոնեական մեծ ընտանիքից, ի սպաս հայ ժողովրդի, ի սեր տիեզերական եղբայրության, ի փառ քրիստոնեության տարածման: Բայց գիտենք, թէ ամեն ինչ չէ, որ կատարվում է Սատծու կամքով, և ահա Հայաստան ժամանած սուս մարգարեները և վարձկան քարոզիչներ իրենց անառարինի վարքով փորձում են ապազգայնացնել մեր ազգայինը: Սատծու խոսքի «նոր վաճառականները» գործում են իրենց շահի և գովասանքի համար, այդ ամենը մենք նկատում ենք տխոր սրտով, որպեսզի պաշիվենք ազգովի, զի Սատված ընդ մեզ է, եթե մենք մնանք հավատարիմ մեր հավատքին, նեռու վանենք աղանդավորական և հերձվածող հավատալիքները, խպան Վտարելով մեր հայրենի եզերքներից նրանց վնասակար դավանությունը, «որովհետև նրանք իրենց եկեղեցուց օտար չեն անվանում ... այլ քրիստոնյաների նման ներս մտնելով դառը թոյն են թափում և իրենց օտար ուսումը գործածում խարելու համար մարդկանց» (Սարգիս Շնորհալի), «խսկ մենք, սիրելինե՞ր, մեր ամենքը կառուցենք հավատի սրբությամբ, աղոթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Սատծու սիրով, սպասելով մեր Տեր Հիսոս Քրիստոսի ողորմությանը հավիտենական կյանքի համար» (Հուդա Ա 20—21): Որպեսզի անմահարար Ավետարանի քաղցր վարդապետությանը նետնող մեր ժողովուրդը, որպես աստվածային այգու ճշմարիտ տունկ, որպես հանդիսարան Ս. Հոգով կենաւորոգ շնորհաց Եսայաշունչ մարգարեությամբ օրիներգի. «Հոգի Տեսան ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ խսկ զիս» (Եսայի ԿԱ. 1):





## ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Զի դուք յազատութիւն կոչեցեալ եք, եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառու մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց»:

(ԳԱՂ. Ե 13)

Սույն թվականի դեկտեմբերի 25-ին, շաբաթ օրը, Սուրբ Ստեփանոս անխավկայի և առաջին մարտիրոսի տոնին, Մայր Աթոռիս միաբանությունը հոգեկան ուրախության մեջ էր: Այդ օրը, դարերի խորքից եկող սվասդության համաձայն, Մայր տաճարում, ձեռամբ հոգևոր ճեմարանի տևուտունուն կերպով Ս. Անանիա եպիսկոպոս Արաբաշյանի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի տասը ուսանողների սարկավագական ձեռնադրությունը: Նորոգ ձեռնադրվողները եկան համալրելու Հայ Եկեղեցու միաբանության շարքերը և ովտակեցին լծվելու ազգին ու Եկեղեցուն ծառայելու նվիրական գործին և առաքելությանը, որն իրենց կանքով ու գործունեությամբ սրբացրել էն Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Գրիգոր Նարեկացին, Ս. Ներսես Շնորհալին և մեր մյուս եռամեծ վարդապետներն ու հայրապետները:

Սուրբգրական ընթերցումներից առաջ սկսվեց սարկավագական ձեռնադրությունը: Նորընծաներն իրենց կիսասարկավագական կոչումն ստացել էին նախորդ օրը, դեկտեմբերի 24-ին: Օրվա պատարագից սրբազան հայրը օրինությամբ տվեց «զուրբ ուրախ», «իշխանութիւն ընթեռնով զուրբ Աւետարան յեկեղեցին Աստուծոյ», և «հրաման խմկարկել և բորբել հոտ անուշութեան ի սպասարկութիւն խորիրդոցն»:

Հավարտ ձեռնադրության, սրբազան հայրը իր խոսքում հորդորեց եր-

ընթացիկ Մայր Եկեղեցու դպրանական սկզբունքներից՝ միշտ լինելով մեր Տիրոջ՝ Հիսոս Քրիստոսի հավատարիմ սպասավորները:

Սրբազն պատարագի ավարտից հետո նորմաները, առաջնորդությամբ Տ. Անանիա Եպիսկոպոս Արքայացնի և Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հովհաննես Արքայի կողմէն առաջարկության մասին, այցելեցին Վեհարան, Նորին Սրբությունը պատգամեց, որ Արանց մտաւելումների առարկան լինի Սուրբ Ստեփանոսի զրոյության, ծառայասիրության և կարգապահության ոգին, որ Սուրբ Ստեփանոսի խորհրդանիշը մնա ոչ միայն լոկալ խորհրդանիշ և հիշատակություն, այլ նաև կյանքով ապացուցելի իրականություն:

### ՍԱՐԳԻՍ (ՍԵՐՈՅ) ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Ծնվել է 1974 թ. հունվարի 31-ին Թեմիրանում (Իրան): Հաճախել է տեղի Նախիջևանի դպրոց և, ուժամյա ուսումնառությունից հետո, 1988 թ. հունվարին, ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

### ԳԵՂԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ՏԻԳՐԱՆՑԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատի շրջանի Դիմիտրով գյուղում: 1978—1988 թթ. սովորել և ավարտել է տեղի ուսումնակարգ դպրոցը:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

### ՎԱԶԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱԼՍՏՅԱՆ

Ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Լեճինականում: 1978—1988 թթ. սովորել և ավարտել է Երևանի № 156 միջնակարգ դպրոցը:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

### ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Ծնվել է 1971 թ. հունվարի 21-ին Էջմիածնում: 1978—1988 թթ. սովորել և ավարտել է տեղի № 2 միջնակարգ դպրոցը:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

### ՀՐԱՆԴ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Ծնվել է 1971 թ. մայիսի 10-ին Էջմիածնում: 1978—1988 թթ. սովորել և ավարտել է տեղի № 9 միջնակարգ դպրոցը:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳԱՅԱՆ

Ծնվել է 1973 թ. դեկտեմբերի 26-ին Բեյրութում (Լիբանան): Չորս տարի հաճախել է տեղի Վահան Թեքեյան վարժարան: 1983—1986 թթ. սովորել է Անդրիանի դպրուվանքում:

1987 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

## ԱՐՏԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՏԻՏԱՆՅԱՆ

Ծնվել է 1970 թ. հոկտեմբերի 19-ին Երևանում: 1978—1988 թթ. սովորել և ավարտել է տեղի № 156 միջնակարգ դպրոցը:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱԶՅԱՆ

Ծնվել է 1969 թ. մարտի 5-ին Էջմիածնում: 1975—1983 թթ. սովորել է տեղի № 4 միջնակարգ դպրոցում: Ութամյա ուսումնառությունից հետո, 1983—1987 թթ., սովորել և ավարտել է Երևանի ավտոճանապարհային ակադեմիկումը:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

## ԳԵՎՈՐԳ ՍԱՐԿԱՎԱԳ ԿՈՇԵՑՅԱՆ

Ծնվել է 1973 թ. հունիսի 9-ին Աշտարակի շրջանի Օշական գյուղում: 1980—1990 թթ. սովորել է տեղի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, այնուհետև ուսումը շարունակել է Երևանի հայոց Ժառանգավորաց վարժարանում:

## ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՂԱԲԱՔՅԱՆ

Ծնվել է 1963 թ. օգոստոսի 5-ին Ախալցխայի շրջանի Փոքր Դամաձ գյուղում (Վրաստան): 1970—1980 թթ. սովորել և ավարտել է տեղի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1980—1982 թթ. աշխատել է տեղի գրադարանում որպես վարիչ: 1982—1984 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1985—1989 թթ. ծառայել է ԽՍՀՄ ֆինանսների նախարարությանը կից հատուկ զինվորական ստորաբաժնումում:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

\* \* \*

Նոյն օրը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Մարգիս եկեղեցում նոյնական տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: Ձեռամբ առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկո-

պոս Ներսիսյանի Հայ Առաքելական Եկեղեցու միաբանության շարքերն ընդունվեցին Արարատյան թեմի Սևանի հոգևոր դպրանոցի Դ լսարանի երեք սաներ և առաջնորդարանի աշխատակից Տ. Վարդանյանը:

### ՏԱԾԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1941 թ. ապրիլի 24-ին Թավրիզում: 1968 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ժուռանալիստիկայի բաժինը: 1968—1975 թթ. պաշտոնավարել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում որպես գրադարանի վարիչ: 1973—1990 թթ. աշխատել է Հայկական Հանրագիտարանի խմբագրությունում որպես գիտական խմբագիր:

1990 թվականից Արարատյան թեմի հրատարակչական կենտրոնի տնօրենն է:

### ԱՐՏԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԼՈՌԵՑՅԱՆ

Ծնվել է 1973 թ. մայիսի 11-ին Էջմիածնի շրջանի Ակնալիճ գյուղում: 1980—1990 թթ. սովորել և ավարտել է Մեծամորի № 1 միջնակարգ դպրոցը:

1990 թ. ընդունվել է Սևանի հոգևոր դպրանոց:

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1973 թ. մայիսի 4-ին Էջմիածնում: 1980—1990 թթ. սովորել և ավարտել է տեղի Ռ. Պատկանյանի անվան միջնակարգ դպրոցը:

1990 թ. ընդունվել է Սևանի հոգևոր դպրանոց:

### ԱՐԱՐԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1974 թ. հունվարի 1-ին Սևան քաղաքում: 1980—1990 թթ. սովորել և ավարտել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը:

1990 թ. ընդունվել է Սևանի հոգևոր դպրանոց:



## ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին, Կիրակը օրը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ, Էջմիածնի Ս. Աստվածածին Եկեղեցում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն՝ ձեռամբ Վիրահայոց թեմի քարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի:

Սյու օրը սովորականից ավելի մարդաշատ էր Եկեղեցին: Հավատացյալները եկել էին սրբազն հոր և նորընծաների խարտավիլակ արժանապատիվ Տ. Հովսեակ ավագ քահանա Հակոբյանի հետ աղլուելու նորընծան սարկավագների համար, որպեսզի Աստված նրանց բազում շնորհներով օժիտ, որպեսզի ամեն ինչում պարզերեն կանգնեն թե՛ Աստծոն և թե՛ ժողովրդի առաջ:

Սրբազն հայրը ձեռնադրության ավարտին հավուր պատշաճի քարոզ խոսեց, որում քարեմադրություններ արեց նորընծաներ Գրիգոր սարկավագ Աշուրյանին, Զանիկ սարկավագ Պողոսյանին և Գևորգ սարկավագ Ղուշչյանին, որպեսզի նրանք հաստատուն մնան իրենց հոգևոր ճանապարհին, որպեսզի շարք երեք չսասանի նրանց մորքերն ու հոգիները: Ձեռնադրիչ սրբազն հայրը շեշտեց և բացատրեց սարկավագության կարևորությունը թե՛ ժողովրդի և թե՛ Եկեղեցու կյանքում:

«Տէր ողորմեա»-ի հոգեզմայլ երգեցողությամբ և անուշարովը խնկի ծխով պարուրված, նրանք հաղորդվեցին մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի մարմնով և արյամբ:


Խնկարովը խորանը խորին խորհուրդ էր ամբողջությամբ:


Ս. պատարագի ավարտին հավատացյալ ժողովուրդը, հոգևոր դասի ներկայացուցիչներն ու հոգևոր ճեմարանի ուսանողները համբուրեցին սըր-

բազան հոր աջը և շնորհավորեցին նորընծաներին՝ մաղթելով նրանց հաստատ մնալ իրենց ուստին:

Կեսօրից հետո, ժամը 3-ին, ձեռնադրող սրբազան հոր առաջնորդությամբ, նորընծան սարկավագները Վեհարանի ընդունարանում ստացան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր օրինությունը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԺԱՄԿՈՉՅԱՆ





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հայութույթ:

\* \* \*

**Նոյեմբերի 6-ին, շաբաթ.**— Սրբոց հրեշտակապետացն Գաբրիելի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միրզախանյանը:

\* \* \*

**Նոյեմբերի 7-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Սերովին վրդ. Խախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նոյեմբերի 10-ին, չորեքշաբթի.**— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հայութույթ:

\* \* \*

**Նոյեմբերի 13-ին, շաբաթ.**— Սրբոց առաքելոցն Անդրեյի և Փիլիպպոսի: Այսօր U. Աստվածածին եկեղեցում և պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միրզախանյանը:

\* \* \*

**Նոյեմբերի 14-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Թադէոս արդ. Զիրեկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Նոյեմբերի 21-ին, կիրակի.** — Ընծայումն Սուրբ Աստուածածնի երից ամաց ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Նոյեմբերի 27-ին, շաբաթ.** — Սրբոց Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Միոռնայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Աստվածածնն եկեղեցում և պատարագ մատուցեց S. Տիրապրքն. Գլուխյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Նոյեմբերի 28-ին, կիրակի.** — Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Խորեն քին. Մարտիրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Դեկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.** — Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

\* \* \*

**Դեկտեմբերի 4-ին, շաբաթ.** — Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորշացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Թադէոս աբդ. Զիրեկյանը:

\* \* \*

**Դեկտեմբերի 5-ին, կիրակի.** — Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրապրքն. Գլուխյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Դեկտեմբերի 9-ին, հինգշաբթի.** — Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Եղիշե ապ. քին. Բաղրամյանը:

\* \* \*

**Դեկտեմբերի 11-ին, շաբաթ.** — Սրբոյն Նիկողայոսի Զմիւնացոյ Սքանչելագործ հայրապետին:

Այսօր Ս. Շողակար եկեղեցում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակից քարոզ խոսեց:

\* \* \*

**Դեկտեմբերի 12-ին, Կիրակի.—** Սյուր Մայր տաճարում, Սպազ և սեղանի վրա, և պատարագ մասուցեց Տ. Խոհիանոս քմն. Մելիքյանը:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Թոգենամօսույս նամդիսավոր արարողություն՝ ի միջանց 1988 վրակամի երկրաշարժի բյուրավոր զոհերի:

\* \* \*

**Դեկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—** Սյուր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական մերժական նավաբոյթ:

\* \* \*

**Դեկտեմբերի 18-ին, շաբաթ.—** Սրբոց Յակովայ Մծբնայ նայրապետին, Մարութէի ճգնաւորին և Մելիքոսի եպիսկոպոսին:

Սյուր Ռ. Գայանե եկեղեցու և պատարագ մասուցեց Տ. Վազգեն արդ. Միրզայանյանը և «Հայր մեր»-ից առաջ բարող խոսեց:

\* \* \*

**Դեկտեմբերի 19-ին, կիրակի.—** Սյուր Մայր տաճարում, Սպազ և սեղանի վրա, և պատարագ մասուցեց Տ. Խորեն քմն. Մարտիրյանը և «Հայր մեր»-ից առաջ բարող խոսեց:

\* \* \*

**Դեկտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—** Սյուր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական մերժական նավաբոյթ:

\* \* \*

**Դեկտեմբերի 26-ին, կիրակի.—** Սյուր Մայր տաճարում, Սպազ և սեղանի վրա, և պատարագ մասուցեց Տ. Միրայլ վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ նավոր պատշաճի բարող խոսեց:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց Թոգենամօսույս նամդիսավոր արարողություն՝ ի միջանց վաղամենիկ Լուսին Զարարյանի:

## ՀԱՌՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻՑ

### ՀԻՄՆԱԿԵՐ ՍՈՒՐԱ ՏՐԴԱՏ ԵԽԵՂԵՑՎՈ

Մյունցաց թեմի պատմության մեջ արձանագրվեց մի նոր բժական եկեղեցաշինության առումով, այս անգամ Վարդի շրջանում:

Մյունցաց թեմի առաջնորդ Տ. Աստոյիկ եպիսկոպոսը Արքայության Մայր Աթոռի միաբանների և բարձան հայրերի ըմկերակցությամբ կատարեց Ռիմարկերը Ս. Տրդատ եկեղեցվու:

Առաջնորդ Արքազանը մյուսոնվ օճեց եկեղեցու 10 միմնաբարերը, որոնք զնուղվեցին ճշոված միմքերի տակ: Եկեղեցական արարողությանը մերկա էին Բագարավոր Բախտացյալներ՝ Մյունցաց աշխարհի տարրեր շրջաններից:

### ՀԱՅՎԱԾ ԱՐՄԱՁՆՈՐԴ ՄՐԱՍՁԱԿՆԻ ԽՈՍՔԻՑ

Միքայիլ Բագարավոր զավակներ պատմական Մյունցաց աշխարհի: Մեր կարծիքով եկեղեցաշինությունը եղել և մնում է նայ ժողովրդի բարորական Ակարագրի շինարար կողմը: Դարերի մոլովութով, նայոց մեց, եկեղեցի կառուցելը սուկ ճարտարապետական մի շինություն արձանացնել չէ, այ այն եղել և մնում է որպես աստվածապաշտության Բամար Բախտացյան նախարարենի, որտեղ ի մի են գալիս Քրիստոփի խոստվանող նոգիներն ու սրտերը:

Եկեղեցին նայ ժողովրդի զավակներին իր մշտագործ ներկայությամբ դաստիարակել և արժանի է դարձնել Աստուծո որդեգրությամբ:

Պատմության մեջ եկեղեցին ներկայանում է որպես քրիստոնեության բանձրացյալ մարմնացութը իր մշտագործ աստվածապաշտությամբ:

Եկեղեցին կրոնա-բարորական դաստիարակության սրբազն ավանդարանն է, որը ինքնարույն և վճիռ աղբյուրի նման բազմաթիվ մերժմեներ է սննի:

Ի վերջո եկեղեցին ստանձնել է փրկչական դեր, նա է մարրագործում նոգիները և պատրաստում ժառանգորդներ Ռավերթական կյանքի նամար:

Այսօր Ս. Տրդատ եկեղեցու միմնարկերը, պատմական Մոզ բաղարք տեղում, բարաբանչյուր վայրեցու սրտում արթմացնում է մեր հայրերի դավանած և մեզ ավանդած անաշարժ նախարքի շնորհմերը:

Միքայիլ վայրեցիներ, եկեր ուղուս մխամի լծվեմք այս Աստվածաման գործի՞ն շուտով ավարտեն եկեղեցու շինությունը և գոմությամբ օրինարանները:

Մրանի՝ եկեղեցի շինուած, ամին:



## ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԹՇՈՒՄԸ

Բոգդանովկայի (Զավախիր, Վրաստան) Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 1884 թվականին: Բազիլիկ տիպի եկեղեցի է: Արևմտյան պատի ճակատի արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցը օծումը կատարել է ժամանակի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Արքատակես և պատկուառ Անդրակյանը:

Սույն թվականի նոյեմբերի 12-ին, որքաք օրը (նին տոմարով), ժամը 12-ին, Բոգդանովկայի Ս. Սարգիս եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալ-ներով և խորհրդամ բազմությամբ, որոնք եկել էին ծանոթանալու Վիրանցոց թեմի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ և պատկուառ Մերայի առաջամարտ նրա օրինությունը:

«Հրաշափառ» և «Ուրախ լեր» շարականի կատարման ընթացքում առաջնորդ սրբազն հայրը մուտք գործեց եկեղեցի՝ ողեկցությամբ Բոգդանովկայի հոգևոր հովիլ արժանապատիվ Տ. Եղիա բանանա Թագայանի և դդիր Գևորգ Կյուրեղյանի:

Սրբողությանը ներկա էր Բոգդանովկայի բաղաքազիսի ներկայացուցիչ պրես. Խորեն Հարոսյանը:

«Ուրախ եղէ» սաղմոսի ընթերցումից մեսու սրբազն հայրը քարող խոսեց և հաղորդեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնները որինությունները:

Երեկոյան ժամը 16-ին տեղի ունեցավ եկեղեցու նավակատյաց համեստը: Կատարվեց նախատոնակ և նվազումի արարողություն: Վերջում առաջնորդ սրբազն հայրը հավոր պատշաճի քարող խոսեց՝ շեշտելով օրվա պատմական նշանակությունը:

Երեկոյան, ի պատիվ թեմակալ առաջնորդի, Կյուրեղյանների նարկի ներքո տրվեց ընթրիք:

Նոյեմբերի 18-ին, շարաք օրը, առաջնորդ սրբազն հայրը կատարեց Ս. Սարգիս եկեղեցու հանդիսավոր բացումը և օծումը: Այդ օրը կրկին լեփ-լեցուն էր Ս. Սարգիս եկեղեցին և իր շրջապատը: Այդտեղ էին նավաքվել շրջամի հայարձնակ բազմաթիվ գյուղերից հայության հոծ բազմություն:

Սկսվում է եկեղեցու օծման հոգեկապարար արարողությունը: Եկեղեցու օծվող հաստվածները նախ լվացվում են ջրով և ապա գիտով: Լվացումից մեսու հշված հաստվածները օծվում են Սրբալուս Մեռոնով՝ խաչանիշ դրոշ-մամբ:



ԳԵՐԱՅՆՈՐՀ Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՈՑԴԱՐՁԱՆԸ  
ՕՄՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ



Ս. ՍՈՐԳԻՄ ՆՈՐՍՈՇ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՑ



Եկեղեցին կրկին իր նախկին Ս. Սարգիս ամուսով օծվելուց հետո, հինգին հոգևոր երգեր և աղոթքներ: Ապա, Պոկասու ավետարանի ընթերցումից հետո, առաջնորդ սրբազն հայրը քարոզ խոսեց՝ վեր հանելով նորած Ս. Սարգիս եկեղեցու արդի դերի և հշանակության մասին տեղի հայ հավատավոր ժողովրդի կյանքում: Տասնամյակներ շարունակ եկեղեցին զրկվել էր իր բուն դերից: Այսուհետև Աստուծոն այս Տունը իր լուսաշող ճառագյուղները հավերժուեն պիտի սիփի շրջանի հայ հավատացյալների հոգիներին:

Սրբազն հայրը այնուհետև խոսեց Ամենայն Սրբոց տոնի մասին, հատկապես Ս. Սարգիսի, որը անգնահատելի դեր է ունեցել քրիստոնյա հայ ժողովրդի կյանքում:

Ապա օրվա պատմական հշանակության առթիվ սրբազն հայրը փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորանքներն ու օրհնությունները:

Վիրահայոց թեմի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանի կողմից նարած Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ հշանակվեց արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թագայանը:

Նոյն օրը, ժամը 14-ին, ի պատիվ թեմակալ առաջնորդ սրբազն հոր, Արքունականների հարկի ներքո տրվեց ճաշկերություն:

**Նոյեմբերի 14-ին, կիրակի:**— Ը կիրակի զեմի Ս. Խաչի:

Կեսդարյա ընդմիջումից հետո, նորած Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց առաջին և պատարագը: Պատարագիցն էր եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թագայանը:

Ս. պատարագից առաջ, տեղի մտավորականության և ժողովրդի անունից, պիտի Կամ Դալիբարյանը շնորհակալություն հայտնեց առաջնորդ սրբազն հորը՝ Ս. Սարգիս եկեղեցու օծնան և վերաբացման առթիվ, և խոսեց Բոդրանովկայի, Ախալքալաքի և Ախալցխայի պատմության մասին՝ վկայակոչելով հիմնականում Ալեքսանդր Երիցյանի «Հայոց Կատողիկոսութիւնը և Կովկասի Հայք» խորագիրը կրող գիրքը:

Նախքան և պատարագի սկսվելը, կատարվեց ընդհանուր խոսուություն՝ առաջնորդ սրբազն հոր և պատարագից տեղ հոր մասնակցությամբ: Ապա սկսվեց և պատարագը: Պատարագի Սեղանին սպասարկում էր դափիր Գևորգ Կյուրելյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճ քարոզ խոսեց պատարագիչ տեղ հայր՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Վիրահայոց թեմի թեմակալ առաջնորդին՝ հայոց գործող եկեղեցիների թիվը ևս մեկով ավելացմելու կապակցությամբ, որին այնքան պապակած էր Բոդրանովկայի և շրջակայիր հայությունը:

Ս. պատարագից հետո կատարվեց հոգևորականության պաշտոն՝ Բոգդանովկայի և շրջակայիր հանգուցյալների հոգիների խաղաղության համար:

**Նոյեմբերի 15-ին, երկուշաբթի օրը,** ժամը 12-ին, ի պատիվ առաջնորդ սրբազն հոր, Բոգդանովկայի քաղաքապետարանում տեղի ունեցավ ընդունելություն քաղաքապետի կողմից: Սրբազն հորը ուղեկցում էին արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թագայանը և դափիր Գևորգ Կյուրելյանը:

Ընդունելությունն անցավ չերմ և մտերմիկ մթնոլորտում:

Նոյն օրը գերաշնորհ Տ. Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանը վերադապ Մայր Աթոռ Ս. Եղիշիածին:



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆԻՑ

1998 թ. նոյեմբեր 18-ին Օդեսայում տեղի ունեցավ Սր. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցու հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը, որը կառուցվելու է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով՝ օրինությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Պազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հիմնարկեքի սրբազն արարողությունը, հանդիսադիր Սրբազն Հոր՝ Նախիջևանի և Խուսատունի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքեպոս. Կյուրեղյանի գլխավորությամբ, կատարեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Նաթան Վրդ. Հովհաննիսյանը, Հյուսիսային Կովկասի փոխառաջնորդ Տ. Եղիշիկ ծ. Վրդ. Պետրովանը, Սր. Էջմիածնի միաբան Տ. Միքայել Վրդ. Աջապահյանը, Թեոդոսիայի հոգևոր հովիկ Տ. Երեմիա քնն. Մակիյանը, Վլադիկավկազի հոգևոր հովիկ Տ. Պետրոս քնն. Բաղրամյանը և Կրասնոդարի հայոց Սր. Աստվածածին եկեղեցու ծիսակատար Տ. Տաթև քնն. Հարությունյանը:

Արարողությանն իրենց աղոթարար Աերկայությունը բերեցին պրավուլավ և կաթոլիկ բույր Եկեղեցիների Աերկայացուցիչները:

Ներկա էին Օդեսայի տեղական իշխանությունների Աերկայացուցիչները, Օդեսայի քաղգործկոմի նախագահի առաջին տեղակալ տիար Յուրի Ավկլենտուսը, Ուկրաինայի Նախարարների խորհրդին առընթեր Կրոնական գործերի խորհրդի փոխնախագահ տիար Գեորգի Շապովալը, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար տիար Հրաչ Միքանյանը, Ղրիմի, Կիևի, Խարկովի, Ակերմանի, Նիկոլայի, Լվովի, Դոնեցկի հայ համայնքների նախագահներն ու Աերկայացուցիչները, Օդեսայի ազգային համայնքների և մտավորականության Աերկայացուցիչները:

16' հիմնաքարերը ջրով և գիճիով լվացումից հետո, օձվեցին Սր. Մյունով՝ ձեռամբ Տ. Տիրան արքեպոս. Կյուրեղյանի, որոնցից մեկը՝ Հայաստանից բերված տոփ քարը, օծվեց Սր. Գրիգոր Լուսավորչի անունով: Հովհիշ էր պահը, երբ օծվեց ևս մի փոքրիկ մասունք-քար՝ բերված Արարատ լեռից Օդեսայի լեռնագնացների ձեռքով: Քարերը հիմքի մեջ տեղադրելու ժամանակ հիմքի հողին խառնվեց Սր. Էջմիածնից բերված Հայրենիքի Կենաստու հողը:

Հիմնաքեքի կարգի ավարտից հետո Տ. Տիրան արքեպոս. Կյուրեղյանը իր քարոզի մեջ ի մասնավորի ասաց.

«Ամբողջ հոգով գոհություն ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ մեզ արժանացրեց այս հյուրընկալ հոդի վրա հիմն արկանելու մի նոր հայոց և կեղեցու: Թող Աստված օրինի հոդն այս, որպեսզի իր բոլոր հավատավոր զավակները գորությունն ու շնորհները ստանան Սր. Հոգու, որպեսզի կարողանան կյանք ունենալ, իսկ այսօր կյանքը ծանր է բոլորի համար:

Այսօր մեզ համար կրկնակի տօն է, զի Օդեսայի պատկան իշխանությունները երշանիկ հնարավորությունը տվեցին մեզ՝ հայ ժողովրդի զավակներին, այս հրաշագեղ ամկունում կառուցելու և կեղեցի: Հուսով եմ, որ այս տաճարը աղոթքի տուն կլինի ոչ միայն հայերին համար, այլ այն խորհրդանշիք կատանա ժողովուրդների բարեկամության՝ Օդեսայում ապրող բոլոր ազգերի համար: Ես ողջունում և շնորհակալություն եմ հայտնում բոլոր Եկեղեցներին և տեղական իշխանությունների ներկայացուցիչներին, բոլոր ներկաներին և կառուցվող եկեղեցու բարերարներին:

Տասնամյակներ առաջ մեր նախանձները անգիտաբար քանդում եին, իսկ մենք՝ ներկայիս ներունդ, Աստուծո օգնականությամբ նորից կառուցում ենք: Թող Աստված բոլորի պարզնի հույս ու հավատ, ուժ ու եռանդ, որպեսզի հետապնդ և մնանք արժանավոր զավակները մեր հայրենյաց»:

Այսուհետև S. Միքայել վոր. Աջապահյանը, բոլոր ներկաներին ողջունելով Սր. Էջմիածնի ողջ միարանության անունից, ընթերցեց Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և Հայրական օրինության ողերձը:

### ՀՈԳԵԾՆՈՐՀ Տ. ՆԱԹԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻ

Լկով

Մեծ գոհունակությամբ տեղեկացանք Զեզանից, որ շուտով տեղի կունենա հիմնարկեք Օդեսայի հայոց նոր եկեղեցին:

Սուրբ Էջմիածնից հոյում ենք Մեր օրինությունը և մաղթանքը, որ առաջիկա մեկ-երկու տարիներ հետո լրանա կառուցումը նոր եկեղեցուն, որ պիտի դառնա հապարտանքը Օդեսայի հայ համայնքին:

Հղում ենք նաև Մեր սիրո ողջույնը թեմակալ առաջնորդ Տ. Տիրան արքեպիսկոպոսին և Զեզ մաղթելով մշտանորդ եռանդ ու հաշողություններ:

Սուրբ Էջմիածնից օրինություն Օդեսայի հայ հավատացյալներին:

Ողջ լերուք գորացյալ Սուրբ Հոգով:

### ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ

11. Էջմիածին,

3 նոյեմբերի 1998 թ.

Ապա Տ. Նաթան վոր. Հովհաննիսյանը, ողջույնի խոսքով դիմելով բոլոր ներկաներին, ի մասնավորի ասաց.

«Այսօր կյանքին թերևս ամենահոգիչ և հոգեկան ուրախության պահն եմ ապրում հիմնաբարը դեկտով մի նոր եկեղեցու, որը հայրենիքից կաջութակ մեր ազգի մի բոլոր զավակների համար դառնալու է միացնող կամոր-

չը Սր. Եջմիածնի հետ և անմար փարոսը դեպի հավիտենականություն տանող ճանապարհին: Տերն անսալով մեր աղոքթերին և տեսնելով մեր աստվածահան գործը, ոչ միայն մեզ արժանացրեց այս սրբազն օրվան, այլև պարզեց արև, լոյս ու ջերմություն, զի ամոր լինի նիմքը եկեղեցու, անսասան մնա մեր հավատքը և մեզ երբեք չըի հոյսը աստվածային սիրո հանդեպ:

Սրբազն Հոր ձեռքով, Հայ Սուարելական Եկեղեցու Սրբալուս Մյունով օծվեցին տասնվեց անկյունաքարերը, սակայն, ինչպես տեսաք, Սուրբ Սեղանի հիմքում դրվելու համար օծվեց ևս մի փոքրիկ քար, մի մասունք, որը Օդեսայի լեռնագնացները բերել են մեր հարազատ Աստվածաշնչական Արարատ լեռից, որ խորհրդանշական է մեր ազգի հավիտենականության և հանգրվանը նոր մարդկության օրոցքի՝ Նոյան Տապանի:

Թող մեր այս Եկեղեցին, հիմնված Արարանյան օրինության վրա, Աև ծովի այս ասպեցական ային դասնա մի նոր Նոյան Տապան՝ իր գիրն առնելով և շնորհներ բաշխելով Արարշի բոլոր հավատավոր զավակներին անկախ ազգությունից ու դավանանքից:

Այնուհետև ողջոյնի խոսքով հանդես եկան Ուկրաինական Պրավուլավ Եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսանդր ավագ. քհն. Կրավչենկոն, Օդեսայի քաղաքորդելում նախագահի առաջին տեղակալ տիար Յորի Ավկանանութեա, Ուկրաինայի Նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի փոխնախագահ տիար Գեորգի Շապովալը, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար տիար Հրաչյանը, Օդեսայի հայ համայնքի վարչության նախագահ դրկու. Հերբերտ Քամալովը:

Սրբազն Հոր «Պահպանիչ»-ից հետո, հնչեց «Եջ Միածին ի Հօրե» շարականը:

Հավարտ արարողության բոլոր հյուրերը հրավիրվեցին ընդունելության Օդեսայի Պատունական Ընդունելությունների Տան սեղանատանը:

Ընդունելությունից հետո Տիրան արքեպիսկոպոսը, Նաթան Վարդապետը, Միքայել Վարդապետը և Օդեսայի հայ համայնքի վարչության նախագահ դրկու. Հերբերտ Քամալովը հարցազրոյց ունեցան Օդեսայի հեռուստատեսությամբ:





## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՍՅԱՆԻՑ

### ՍԱՂՄՈՍ Ա.

- 1.—Երանելի է այն մարդը,  
որ չմետեց ամբարիշտների խորհրդին  
և չգնաց մեղավորների ճանապարհով  
և չստեց շարակամների աթոռին:
- 2.—Այլ, նրա կամքը Տիրոջ օրենքներն են  
և նրա օրենքների մասին է խորհում գիշեր ու ցերեկ
- 3.—և նա զրի հոսանքի մոտ տնկված ծառի է նման,  
որ իր պտուղը ժամանակին կտա  
և նրա տերեւը չի թափվի  
և ամեն ինչ որ կկատարի,  
կհաջողվի նրան:
- 4.—Բայց այդպես չեն ամբարիշտները,  
ո՞չ, այլ նման են փոշու, որ քշում է քամին  
և ցրիվ տալիս երկրի վրա:
- 5.—Դրա համար ամբարիշտները  
չեն կանգնելու դատաստանի առաջ,  
ոչ էլ մեղավորները՝ արդարների խորհրդում,
- 6.—որովհետև Տերը ճանաչում է  
արդարների ճանապարհը,  
բայց ամբարիշտների ճանապարհները կկորչեն:

### ՍԱՂՄՈՍ Բ

- 1.—Հեթանոսները ինչո՞ւ խոռվեցին  
և ժողովուրդները խորհեցին ընդունայն,
- 2.—երկրի թագավորները խորհրդի ելան  
և իշխանները հավաքվեցին ժողովի  
Տիրոջ և իր Օծյալի դեմ:

- 3.—«—Խզե՞նք նրանց կապանքները  
և թոշատիենք նրանց լուծը մեզանից»:
- 4.—Երկնքում բնակվողը ծիծաղելու է նրանց վրա  
և Տերը արհամարդելու է նրանց:
- 5.—Այն ժամանակ նա խոսելու է նրանց հետ  
իր բարկությամբ  
և խոռվեցնելու է նրանց  
իր սրտմտությամբ:
- 6.—«—Ես թագավոր կարգվեցի նրա կողմից՝  
Նրա Սիրն սուրբ Լեռան վրա,  
նոչակեռ համար հրամանելով Տիրոջ»:
- 7.—Տերն ասաց ինձ.  
«—Դո՞ւ ես իմ որդիին  
և ես այսօր ծնեցի քեզ.
- 8.—Խնդրիր ինձանից  
և քեզ հերանուներին ժառանգություն կտամ,  
և իշխանություն՝ երկրի բոլոր կողմերում:
- 9.—Պիտի հովվես նրանց երկարյա գավազանով,  
որպես բրուտի անոթ պիտի փշրես նրանց»:
- 10.—Ա՛րո, ո՞վ թագավորներ, խոհեմացեք,  
և դո՞ւր, երկրի դատավորներ, խրատվեցեք,
- 11.—Երկուողվ ծառայեցեք Տիրոջը  
և դողալով ցնծացեք նրա առաջ,  
12.—ընդունեցեք նրա խրատը,  
որպեսզի Տերը չբարկանա  
և դուք չկորչեք  
արդարության ճանապարհներից,  
որովհետև նրա բարկությունը  
այն ժամանակ զարհութելի կլինի:
- 13.—Երանի՛ նրանց, ովքեր իրենց հոյսը  
Տիրոջ վրան են դրել:

#### ՍԱՂՄՈՍ Գ


- 1.—Սաղմոս Դավթի
- 2.—Տե՛ր, որքա՞ն շատացաք ինձ մեղողները  
և շատերը իմ դեմ ելան:
- 3.—Շատերն իմ մասին ասացին,  
թե՛ սրա համար չկա՛ փրկություն իր Աստծո մոտ.
- 4.—բայց դո՞ւ, ո՞վ Տեր, իմ օգնականն ես,  
իմ փառքն ես և գլուխ բարձր պահողը:
- 5.—Ես աղթեցի Տիրոջն իմ ձայնով  
և առ լսե՛ց ինձ իր սուրբ լեռից:
- 6.—Ես պառկեցի և քնեցի,  
արթնացա, և Տերը իմ պահապանն է.
- 7.—Ես շեմ վախենա նրանց բյուրավոր գորբերից,  
որոնք շուրջ բոլորած՝ պաշարել են ինձ:


8.—Սրի՛, Տեր, և փրկի՛ր ինձ, ո՞վ իմ Աստված,  
որովհետև դու հարվածեցիր բոլորին,  
ովքեր թշնամի էին ինձ առանց պատճառի,  
և մեղավորների ատամները կփշեն:

9.—Տիրոջից է փրկությունը.

Քո օրհնությունը  
թո՞ւ քո ժողովրդի վրա լինի:

Թարգմ.՝ Ա. Ե.





## ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷԶԵՐԻՑ

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը ոչ միայն բազմարդյուն հայագետ էր, այլև Ավետարանի խոսքը մեկնող, ոգեշեն մի ներշնչումով իր ժողովրդին ներկայացնող հոգևորական:

1880 թ. պատմական Գողթն գավառում ծնված 14-ամյա պատանին ընդունվում է էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան՝ ավերտելիս գլխավոր ուսուցիչ ունենալով Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին՝ «Հայաստանյայց եկեղեցականության ամենից ավելի հայտնի և գիտուն աստվածաբանին»: Իր ուսուցչի նման, նրան ևս վիճակված էր վեր բարձրանալ հոգևոր կյանքի և իմացականության աստիճաններով: Գերմանիայում ստանալով փայլուն աստվածաբանական կրթություն և աշխատակցելով ներոպայի կրթագիտական ամսագրերին, 1894 թ. վերադառնում է հայրենիք և նույն թվականի սեպտեմբերի 11-ին արեղա ձեռնադրվում Մայր Աթոռում:

Ստացած տեսական գիտելիքներին գումարելով ձեռագրական հմտությունները և օգտվելով Մայր Աթոռի մատենագրարանի գորչագրային անսպառ դանձերից, մեկը մյուսի ետևից վեր է հանում անգնահատելի սկզբնաղբյուրային արժեք ունեցող տարրեր բնագրեր, որոնք կարենորվում են ոչ միայն մեր, այլև ընդհանուր եկեղեցական պատմության տեսանկյունից: 1894 թ. դառնալով «Արարատ»-ի խմբագիր, գիտական մի նոր խորք և հոգևոր փայլ է հաղորդում ամսագրին: Կարապետ եպիսկոպոսն իրեն վստահված բոլոր գործերում՝ լինի ճեմարանի տեսչություն թե թեմական առաջնորդություն երևանում, Ատրապատականում ու Շամախիում, առանձնացել է բարձր իմաստականությամբ և նկարագրով:

Հոգևորականի կոշման ու պատասխանատվության իր ըմբռնումների խտացված արտահայտումը կարելի է համարել գեռես 1889 թ. Գևորգ Դ մեծագործ Կաթողիկոսի շիրմի առջև արտասանած խոսքը, որն ավարտվում էր հարազատ ժողովրդին ուղղված հետևյալ երդում-պարտավորությամբ:

«Տե՛ս, ժողովուրդ, հայի արյուն արցունքը թող լինի մեր ուստի շորորդ

կնիքը, քո հառաջանքը երբեք դադար չտա մեղ թմբրության անկողնի վրա, ընդուստ վեր ելնենք, Կայինի նման աստանդական շրջենք, եթե քո ցավերը տեսնենք ու անտարբեր մնանքք:

Տարաբախտաբար նրա կյանքի թելը վաղ կտրվեց՝ 1915 թվականին, վիրահատական մի գործողության ժամանակ՝ անավարտ թողնելով մեր եկեղեցու նվիրյալ այս գործի ծրագրերն ու մտահղացումները:

Կարապետ եպիսկոպոսի եկեղեցապատմական աշխատանքները թեև վաղուց իրենց հաստատուն տեղն են գրավել հայագիտական ուսումնասիրությունների ցանկում, ասկայն քարոզները, սփոված «Արարատ»-ի էջերում, ասես մի տեսակ մոռացումի էին մատոնվել, որոնք ի մի հավաքել և «Քրիստոնեության իսկությունը» խորագրված հատորում վերստին հրատարակել է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը: Առաջարանի իր խոսքում նշելով մերօրյա կարեռությունը Կարապետ եպիսկոպոսի «Արարատ»-ում հրատարակված հոդվածների, գրում է.

«Օտարին տիզմացյալ ջուրի առվակները փակելի առաջ, և ամրորեն փակելու համար հարկ է մեր ժողովուրդի կյանքի անդաստանը ոռոգել մաքուր ջուրով Ավետարանին, մեր հայրերու ըմբռնած և ապրած Ավետարանին, Հայատանցայց Եկեղեցվո մատովակումով մեղի փոխանցված, դարերու շարահարությամբ և ոչ միշտ հեշտ ու խաղաղ գնացքով:

Այս այդ մատովակներն ազնվագույն և ընտրելագույն մեկին՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գրչով բացված առվակն է, որ այս հատուրին մեշեն մեր ժողովուրդի կյանքին մեղ պիտի հոսեցնե «Կենդանի ջուրը»: Իր իսկ բնորոշմամբ, հանձին Կարապետ եպիսկոպոսի՝ «Ս. էջմիածնի անմար լուսար այսպիսի լուսաթաթավ և լուսատարած դեմքերով ավելի զգալի ներգործություն կտանա լուսակարու հայ Հոգիներուն համար», այս հատուրի հրատարակությունն էլ խնդրում է համարել «որպես գույզն մասնակցություն Մայր Աթոռ Ս. էջմիածնի այս օրերուն տարած տենդագին գործունեության, ընդ հոգանավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Նորին Սուլր Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, ի սպասավորություն Հոգենոր կարյաց ժողովրդյան Հայաստանյաց»:

Մտորել ներկայացնում ենք գրքում զետեղված քարոզներից մեկը, որը 1902 թ. տպագրվելով «Արարատ» ամսագրում, այսօր ևս խոսում է ավետարանական խոսքի քարոզին ծարավի հավատացյալների սրտի հետ:

### ԱՎԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նոր չէ, որ աշխարհին վրա հարուստ ու աղքատ կա: Բոլոր մարդին հավասար հարուստ ու հավասար աղքատ են այնտեղ միայն, որ թշումնի պես են ապրում բնության, այդ հասարակաց մոր գրկից անմիջակես ստանում իրենց օրական սնունդը. թեպետ այդտեղ էլ թիշ չի պատահում, որ զորեղը թուլին ճնշե, նորա ժողովածը ձեռքից իլե, բանեցնե նորան շոր համար, որ ինքն ավելի փառքամ ու անաշխատ ապրե: Բայց երբ մարդու յոր ձեռքի աշխատանքն է դառնում ապրուսի միջոց, երբ հազարավոր ժողովուրդ խմբվում է մի փոքրիկ տարածության վրա՝ քաղաք ու հասարակություն կազմում, առևտուր սկսում, —խորությունը հալուստի և աղքատի մեջ պետք է անպատճառ զգալի լինի և զնապոյ մեծանա: Մեկը շատ է աշխատում, մյուսը թիշ. մեկը պահում ու բազմապատկում է յոր աշխա-

տաճի պատումները, մյուսը վայելում է ու վատնում. մեկը միայն յուր երկու ձեռքն ունի աշխատելու համար, մյուսն ունի հորից ստացած ժառանգություն, որ արդյունք և տոկոս է բերում, կամ յուր մտքի ճարտարությունը կարող է գործ դնել հազարավոր ներեկի և աններեկի միջոցներով: Եվ ահա ենտղինեւու ստեղծվում է մի դրություն, որ ոմանք բաց են անում աչքը աղքատության մեջ և չարքաշ կյանք վարում մինչև վերջին շունչը, որիշները հարուստ ծնկում են և նեշու ու փարթամ ապրում: Եվ հարց է ծագում ըստ ինքյան, ինչո՞ւ այդես պետք է լինի, ինչո՞ւ են մեղավոր առաջիններն ու արտօնյալ վերջիններն: Այդ հարցը շատ է զբաղեցրել մարդկությանը. բայց ներկայուն նա լոկ իմաստափրության առարկա չէ, այլ խիստ կենսական մի խնդիր՝ մանավանդ քաղաքակրթված աշխարհի համար, կարեկի է ասել, հասարակական խնդիրների մեջ ամենից կենսականը, ամենից ստիպողական լուծում պահանջողը: Եվ ահա բնականաբար շատերի հայցաքը դեպի նա է դառնում, որի կոչումն էր՝ ավետարանել աղքատաց, և կկամենային սուոյցն իմանալ, թե ինչ է պատասխանում նա այդ հարցին:

Այստեղ ևս իրարից շատ տարբեր, որոշ կենտրում տրամագծորեն հակառակ հայցաքների ենք հանդիպում: Ումանց ասելով, Հիսուսի գործունեության և ավետարանի քարոզության խկական նպատակն է եղել համայնական կյանքը հեղափոխել, աղքատների վիճակը բարվոքել, և ավետարանն որիշ բան չէ, բայց եթե համայնական կյանքի մի ընդարձակ ծրագիր, որ բոլոր մարդոց հավասարություն, տնտեսական կարիքների և որիշ արտաքին պայմանների ննշումից ազատություն է պահանջում: Սակայն այսպես մտածողների մի մասը միայն բարեմիտ է՝ ավետարանի արձերք բարձրացնել, ժամանակակից կյանքի մեջ նորան պատվավոր դիրք և գործնական դեր ընծածել է կամենում. մյուս մասն ընդհակառակը համարում է նորա ծրագիրը բոլորովին անհրագործելի և օրային: Իր Հիսուս իրականության մասին մութ գաղափար ուներ, ինքն աղքատ դասի միջից եղած լինելով՝ այդ դասին հակառակ կասկածով և խորթությամբ էր նայում հարուստների վրա և արվեստների ծաղկումն ու վաճառաշահությունը չեր գնահատում, — նորա առաջնորդող գաղափարն ու ծրագիրը մի ողորմելի բան էր՝ ընդհանուր աղքատություն: — Ուրիշները թե՛ սկզբունքով և թե՛ հայեցակետով բոլորովին տարբերվում են այս երկու խմբից: Նորա չեն ընդունում, թե Հիսուս մասնակցություն է ունեցել յուր ժամանակի տնօնեական և հասարակական գործերում, և ներքում են նոյնիսկ այսպիսի խնդիրների վերաբերյալ որևէ սկզբունքի գոյությունը ավեստարանի մեջ: Նոցա ասելով Փրկիչն առօյլա կյանքից միայն պատկերներ ու առակավոր խոսքեր է վերցրել յուր քարոզության համար, անձամբ կարեցել է ի սրտ խեղճերի, սորտատների, ցավագարների վիճակին, բայց ամենին նպատակ չի ունեցել նոցա երկրավոր կացությունը բարեփոխելու, այլ միայն երկնապորից է խոսել, կրոնական գցացումներ ներշնչել, հոգեոր փրկություն պատրաստել: Կամ մինչև անգամ այնպիսիները, որոնք ներկայացնում են նորան իրեն մի ծայրանեղ պահպանողական, որ տիրող կարգերի մեջ ոչ մի փոփոխություն չի կամեցել մոցներ՝ թողել է ամեն ինչ այնպես, ինչպես կա:

Արդ, ո՞ր է ուղիղ այս տարութեր կարծիքներից: — Ուղիղը որոշելու համար մենք պետք է նախ մի գաղափար կազմենք այն հասարակության մասին, որի մեջ գործ ուներ Փրկիչը: Աղքատների, խեղճերի, որբերի ու այրիների վիճակը գոյց ավելի դառն չեր այստեղ, բան որիշ տեղերում նոյն ժամանակ և առաջ եղել է. բայց մարդարեների ու սաղմոսերգուների

դպրոցից ելած մի ժողովրդի մեջ անշուշտ շատ ավելի խոր կերպով էր զգացվում նորա դառնոթյունը: Բոլոր ճշմարիտ մարդարները թշվառների պաշտպան էին և իրեն Խորայելի Աստուծո առաջին ու ամենակարևոր պահանջ ներկայացնում էին՝ արդարադատություն որբերի, գութ ու խնամք տնանեկների համար: Նոցա քարոզը լսողներ սովորաբար քիչ էին լինում, և ամբոխը շարունակում էր գնալ այնպիսիների ետևից, որոնք արդարության դյուրին ճանապարհ էին ցույց տալիս: Քահանան ասում էր. ամենից առաջ Աստուծուն պետք է հատուցանես պարտք՝ զո՞ն քեզ նորա սեղանի վրա, նվերներ տուր նորա սպասավորներին, և կիակես նորա աչքը, քավություն կգտնես քո մեղքերի համար: Օրենսգետներ եկան և հազար ու մի՛ կարգեր սահմանեցին, որոնց ուղիղ գործադրությունն իրենցից պիտի սովորեն, և գործադրելով, Աստուծո օրենքը պահած՝ արդարության ճանապարհի վրա օր ավոր հառաջադիմած լինեին, մինչև որ կվարողաճանակին հպարտ հպարտ կանգնել Աստուծո առաջ, պարծաճեռով թվել իրենց արդարություններն ու հատուցում պահանջել: Բայց Խորայելի որդվոց՝ հատկապես խեղճ, հարստահարյալ, օրական հացի կարոտ դասի մեջ, երբեք չսպառեցան մարդիկ, որոնք այրված սրտով և բուն ակնկալությամբ սպասում էին, թե երբ մարդարների խոսքը կվատարվի, Աստուծո ողորմության դուռը կրացվի և կու գա մենք՝ «արդարութիւն ածեալ ընդ մեջ իր եւ ճշմարտութեամբ պատեալ զկողս իր» — պաշտպանելու համար տնաների իրավունքը: Ամա պապիսի «հոգուով աղքատներ» նկատի ունի Փըրկիչն ըստ մեծի միասին, երբ նա խոսք աղքատների վերա է դարձնում: Պետք է շմոռանանք որդեմն, որ այսուել իրար դեմ կանգնած են ո՛չ թե Եվլոպայի խոշոր դրամատերերն ու գործարանական բանվորները, ո՛չ թե մեր անհոգի վաշխառուներն ու արյունաքամ գյուղացիները, այլ իրենց պճնազարդ քահանայապետները, արդար օրենսգետ փարիսեցիներն ու այն այրիները, մեղատրները, որոնց լուսան նորա գանձանակի մեջ էին ընդունում և իրենց արհամարհում պատշաճ մեղավորության վրա պահում: Այդ է պատճառը, որ ավետարանի մեջ շատ տեղ հոգևոր ու մարմնավոր աղքատությունը նոյնանում էն՝ աղքատ կոչվում են նորա, որոնք ճշմարտության խոսքին կարտում են ինչպես երկնային մահանային, և ընդհակառակ մեծատում նորա, որոնց աշխարհային ցանկություններով հղվացած սիրութ փակվել է ընդմիշտ այդ խոսքի համար: Ռատի ավետարանի այն բոլոր ասացվածները, որոնք վերաբերում են հոգուով աղքատներին՝ պետք է մի կողմ թողնել, և ապա տեսնել, թե ինչ վերջաբերմունք է ցույց տալիս նա դեպի զուտ անտեսական կարիքի ներք նետողների վիճակը:

Հիսուս մեծ վտանգ էր համարում հարստությունը մարդոց բարոյական կյանքի համար. որովհետև հարստությունը նոցա սրտերը խստացնում, աշխարհային հոգսերի մեջ կաշկանդում, և զանազան վայելքների հրապուրով նեռացնում է նոցանից՝ անմատչելի դարձնում Երկների արքայությունը: Սակայն կատարյալ անմտություն է իհարկե առարկել, թե Նա կամենում էր, որ բոլորերյան աղքատ ու թշվառ լինեն և բոկտուների այդ բազմությունից Յուր արքայությունը կազմեն: Կատարելապես հակառակն է ճշմարիտ: Նա ամեն բանի յոր խկական անունն է տվել և երբեք կարիքը ճնշություն, թշվառությունը երջանկություն չի համարել: Ոչ միայն չի նպաստել դոցա գորանալուն, այլ ամեն կերպ մարատել է դոցա դեմ և վերացնելու ձգտել: Նորա ամբողջ գործունեությունը փրկչական է նաև այն տեսակետից, որ


Կոիվ է եղել թշվառության դեմ: Կարելի էր մինչև իսկ առարկել, թե Նա չափազանց մնա ուշադրություն է դարձնում աղքատության չարիքի վրա և ավելի ճշանակություն տալիս նորա դեմ գործող առաքինություններին՝ ողորմածությանը, բայ պետք է սակայն նա իրոք աղքատությունն ու թշվառությունը չի նկատում իրեն ամենամեծ չարիք, այլ մեղքը, ուստի և ողորմածությունից ավելի բարձր է դեռու անհիշաշարությունը: — Համեմայն դեպք աղքատության ջատագով նա չի եղել, և այն միշնադարյան կրոնակորությունը դարձնում է իրեն աղքատություն էին քարոզում և մուրացկանույունն իրեն աղքատություն ներկայացնում, իրավունք չունեին նորան իրենց քարոզության վրա կոչելու: Հիրավի նա պարտք էր դեռու այն աշակերտ մերի վրա, որոնք պետք է իրենց ամրող կյանքը ավետարանի քարոզության վկիրեհն՝ ձեռք վերցնել բոլոր ունեցվածքից կամ աշխարհային գույքից. բայց չի կամեցել երբեք, որ նորա մորացկանություն անեն: Պողոս առաքյալը մի տեղ (Ա. Կորնթ. Թ. 14) հիշում է. «Տերը հրաման է տվել, որ ավետարան քարոզութերն ավետարանից նոգան իրենց ապրուստը»: Այդ խոսքը չկա մեր ավետարաններում, դուրս պահված սակավաթիվ տերունական խոսքերից մենան է, բայց նորա վավերականության մասին կասկած լինել չի կարող իհարկե: Ան պարզ ցոյց է տալիս, թե ինչպես ավետարանի քարոզիչներն, ամեն հոգսից ազատ լինելու և ամբողջապես իրենց կոչանը նվաճը նվիրվելու համար, ունեցվածքից զրկվելով՝ պետք է վստահ լինեին, որ այդ նոր կոչումն ապրուստի անհրաժեշտ միջոցները կու տաք իրենց, և իրավունք պետք է ունենայն վայելի այն, իրեն մշակ արժանի վարձուց: — Ուրիշ խանդիր է, թե ավետարանի սպասավորները ինչպես են կատարել Տիրոց պատվերը և թե արդյոք կյանքի ներկա պայմաններում այդ պատվերն ամենայն ճշդությամբ կատարել կարելի՞ է: Պետք է շմորանալ միայն, որ ան վերաբերում է զուտ ավետարանի քարոզը տարածողներին՝ ո՛չ թե եկեղեցվոր պաշտոնյաներին առհասարակ, և համենայնդեպս միայն ան կարող է երկնային արժեքն ուրիշների առաջ բարձրացնել, ով ոչ մի գին չի տալիս երկրավոր բարիքներին և պատրաստ է ամեն բուն զրկվել նոցանից: Փրկիշը չի կամենում, ասացինք, որ յուր աշակերտները կարիքի և նեղության մեջ լինեն, բայց պահանջում է, որ դոցա երկյուղով իրենց նվիրական կոչումը թողած մի կտոր հացի ետևից չընկնեն:

Հարկավ համայնական կյանքի բարենորոգության մի ծրագիր, բառի բուն ճշանակությամբ՝ նա չի տվել, տնտեսական առօրյա հարցերի նա չի խառնվել. և ինչ օգուտ կունենայինք, եթե խառնված և Յուր ժամանակի Պաղեստինի համար շատ էլ օգտակար օրենքներ տված լիներ: Զէ՞ որ ըստ արդեն իին և անգործադրելի կլիմին, ի զուր կիսառին ու կշիռենին ավետարանի պարզ ըմբռնումը: Ինչպես որ երկու իրենց գույքի բաժանման համար վիճող եղբայրների մեջ դատավոր լինել չկամեցավ Փրկիշը, այդպես և Կիրամարվեր անշուշտ ժամանակակից հասարակության զբաղեցնող հազար ու մի տնտեսական հարցերի պատասխանը տալուց, որովհետև նունա հոգածության առարկան միայն բարյական կյանքն էր յուր հավիտենական սկզբունքներով, և նա վստահ էր, որ եթե այդ հիմքը հաստատուն լինի՝ ժամանակավոր ինքն իրեն կուղովի և կիրամարվի դորան: Ուստի մեծ անտեղություն է իրեն տնտեսական մի նոր դրության օրենք ընդունել Նորա այնպիսի խոսքերն, ինչպես՝ «Քեզնից բայ խնդրողին տո'ւր». այդտպության մեջ է և մյուսը կարող է մի պատառ հացով, մի կտոր շորով օգ-

Աել,—ո՞չ մեր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի կյանքն յոր բարդ հարաբերություններով։ Բայց այն, ինչ որ իբրև սկզբունք ուղիղ է ամենապարզ հարաբերությունների համար՝ պես է ուղիղ լինի հիրավի և գործադրության միջոց գտնել ամենաբարդ պայմաններում։ Այդ տեսակետից ո՞չ մի կրոն այնպիսի մեծ հեղափոխություն չի ձգել հասարակական կյանքի մեջ, ինչպես քրիստոնեությունը։ «Սիրի՛ր ընկերիդ, ինչպես ինքը քեզ»— մի թողոցիկ խոսք չի եղել այդ Փրկչի բերանում, այլ լոյս է սփռել կյանքի բոլոր իրական հանգամանքների վրա սով, աղքատություն, թշվառություն իրենց իմական պատկերով ցոյց տվել և իբրև ճշմարիտ կրոնի անհրաժեշտ պահանջ ներկայացել։ Վերջին դատաստանի նկարագրում ընկերական սիրո գործադրությունից կախված է երևում մարդոց վիճակի հավիտենական որոշումը։ Իսյունի է այս նկատմամբ նաև Մեծատան ու Աղքատ Ղազարսի առակի միտրոք։ Իբրև լրացուցիչ, կրերենք այստեղ Հարուստ երիտասարդի խոսակցությունը Փրկչի մետ այն ձևով, ինչպես պահիվ է տարականն Երրայրական ավետարանի մեջ։ —«Հարուստի մեկն ասաց Տիրոջ. Վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որպեսի կյանք ունենամ։ Նա պատասխանեց. Մա՛րդ Աստուծո, օրենքն ու մարգարեւությունները պահի՛ր։ —Այդ արել եմ, վրա բերավ սա։ —Գնա՛, ասաց նա, վաճառի՛ր բոլորն ինչ որ ունիս, բաժանի՛ր աղքատներին, ապա արի՛ ու հնանքի՛ր ինձ։ Հարուստն այդ ժամանակ սկսեց գովիսը բորել, ու լասքը նրան դոր չնկավ։ Խակ Տերն ասաց նրան։ Ինչպես կարող ես պեղել, թե ես օրենքն ու մարգարեւությունը պահել եմ, մինչդեռ օրենքի մեջ գրված կա։ Սիրի՛ր ընկերիդ, ինչպես ինքը քեզ։ Տե՛ս քո քանի՛ եղբայրները՝ Արքահամի որդիք, ցնցուիններով են ծածկված ու մեռնում են քաղցածությունից, իսկ քո տունը լիբն է քազմաթիվ բարիքներով, և ոչինչ դուրս չի գնում նոցա համար»։ —Այս խոսքերը շատ ճիշդ Կերպով արտահայտում են, թե ինչ էր գգում Հիսուս աղքատների թշվառությունը տեսնելիս և ինչ հնանքություն էր հանում ընկերական սիրո պատվերից, որ նոցա դրությունը բարվուիլ։ Սիրո մասին խոսելու իրավունք չունի նա, ով թույլ է տալիս յոր մերձավորներին թշվառության մեջ խեղդվել։

Դժբախտաբար շատ տխուր պատկեր է ներկայացնում այս կողմից մեր կյանքը։ Թե որչափ պակաս է և անվանական քրիստոնեությունը մեր ժողովրդի՝ բուն, հասարակ ժողովրդի մեջ,—ամենից կենանի ապացույցը գյուղական «ցեցերի» այն բատմնեցուցիչ նկարագրին է, որ մեր մի քանի շնորհալի գրողներ բերում են իրենց գրուցների մեջ։ Մենք փշաքաղկում ենք տեսնելով, թե ինչպես տանջվում է ամօգնական գյուղացին ծայրահեղ անգրության և գազանային բռնության ճիրանեներում, և կարծում ու քարոզում ենք անմտորեն, թե դորա իսկական պատճառը տգիտությունն է, թե բավական է գյուղացու աշքը բացվի, որ ամեն շարիք վերանա մեշտելից։ Սինչդեռ ահա նորա ընկեր աշքը բացված գյուղացին ավելի անհոգի կերպով է տանջում յոր նախկին վիճակակիցներին, և երբ նա ուսում է առնում ու իմանենք դառնում հետո մնկտել նրանում ու կատարելության նե հասնում ամենավատ հակումները։ Բայց մենք փյանակի զգաստանալու և դարման որոնելու այնտեղ, որ պես է շարունակում ենք որոնել նոյն լուսավորության շավիլի վրա, որ այդպիսի փառավոր արդյունք է հառաջ բերել։ — Դարմանը եղբայրական սիրո այն անսպառ ոգին է դարձալ, որով շնչում է Քրիստոսի ավետարանը և որ նորա համար խոսք ու քարոզ չէ միայն, այլ նորա իսկական բովանդակությունը՝ հիմքը։ Նա ձգտում է նի-

րավի այնպիսի մի համայնք կազմակերպել, որ յուր մեջն առներ ամբողջ նարդկացին կյանքը և նոյնքան խոր տարածեր յուր ազդեցությունը, որի առաջնորդող սկզբունքն իրար դեմ մաքառող շահերը չեն, այլ հոգևոր միության գիտակցությունը։ Այդ տեսակետից ո՞չ մի նոր տեսություն չի կայող լինել, որ նորա տվածին գերազանցե։ — Մարդոց հայացքն արտաքին բարեկեցության մասին անդադար փոփոխվում է, և շատ բան, որ այսօր անհրաժեշտ պահանջ է համարվում, մի քանի տասնյակ տարիներ առաջ անձանոր շուայություն էր։ Բայց այն, ինչ որ իրոք կարևոր է փոքր ի շատե մարդավայր կյանք վարելու համար՝ բնակարան, ամենօրյա հաց, մաքոր կենցաղ, — Փրկիչն ինքն և կարևոր է մնանալ և իբրև երկրավոր կացության արդարացի պահանջ ցուց տվել։ Եթե մենք հնարավորություն չունի այդ պահանջին բավականություն տալու՝ ուրիշները պետք է օգնեն։ Կասկած լինել չի կարող, որ Հիսուս այսօր նոցա կողմը կրոներ, որոնք ամեն շանք գործ են դեռևս ժողովորի խեղճ դասի դառն վիճակը բարվորելու և ավելի հարմար պայմանների մեջ դնելու։ Եկ Նա կպահանջեն, որ իբրև ծառայի չօգնենք աղքատին, այլ իբրև եղբոր։ Թե ինչպես պետք է գործադրենք մեր ունեցվածքը՝ ավելարանն այդ մասին որոշ օրենքներ չի սահմանում, բայց պահանջում է անկասկած, որ իբրև կատարյալ սեփականատերեր չվերաբերվենք, այլ իբրև տնտեսներ՝ հօգուս մերձավորի գործադրելու պարուականությամբ։ Նա բարողում է ամենից վսեմ և ուժեղ համայնական սկզբունքը՝ մի եղբայրություն, որով կարողը պարտավորվում է յուր տկար եղբոր կարուությունը բառնալու։





## ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՀՈՎՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄՍՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

«Որ գանձէ անձին, և յԱստուած մեծանայցէ» (Ղոկ. ԺԲ 21):

«Ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստոծով չի հարստանա»:

Տիրավանդ այս խոսքը կուղղվի ողջ քրիստոնյա աշխարհին և տակալին բոլորին՝ առանց խտրության: Եվ ինչպես գրեթե ամեն պատգամ, որպես հոգևոր ժառանգ, աղյօթի մը ծնունդ է, առա այդպես կպատահի նաև այս պատգամի պարագային: Պարագան կամ դեպքը մեզի կպատմեն Ղոկան ավետարանից, զորս կողենք վերապատմել, որպեսզի գտնենք պատճառին Քրիստոսի կողմէ արտասանված՝ հոգևոր սեռունդ տվող սա խոսքին.

«Ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստոծով չի հարստանա»:

Ժողովորդին մեջեն մեկը մոտենալով Հիսուսին կրու. «Վարդապետ, ըստ եղբորս, որպեսզի ժառանգությունը ինձ հետ բաժնեն»: Հիսուսի պատասխան խոսքը կորուկ կըլլա և հանդիմանական. «Ո՞վ մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»: Եվ անմիջապես իր խոսքը շարունակելով, ժողովորդին դիմելով սա խոսրով. «Տեսեք, որ զգուշ ըլլար ամեն տեսակ ազանութենք, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ» (Ղոկ. ԺԲ 15):

Հիսուս այս խոսքին վրա կավելցնեն նաև սա առակը. «Մեծահարուսի մը արտերք առաս թերք կուտան, և ան կիորին իր մտքին մեջ ու կրու. «Տեսնեա ինչ կրնամ ընել, քանի որ թերք կուտակելու տեղ չունիմ: Եվ ինըն իր մտքին մեջ լուծումը կգտնն. գիտեմ թե ինչ պեսը է ընեն. կրանեամ իմ շուեմարանները և ավելի մեծերը կշինեամ ու այնուեղ կհավաքեամ ցորենը և իմ ամրող բարիքները ու ինքս ինձ կրսեամ ո՞վ մարդ, շատ տարիներոյ համար ամբարված բազում բարիքներ ունիս, հանգիստ ըրե, կեր, խմե և ուրախացիր»: Նոյնամայն Աստված կիսուի անոր. «Անմի՛տ, նոյն այս գիշեր հոգիի թեզմէ պիտի պահանջվի, իսկ ինչ որ պատրաստած էս, որո՞ւնը պիտի ըլլա»: Նոյնպես է նաև ան, ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստոծով չի հարստանա»:

Այսօրվա ավետարանի դասը չափեն ավելի հստակ է և եթե ուզենք դուրս համեմ Քրիստոսի խոսքին ու առակին մեջն մեզի պատգամվածները, կունենանք հետևյալները.

Սուածին հերթին, Հիսուս անտեղի կգունե, որ մարդիկ իրեն կդիմեն Այութական մոտահոգություններով և իր բարկությունը լսելի կդարձնե, եթե իրեն մոտեցող մարդուն կպատասխանն ըստով. «Ով մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»: Եվ որպեսզի հիմնավորե իր բարկությունը, իր խոսքը կշարունակե սակայն. «Զգույց եղեք ամեն տեսակի ագահորեննե, որովհետև մարդուն կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»: Եվ վերջապես, առակի պատմության ավարտին, մեր Տերը կպատգամն չիտեսել մեծառության օրինակին, որովհետև «Նոյնապես է նաև ան, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»:

ՀՅկերթույան կյանքի մեջ, բոլոր այ ականատես կրտսեանք և շատ համախ կցավինք, եթե սիրելիներու ու հարազատներու միջև վեճ կամ անհակացողություն կծագի իրենց հասանելիք ժառանգությունը կիսելու պահին: Եվ երեմն, երկվարյանի մեջ եղայրություններ կկործանին նյութին համար, առանց անդրադառնալու, որ ճշմարիտ կյանքը նյութական հարըստության վրա չէ որ կամրապնդի: Ահավասիկ այդ իսկ պատճառով այ Քրիստոս մեզի կպատգամն: «Տեսեք, որ զգույց ըլլաք ամեն տեսակ ագահութենն, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»: Խնչքան տեղին է այստեղ հիշել Քրիստոսի սա խոսքը. «Մի՛ վախեցիր, վոքրիկ հոյո, որովհետև ձեր Հայրը համեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցեք ձեր ինչըեր և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք շինացող բասկներ և անհատում գանձեք երկնքում, որ ո՛չ գողին է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փշացնում. որովհետև, որ որ ձեր գանձն է, այստեղ ձեր սրտերը կիմեն»:

Բնականորեն, մեծահարուսատ, որուն մասին Հիսուս կպատմէ, մեզի կը-ներկայանա իր ընշաքաղցությամբ: Եվ չափազանց հետաքրքրական է, որ Աստուծոն խոսքը ուղղված է ոչ թե անոր հարստություն կուտակելու արարքին դեմ, այլ անոր համար, որ կկուտակեր իր անձի համար. «Նոյնապես է նաև ան, որ իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»:

Այս խոսքով, մեծահարուսատը կրնար ցույց տալ այլ վերաբերմունք: Որով փոխանակ կուտակելու իր հարստությունը և հարուստ բերքը ամբարելու ընդլացման շտեմարաններու մեջ, կրնար դիմել կյանքը ապրելու հոր եղանակի մը. «Աստուծով հարստանալու»:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, Եկեղեցին, որուն ապրող բջիջներն ենք մնաք, Քրիստոսի ներկայությամբ իր պահումը կատանա: Եկեղեցին՝ ի գոլոս ունենալով մեր Տեր Հիսուս Քրիստոս, և որուն մարմնի անդամներն ենք մնաք, իր կարող գործերով կփառավորե Աստուծոն անունը: Եվ կզոր չէ այս ժողովրդական բացատրությունը, եթե կրսենք Եկեղեցի կրնենք կամ Եկեղեցի կըլլա, կնշանակե թե հավատացյալներու մեկտեղումով, աղոթքով ու երկուղածությամբ մեր տկար էությունը կուգենք անգամ ևս լուսավորել Աստուծոն բնակությամբ:

Եվ յորաքանչյոր աղոթքի պահ մեր աղոթքի հոգեսր կյանքի մեջ կը-ներարկե ավետարանական պատգամ, որուն ընկալումը նոր ուժականություն կներշնչե բարոյապես ընկալված կամ սպառած մեր կյանքին հիշտ այնպես, ինչպես ֆիզիկական մեր մարմինները նոր թափ կառնեն սննդառությամբ ու մեզի կպարգնեն առողջ կերպարանք:

Մեր մոգիներուն մեջ առնենք Աստոծն խոսքը. «Ով իր անձի համար գանձ կհավաքի, Աստոծով չի հարստանա»: Եվ անոյ յարմացնենք մեր հոգլոր կյանքը, բանցի անոյ իսկ պայմանավորված է Քրիստոսի Եկեղեցի նորացումը, որուն մարմնի անդամներեն մեկն է նաև Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին: Ամեն:





## ԱՐԾԱԿՈՒՅՑ ՂԱԶԻՆՑԱՆ

### ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Երբեք չի մարել հետաքրքրությունը Նարեկացու և նրա ստեղծագործության մկանմամբ: «Մոգական հմագք մը,—գրել է Գ. Խաչատորյանը,—շատ կանուխեն արդարն սկսած էր լուսապատճեն իր անունը»<sup>1</sup>: Երիտասարդ Նարեկացու տաղանդի ճանաչման առաջին հայտը պետք է համարել Վասպորականի թագավոր Գուրգեն Արծրունու պատվերը՝ գրելու երգոցի նոր մեկնություն: Նարեկացին մեկնությունն ավարտել է 997 թ.: Այսինքն Նարեկացին արդեն հեղինակություն էր թագակիր պատվիրատուի համար:

Երկրորդ վկայությունը Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի պատվերն է՝ գրելու Ապարանից Խաչի պատմությունը: Բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրերը ոսկենոր մի խաչ են ողարկում Ստեփանոս եպիսկոպոսին, սրա քրոջ որդու՝ Կոստանդնուպոլսում պատիվների արժանացած մի զինվորականի ձեռքով: Խաչը 983 թ. մեծ շուրջ Ս. Կարապետի վաճրից փոխադրում են Ապարանից վաճքի Ս. Աստվածածին նորակառուց եկեղեցի: Ստուգ հայտնի չէ, թե մասնակցել է արդյոք Նարեկացին այդ հանդիսությանը, բայց ան ընդունել է Ստեփանոս Մոկացու պատվերը և այդ գործը, ըստ Գ. Ավետիքյանի, գրել է 983 թվից մեկ-երկու տարի անց:

Երրորդ վկայությունը Նարեկացու թուղթն է՝ հողած Կճավա վաճքի վաճառքորը, որ ընդառաջելով վաճառիր խնդրանքին՝ Նարեկացին պարզաբանում է թոնդրակյան աղանդի գլխավոր կետերը և հորդորում պայքարել այդ աղանդի դեմ: Նշանակում է՝ Նարեկացին հեղինակություն էր կրոնա-դավանաբանական խնդիրներում: Եվ վերջապես, չորրորդ վկայությունը Մատյանի պատվերն է, որը Նարեկացին գրել է ոչ թե մեկ պատվիրատուի

<sup>1</sup> Նարեկ. Մատյան ողբերգության ս. Գորգորի Նարեկացի, գրաքար բնագրի հանդիպահության աշխարհաբարի լեռանց Գարեգին եպիսկոպոս Տրավողոնի, Բունեն Այրում, 1948, էջ ԺԵ:

<sup>2</sup> Նարեկ աղօթից համառու եւ զգուշար լոճմամբը բացայատեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յանդուածով աշխատամիրութեամբ նորին լուսոն Հ. Գարդիկի աթոռակալաւ վենետիկ 1827, էջ 424, ծԱթ. 7:

(լինի արքա թե դիտապես) առաջարկով, այլ «ի խնդրոյ հայցման հարց միանձանց և բազմաց անապատականաց»<sup>3</sup>: Որ Նարեկացին մեծ հոչակ է վայելել իր կենդանության տարիներին, որ նրան գովել են ու մեծարել, ակներև է Մատյանի հնքանական այն ժաւա տողերից, որոնք կենագրական ատաղձ ունեն (Բան ՀԲ, դ): «Նա ունեցել է նաև հակառակորդներ, որոնք չարախուել, կշտամբել, բամբառել, հալածել են թեև, սակայն ոչ ոք գրավոր բացասական խորք չի յոնել Նարեկացու մասին»:

11—17-րդ դարերում Նարեկացու մասին ուսումնափրություն չի գըրվել: Բացի Վարքից՝ հայտնի են գրիշների հարյուրավոր հիշատակարաներ, բանաստեղծություններ՝ Ավիրված Նարեկացուն, Մատյանի և մի քանի գանձերի մեկնություններ և այլն: Այդ նյութերը ցրված են ձեռագրերում, տպագիր հանդեսներում և այլուր: Նարեկացու ատեղծագործության բովանդակությունը սերունդներին մատչելի է դառնում աստիճանաբար: Միջնադարին ուրույն մեկնակեսն և գնահատման այլ չափանիշ է ունեցել: Այդ մեկնակեսը հիմնականում հանգում է մեղքերի խոստվանության, հոգու մաքրագործման և փրկության քրիստոնեական գաղափարներին: Վարքի տարբերակներից մեկի մեջ, հարասելով Մատյանի խորագիրը, այսպես է բանձակած նրա նշանակությունը. «Ասենայն ոք ոք և կամեսի, սովու կարողացի հաշտեցոցանել ընդ ինքեան զՀայրն գթութեանց» (ԳՆՍՈ, 173): Մատյանը ընկալվել է որպես մի երկ, որի շնորհիվ ընթերցողը կարող է սողոթել, զոշալ և ապաշավել, թողություն հայցել և մաքրագործվել՝ ընդունելով քավության և ներման շնորհը: Այս միտքը դարեր շարունակ անցել է հիշատակարանից հիշատակարան, գրքից գիրք՝ արձակ կամ չափածո, պարզ խոսքերով կամ ճարտասանական ճնի դարձվածներով, բայց միշտ էլ դառնալով բարեպաշտական այդ առանցքի շուրջը: Մատյանը այդպես ընկալելու հոգետրամադրությունը գալիս է Նարեկացուց: Իր գործը նաև համարել է «դեղ կենաց», մաթրանքների կտակ, որն իր ընթերցողներին կարող է ընձեռել՝

Բժշկութիւն հոգուց եւ մաքրութիւն յանցանաց,  
Թողութիւն պարտուց եւ արձակումն մեղաց կապանաց:  
(Բան Գ, գ)

Ըստ Սամվել Անեցու՝ Գագիկ Բագրատունու (990—1020) թագավորության առաջին տասնամյակին «փայլէր իբրև զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին»<sup>4</sup>: Արհստակես Լաստիվերտցին, թվարկելով ժամանակի անվանի վարդապետներին, նկատի ունենալով Նարեկացուն՝ հիշատակում է «և Գրիգոր յոյժ իմաստունն բանիւր»<sup>5</sup>: Մատթեոս Ուռիայեցին տալիս է դարու վարդապետների ավելի ընդարձակ ցանկ՝ հիշատակելով նաև Անանիա և Գրիգոր Նարեկացիներին<sup>6</sup>:

<sup>3</sup> Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության, համահավաք բնագիր, Երևան, էջ 245; Այսուհետև՝ ԳՆՍՈ:

<sup>4</sup> Սամվելի բանանայի Անեցու Հասարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

<sup>5</sup> Պատմութիւն Արհստակիսի Լաստիվերտցոյ, աշխատափրությամբ Կ. Ն. Ցուգրաշյանի, Երևան, 1963, էջ 26 և 154:

<sup>6</sup> Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 179:

Նարեկացուն իբրև բանաստեղծի գնահատելու առաջին փորձը պատկանում է Ներեւս Լամբրոնացուն: Մատյանի ԼԳ գլուխից Ս. Հոգուն ողղված աղոթքը, որը սկսվում է «Ամենակալ, բարերար, մարդասէր աստղած բոլորից» տողով, Լամբրոնացին մուծել է հայոց պատարագամատուց, իբրև նախերգանք: Լամբրոնացին գրել է այդ աղոթքի մեկնությունը, որը խիստ նետաքրքիր է կրոնավորի հոգեբանույշան բացահայտման տեսանկյունից ևս: Ըստ Լամբրոնացու՝ անհնարին է մեկնարանել աղոթքի խոսքը, որով նետու այն ձողված է աղոթարարի հոգու տեսչանքին: «Արդ, ո՞րպէս կարողանամք զարտասուլից հառաջումն ամենայն անձինն մեկնել, կամ ուսուցանել, բայց թէ փորձի որ ընդ կիրթ նորին անցեալ՝ ծանից որ ճաշակ՝ վայելնալ, յանենայն պատրանաց աշխարհին ի ստիպոյ սրտին էջոյն սուեալ՝ հրամարել, և միայն յայն հառաչմանն միշտ զանձն իր կերակրէ: Հառաջումն այն է, որ գործ սիրոյն աստուծոյ արձարծէ, և արտասուրել է, իր զինգուն աշու վճիռ ներգործէ»<sup>7</sup>:

Լամբրոնացին Նարեկացու հառաջանքի ու արտասուրի պատճառը տեսնում է աստվածային կատարելության նրա տեսչանքի ու գգուման մեջ: Ըստ Օրաց Նարեկացին տեսչում է Ս. Հոգու զորության լույսը «խոնարհնոցանել և հրաշալի ազդմամբ առ ինքն ձգել», որի հայտնությունը հոգու մեջ ճանաչվում է նրանից, որ այդ լույսը խաղաղություն է ավետարակում մաքրելով հոգին խովանուզ տագնապներից:

Հաղորդվել Մատյանին՝ հշանակում էր հավասի, հույսի և սիրո լոյս հասնել սեփական էությանը, բարձրանալ ինքն իրենից, նորոգմել հոգովի: «Ծնորին ամենախնամ ողորմութեանն աստուծոյ յանկ ելաել աւարտեցաւ Մատեանս աստուծային սուր և երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացոյ՝ ի խնդրոյ աստուծապատի սուրբ կարողիկոսին տան Թորգոնայ տեսան Կոստանդնայ, —գրել է Վասիլ Ուռիայեցի գրիշը 1266 թ., —քանի ունեսալ զգել վայելչութեան բանին, որ ամբարեալ կայ ի յաստուծախնաւ Մատեանս. զի է սա դուռն և մուս ի գալիքս աստուծոյ, որ ի ձեռն զշշման և պաղատանաց արտաստայոր աղերարկու աղարժից սրբոյ նարեւ Գրիգորի սուն զմեղսամակարթ մարդիք նորոգ և հոգիացեալ՝ նման հրեշտակաց. զի է սա խասք ընդ աստուծոյ և կշտամբանք մեղուցեալ անձին և աղերս ամենայն սուրբ» (ՄՄ, ձեռ. № 4965, էջ 380 ա—բ):

Դարի այս կրթված գրչի հիմնական միտքը ևս հանգում է զշշման ու պահատանքների միջոցով հոգին մեղքից մաքրելու բարեպաշտական պահնաշին: Թեև ըստ էության հոյն միտքն է արտահայտում նաև Հովհաննես գրիշը 1286 թ. գրած իր հիշատակարանում, բայց իր գաղափարը նաև մատուցում է առավելագույն փիլիսոփայական մոտեցմամբ, քանի կրոնական տեսանկյունից: Ըստ Հովհաննեսի՝ Աստված լոյս է, և որքան պայծառ է այդ լոյսը մեկի մեջ, այնքան բարձր է նրան սրբությունը: Նարեկացին արտափառել է բանական այդ լոյսը, որպեսի այն պատճենի մեր մեջ, և մենք աստվածանք:

Իսկ Մարտիրոս գրիշը իր միտքը գրեթե ժողովրդական պարզ, առօրյա և մատչելի լեզվով է արտահայտել 1283 թ. Խորանաշատում ընդօրինակած Մատյանի հիշատակարանում.

<sup>7</sup> Սրբոյն Ներեւսի Լամբրոնացու Տարտոնի եպիսկոպոսի Խորիդածորին Խորիդածորին 1847, էջ 255:

Ով որ ունի խոցուած, հոգի կամ մարտինն է մեղաք ի լի  
Եւ դեռ ուզէ վասն իր հոգոյ, ասս գուանէ զիր պիտանի:  
(ՄՄ, ձեռ. № 1563, էջ 336 թ.)

14—15-րդ դարերում ավելի է խորանում հետաքրքրությունը Նարեկացու Ակատումամբ: Ակա հայաբնակ մի վայր, լինի բնաշխարհիկ Հայաստանում, Կիլիկիայում, թե գաղթավայրերում, որ հայունի չլինի Նարեկացու անունը: Ամենուր սիրով ընդօրինակում են նրա գործերը և, ամենից շատ, Մատյանը: Մատյանի ընկալման մեկնակետը մնում է Առյնը, բայց նշարփում է նոր տեսանկյուն՝ ինչպես հասկանալ Մատյանը, ինչ է ցանկացել այս հետինակը այս կամ այն գլխում, ինչո՞ւ է ճշել այս կամ այն աստվածաշնչական կերպարը և այլն:

1327 թ. Խոպհայի Սաղեռնո քաղաքում Մատյանն ընդօրինակել է Անդրոնիկոս քահանան ժամանակի զարգացած հոգևորականերից մեկը: Նրա համար ևս Նարեկացու Մատյանը «աստուածազարդ և հոգեպատում» գիրք է՝ գրված Ս. Հոգու Անքշնչմամբ: Նրա կարծիքով մեղինակը՝ Գրիգոր Նարեկացին, «զդէս առեալ ամենեցուն՝ զարդարոց և զմեղաւորաց ուժգին բաղձանաք և հառաջանաք ի գորով և ատիղորմ բանաստեղծությամբ զարթուցանէ զբանին թմբրութիւն և զյիմարութիւն բանդագուշեալ մտաց մերոց տեսութիւն» և «քազմապիսի լեղանակա և յորդորական քաջալերութեամբ կոչէ զամենեսեան յանպատում միմթարութիւն, միշնորդելով ընդ աստուած և ընդ մարդիկ՝ զամենեցունց ընդ ինքնան վարկանելով զպարտիս, համանման գողով այնմ, որ զմենս մեր երարձ» (ՄՄ, ձեռ. № 1562, էջ 258թ—259թ):

Թափանցիկ է զուգահեռող Հիսուսի և Նարեկացու միջև: Նարեկացու աստվածանմանության իդք Անդրոնիկոսը համարում է իրագործված, առ միջնորդ է Աստծու և մարդկանց միջև՝ իր անթերի մարդկայնությամբ և աստվածային հոգու կերպարով:

Եթե Ղազար գրիշը 1333 թ. գրած իր հիշատակարանում Մատյանի նշանակությունը տեսնում է այն բանի մեջ, որ նրանով կարելի է քավություն գտնել և փրկության հոլոյ, «որով մերձենամք առ աստուած և մշտընչենարութիւն անմահական կենաց» (ՄՄ, ձեռ. № 2557, էջ 132ա), ապս նոյն դարի մեկ այլ գրիշ՝ Նորոգեաց, Մատյանը բնութագրում է որպես մեղքերի խոստովանության աստվածախոս մի գիրք և եթե մեկը «որպէս արժան է պահատեսի սովոր առ ողորմած անխակալ տէրն, հաւատաց սուտգապէս թեթևանալոյ և ծանրաբեռն կրիցն մեղանացն»<sup>8</sup>:

Սուսին պահ թվում է, երկու գրիշների մոտեցման միջև տարբերություն չկա: Բայց դժվար չէ նկատել, որ Ղազարի հայացքն ավելի շուռ ոլղված է դեպի երկինք, մինչդեռ Նորոգեախը ավելի շուռ հակիմ է երկրին: Եվ առհասարակ, եթե մի կողմից ընդգծվում է Մատյանի հոգևոր դերը որպես «ճանապարհ կենաց», որ յերկինս տանի» (ՄՄ, ձեռ. № 5921, էջ 343թ), որպես «ատացուած զպատուական և աստուածային և վերին պայծառութեան առիթ» (ՄՄ, ձեռ. № 10182, էջ 209ա), ապս մյուս կողմից շեշտվում է նրա գեղարվեստական ներգործության, բարդացիկի հայության գործնական նշանակությունը: Ըստ Հովհաննես գրչի՝ Մատյանը

<sup>8</sup> Սայր ցուցակ ձեռագրաց Միքոց Յակոբեանց, կազմեց Ն. Խովհանոսոս Պողարյան, թ. Ե, Երևանին, 1971, էջ 21:

հոգեշան մի գիրք է, որը կարող է լինել «մեղատրաց՝ սփոփանք, տարակուսկոցն՝ մխիթարանք, վշտացելոց՝ ագճական, անգելոց՝ կանգնումն, և յետ Քրիստոսի՝ լուսաւորիչ աշխարհի» (ՄՄ, ձեռ. № 5076, էջ 127բ):

Հիշտակարանների մեջ իր քնարականությամբ առանձնանում է Թուլմա գրչի հիշտակարանը՝ գրված Վանում, 1391 թվականին: Թուլման իրեն արժանի չի համարում նոյնակ շոշափելու, ել որ մնաց թե ընդօրինակելիու: «Զեռք, որ ի մեղքն շաղախի, զիա՞րդ զայ շօշափեսից»: Բայց և ընդօրինակում է՝ գիշելով իր ծերունի նորեղբոր՝ Սիմեոն քահանայի թափանձանքին, որն իր վարպետն էր նաև:

Արտասուալից աղաչեր զիս, թէ՝ Կատարէ զիս խնդրելիս,  
Խնդրեմ զգանձն հրաշալիս՝ Նարեկայ սուրբ վարդապետիս,

Այնչափ չհանգչիմ ես յաշխարհիս լընչուր հայիմ զգիրքս ի գրկիս:

(ՄՄ, ձեռ. № 1874, էջ 336ա—337բ)

Մատյանի հոգականության ուժն է, որ թույլ է տվել մատենագիր Մատյան Զաղովեցուն Նարեկացու խոսք բարձր դասել սահմուներից: «Մին փոխ Նարեկացի լաւ է, քան զամենայն սահմու Դատի» (ՄՄ, ձեռ. № 6607, էջ 52ա): Զուղացեցին զգացել է, որ իր ժամանակի՝ 14—15-րդ դարերի մարդու հոգուն առավել հարազար է Նարեկացին, քան Դավիթը:

Նարեկացու մասին միջնադարում պատմաբնական, քանասիրական աշխատություններ չեն գրվել: Բայց, ըստ իս, եղել են փորձեր: Այդպիսի փորձ է Ստեփանոս Տիվրիկեցու հիշտակարանը՝ գրված 1366 թ., Ավագ Վանքում: «Ե չորք հարիր յիտուն և մի (1002—Ա. Ղ.) թուին է զգիրքս արարեալ Նարեկացին Գրիգորիոս,—գրել է նա, —և չորիթք յեղանակար տամի զբանն երանեալ սուրբ հայրս Գրիգորիոս. պատասխար առ աստուած, և ըստ արկածից բանսարկուին: Ճաղանաց անձին և յուսադրութիւն շնորհացն աստուծոյ: Ունի խառնեալ և պատմական բանն, առակարու և ներքունան ինչ՝ խառնեալ մեկնութիւնն և գոհացողականն. նա և իրս ինչ խառնեալ չնշին և զարմացուցիս, արկեալ ընդ փակիր, յոլբոց սկսեալ և ի գոհութիւն աւարտեալ աղաշանար» (ՄՄ. ձեռ. № 2088, էջ 4բ):

Սա գրականագիտական նուրբ վերլուծության փորձ է՝ մի կողմից հասկանալու Մատյանի գործողության զարգացման հոգերբանական շարժադիրը, մյուս կողմից՝ բացահայտելու նրա կառուցվածքի տարրերը և, վերջապես, նաև ժամերի բնույթը՝ ողբ, որն ավարտվում է լավատեսական հոլոյի գոհարանությամբ:

Մատյանը մտահիացված է որպես ամբողջական գործ: Նա բաժանված է միայն գլուխների: Բայց արդեն 12-րդ դարից հայտնի են փորձեր՝ առանձին գլուխներ վերնագրելով՝ տարբեր նպատակներով կիրառելու պահանջից մղված: Մատյանը մասերի բաժանելու մի փորձ արվել է 14-րդ դարում: Դա մի ձեռագիր է՝ ընդօրինակված 1369 թ., Արտամետում, որի գրիշն է Ստեփանոս Արտամետցին: Լդ գլխի բ հատկածից առաջ նա թողել է այսպիսի վկայություն: «Գրեցա լերից գրոց զմի գիրքս առաջին» (ՄՄ, ձեռ. № 5883, էջ 159ա): Այնուհետև, Հդ գլխից թեսու, ՀԵ գլխից առաջ գրել է այսպես: «Արդ, գրեցա կարողութեամբն աստուծոյ երկրորդ գիրքս սուրբ վարդապետին Գրիգորի Նարեկայ, ձեռամբ յոգնամեղ և անարիեւու գրչի՝ Ստեփանոսի, յիշտակ ինձ և ծնողաց իմոց» (էջ 339բ): Նշանակում է՝ Մատյանը բաժանվել է երեք գրերի: Սա չէր կարող լինել Նարեկացու-

Այց մասերի, գրքերի, դրվագների բաժանելու այս փորձը ծագել է Մատյանն ավելի լավ ընկալելու պահանջից: Ձե՞ս որ հայ մատենագրության նշանավոր երկերը՝ սկած Խորենացոց, Եղիշեից, Փարպեցոց մինչև Հովհաննես Դրասխանակերտցի, Ստոլիկ և որիշներ ունեն ուրում կառուցվածք և երեք չեն կրկնում միմյանց: Թերևս բաժանման այդ փորձը կատարել է Մխիթար Սասնեցին, որի ձեռագրից էլ ընդօրինակել է Ստեփանոսը: Սասնեցին նշանավոր Վարդապետ էր (մոտ. 1260—1337): Գ. Ավետիքյանը ձեռքի տակ ունեցել է մի ձեռագրի՝ գրված 1325 թ., որը համեմատված է եղել Մխիթար Վարդապետի ձեռագրի հետ՝ «առ որ յիշատակագիր համառու յաւելեալ ազդ առնէ՝ կարի վստահանալ ի նոյն»<sup>9</sup>: Մատյանը Նարեկ է կոչվում հավանաբար 13-րդ դարից: Նարեկացու վարքի տարբերակներից մեկում՝ գրված 1309 թ., ասված է՝ «յօրինեաց զիրաշալի Գիրս աղօթից, որ յանուն տեղույն Նարեկ կոչի»<sup>10</sup>:

Հավանաբար 13-րդ դարում են գրվել Մատյանի և Նարեկացու մի բանի գանձերի մեկնությունները: Մատյանի մեկնության մնացովն տարբերակը հայտնի է 1271 թ. ընդօրինակությամբ (ՄՄ, ձեռ. № 5518, էջ 253ա—305բ): Ըստ գրչի հիշատակարանի՝ մեկնության հեղինակը Հակոբ Կայեցի կաթողիկոս է (1268—1288): Սա հավանական է, բայց կարոտ է ապացուցման:

Մեկնությունն ունի որոշակի գրապատմական և գիտական արժեք: Նախ գրված է մատչելի, պարզ և գրեթե խոսակցական լեզվով, երկրորդ՝ մեկնիշը մեծ ուշադրություն է դարձրել խորին բառերի բացատրություններին, չխոսափելով արաբերեն և թուրքերեն համարժեքները տալուց, երրորդ՝ իր բացատրությունների մեջ ելուս է ժամանակի գիտության մակարդակից: Պատահական չէ, որ մեկնությունը հրատարակվել է Մատյանի տասնյակ տպագրությունների հետ և, ինչ խոսք, ծառայել է իր նպատակին: Նոյն հեղինակի նոյն մոտեցմամբ էլ մեկնաբանված են Ս. Հոգուն, Խաչին և Եկեղեցուն նվիրված գանձերը (ՄՄ, ձեռ. № 59, էջ 199ա—202բ):

Առանձին բանատեղծներ Նարեկացուն նվիրել են ներբողներ, տաղեր, երգեր<sup>11</sup>:

16—17-րդ դարերի կյանքի անբարենպաստ պայմանների հետևանքով նվազում է հետաքրքրությունը առհասարակ մշակույթի նկատմամբ: 17-րդ դարի կեսերից ըկատվում է զարթոնք: Հայերը, ինչպես գրել է Ս. Արենցանը, «կամ պետք է ոչնչանային և վայրենանալով ընկերին, և կամ, եթե ազգի մեջ կենսունակության դեռ ոժ կար, մեծ շանքերով նորից ձգտեին»

<sup>9</sup> Նարեկուն էջ Ժ:

<sup>10</sup> Յայսմատուրք. Կ. Պոլիս 1884, Յառաջաբան և էջ 99: Տես նաև՝ ԳՆՍՈ, էջ 180:

<sup>11</sup> Գրիգոր Խարենցին (1349—1425) Նարեկացուն դրվագել է այսպես:

Որպէս զարև ի բատեղաց՝ եր նա ի մեջ վարդապետաց,

Ռամից հանուրց հնատորաց և բանիրուն գիտնականաց:

(ՄՄ, ձեռ. № 1578, էջ 6 բ)

Առարել Սյունեցին (1850—1425)՝ պայտեն.

Ցանեն լուսոյ լուս կոչեցար, յաշտանակի մարմնոյ ենար,

Ցեկեղեցոյ շամ վատեցար, խաւար նոգուց դոր լուսարար:

(ՄՄ, ձեռ. № 2088, էջ 339ա)

Հակոբ Նալբանը (1706—1764)՝ պայտեն.

Անդուղը երկնանամ՝ առ աստուած երման,

Ի հեղեղաց մեղաց՝ գերծուցիչ տապան:

(Մեկնութիւն աղօթից, էջ 7)

կենդանության»<sup>12</sup>: Նարեկացին դպուում է ճորգաման հովայի ու շանքի սատար: Նորից շանասիրությամբ ընդօրինակում են նրա գործերը: Հիշատակարանների հետինականները հաճախ բառացիորեն կրկնում են հներին և միայն երրեն-երրեն գեղում իրենց բարեպաշտական գգացմունքները: Այդ շրջամի հիշատակարաններից մասնակի հետաքրքրություն են ներկայացնում այլազգիների գերությունից Նարեկն ազատելու մասին տեղեկությունները<sup>13</sup>:

17-րդ դարում հասունացավ Մատյանը տպագրելու անհրաժեշտությունը: 1673 թ. Մարտկում մեծանուն Ուկան Երևանցին ձեռնարկեց Մատյանի տպագրության գործը: Տպագրությունը, սակայն, մնաց թերի՝ Ուկան Երևանցու (1613—1674) մահվան պատճառով (ԳՆՄՌ, 197):

18-րդ դարը առանձնահատուկ տեղ ունի Նարեկացիագիտության զարգացման մեջ: Դարամուտը բացվեց Նարեկացու Մատյանի և նրա մի քանի զանձների հրատարակությամբ: Գիրքը լույս տեսավ 1700—1702 թթ. Կուտանինուպուլում (ԳՆՄՌ, 197—199): Բնագիրը տպագրության էր պատրաստել Երրուսաղեմի պատրիարք, մատենագիր, հասարակական-եկեղեցական գործիչ Միհնա Ամդեցին (մահ. 1704): Նա բնագիրը պատրաստել էր Երրուսաղեմի ձեռագրատան մի գրչագրի հիման վրա՝ համեմատելով Եջմիածնի, Սաղմոսավանքի, Խոր Վիրապի և Սևանա վանքի հինգ այլ ձեռագրերի հետ<sup>14</sup>:

1276 թ. լույս տեսավ Մատյանի երկրորդ տպագրությունը՝ դարձյալ Կուտանինուպուլում: Նախորդի համեմատությամբ սա ունի մի քանի ա-

<sup>12</sup> Մ. Արենցյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 511:

<sup>13</sup> Այսպիսի մի հիշատակարան թողել է Սեբաստիայի եպիսկոպոս Մելքիսեդէք՝ 1602 թվականին. «Որ տեսի զայ աստուածազն մատեան ի ձեռն այլասեից, որ կարի անդէա և ամիսնամ շշափեին և ի ձեռն էտեսի ի ձեռն տպին կատակելով: Եւ իմ տեսեալ զայ մատեան ի ձեռն թէնից ասպատակողաց, և փաղաքանաթ ժուեցայ, մինչ զի կամք արարին տալ ինձ զայ. ապս սակա ինձ ի խացարդու զին տուեալ սմա և զնեցի զանգին մարգարիտու. որ էր խախտեալ և տերևտեալ և անսպամ մարդոյ հանդիպեալ, որ զայ լուսատու նրագին զակն խաւարացեալ էր... Այլ ես անարժան ծառայ... Սելքւէթ եպիսկոպոս Սեփաստիացի ... կրկին ճորգեցի զայ զտեղ-տեղ ուլայելով և զտեղ-տեղ սպոնկով լուանալով՝ ամի և դոլութեամբ, վասն զգին ոչ եղծեալ աղագա...» (ՄՄ, ձև. № 1875, էջ 228—229ա):

Անս մեկ այլ հիշատակարանում՝ գրված 1776 թվականին: «Արդ, թական Հայոց էր ՌՄԵ (1225+551=1776), որ հագարացիք գնացին յերկիրն Շշոտնեաց առ ի թալանել. զերկիրն ամենան աւար Էարկ և արար Աւերակ, և մանաւան ի սուրբ ովսոն Նարեկայ: Բազում թաղան քերեալ էին ընդ ինքնանց. ի բազմաց մինն ի աս սուրբ Նարեկացու աղօթազիրքը է: Ոմն անոն Կարապետ, որ մականու Խոտեղա սահ, իր թէ Աստուածատոր թարգմանի, սայ իր հապալ արդեանց, ալինքն իր փաստակն արծաթէն տաւ զայ գիրք պատանց ի ձեռաց անօրինաց, և ապս կրկին ոնվով (Աներ, ընծա—Ա. Դ.) արար սուրբ Նարեկայ գերեզմանին՝ իշխատակ իր ծննդացն Գոյանին և մօռն Աղարքելուն, կողակցում՝ Սուլքանին և իրեանց տան մեծի ու փորու. միշտ՝ ամեն» (ՄՄ, ձև. № 57, էջ 271թ):

<sup>14</sup> «Արդ, ես՝ տէր Միհնա արքեպիսկոպոս և պատրիարք սրբոյ Երրուսաղեմի, որ ի վիճակին Հայոց. ի կանուն ժամանակաց ունելով փափաք ընդ աստուածային գրուս պատիկ միշտ և ամենան ուրեք մսիթարեկ սովու: Խոկ ի չուելն իմ ի սուրբ Երրուսաղեմ ի բուին ՌԵ (1691) գտի անդ ևս զբան արօթից սրբոյ Նարեկացուն այլ ևս զոյիս և (5) որպէս տեսանի ի վերը գրուս պատիկ: Եւ զկնի ամաց ի գնալն իմ ի սուրբ առոռն Եջմիածնի ի ճորին գրատան, Սաղմոսավանից, ի նոր Վիրապէ և ի Սևանու անապատէ զոյակնեալաւմ ի գրչաց ուղղագրեցի ի հնագիր օրինակէ» (Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացու արարեաւ, Կ. Պոլիս, 1700—1702, Յիշխատակարտան, էջ ԾԾԱ):

ուղիղությունները. ա) բնագիրը պատրաստել են «ի բազում և լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբք սրբագրութեան» զայլ և այլ օրինական ընդմիջնան համեմատելով»<sup>15</sup>, բ) սրբագրել են առաջին հրատարակության վրիպակները, գ) լուսանցրում նշել են աստվածաշնչական հոդումների աղյունները և, վերաշպես, դ) ավելի շատ տեղեկություններ են հաղորդել կատարիված աշխատանքի մասին: Տպագրությունն իրականացրել են Աստանայուղուի պատրիարք Հովհաննես Կոլոտը (1678—1741), Երուսալիմի պատրիարք Գրիգոր Շոլժայակիրը (17—18-րդ դդ.), Բղումները կատարել է Հարություն արեան, սրբագրությունը՝ հայունի բանասեղծ և քերականագետ Պաղտասար Դպիրը (1683—1788):

Մատյանի հշանակությունը գեահատված է զուտ միջնադարյան ոգով: Մարդ պետք է ձգտի աստվածանալու, իսկ դա կարող է լինել ոչ այլ կերպ, «եթէ ոչ հաւատով միայն»: Եվ այս՝ «թէակտ յաստուածն մերձենալ հաւատով է և ոչ այլ իիք, բայց և հաւատովն սմունի՝ գործն է և գործոյն գերագոյն՝ աղօթք»: Լուսաբանելով համար այս միտքը նախարանի Բեղիմակը դիմում է այսպիսի համեմատության: «Զի որպէս տունկ իմն տնկեցեալ ի հողոց, եթէ ոչ ոռոգանիցի ստեպ-ստեպ և ոչ ներընդունիցէ զարեգական շերմութիւն, ոչ աճէ բնաին, այլ խամրի և չորանայ: այսպէս և հաւատն առանց աղօթքից շերմութեան և արտասուացն ոռոգման՝ խամրանայ օրըստորէ և անպատուի լեալ՝ մեռանի»<sup>16</sup>:

1745 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Հակոբ Նալյանի «Գիրք մեկնարեան Աղօթքից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ» ուսումնասիրությունը, որը բաղկացած է ա) նախադրությունից (Էջ 1—12), բ) Մատյանի մեկնությունից (Էջ 13—720) և գ) ներքողների մեկնությունից (Էջ 721—1051): Նալյանը եկեղեցական մատենագիր էր, աստվածաբան և բանաստեղծ: Լեռն այսպէս է բնութագրել նրան: «Գրական մարդ Էր և իբրև այդպիսին, շատ բեղմնավոր գրիչ ուներ: Տարաբախտաբար, դարն այնպիսին էր, որ նրա ընդունակությունները պարիփակեցին միայն կրոնական ներ շրջանակների մեջ»<sup>17</sup>: Կրոնական ոգին էլ իր ուժեղ կնիքն է դրեւ Նալյանի այդ ուսումնասիրության վրա: Գիրքը բացվում է մի նախադրությամբ, որը նաև անդրադանում է Նարեկացու կյանքին, կրթությանը, դաստիարակությանը, բնավորությանը և այլ հարցերի: Նախադրությունը ոչ այնքան վերլուծական մտքի արգասիք է, որքան պաշտելի անձին նվիրված ներքոյ: Նալյանի սրանշացման աստիճանը համառում է այնուղ, որ, հակառակ փաստերի, Նարեկացու կյանքի տևողությունը հավասարեցնում է Հիսուսի տարիքին, զոգահեռներ է տառում աստվածաշնչական կերպարների և Նարեկացու միջև: Նարեկացու ստեղծագործությունը Նալյանը մեկնարանում է համարիսառնեական հայացքների տեսագծով՝ համեմատությունների ու հակադրությունների համար դիմելով եկեղեցու հայրերի, անտիկ մուածողների, միջնադարի հայ և օստարազգի բազմաթիվ Բեղիմակների անհատարբեր աշխատություններին: Նրա պատկերացրած Նարեկացու համար չկա ներքին հակասությունների և որուսումների լարված վիճակ: Կա սրբության ձգուման ծարավ, աստվածանալու կրոնախանուն շերմուանդություն: Նալյանն իր առջև խնդիր չի հնաւում լուսաբանելու այն հարցը, թե պատմական ու մշակութային ինչ օրի-

<sup>15</sup> Գիրք աղօթքից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ նոգեկիր նուստորի, Կ. Պոլսի, 1726, էջ Նիւ:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 2—3:

<sup>17</sup> Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 454:

նաշափորժամբ պիտի հանդես գար Նարեկացին, ինչու ժողովրդական բանախոսությունը պետք է ազդեր Նարեկացու ստեղծագործության վրա, ինչու պիտի փոխվեր վերաբերությունը դեպի մարդու ու բնուրյունը, դեպի եկեղեցին և այլն։ Նայանի համար Նարեկացին վեր է ժամանակից, պատմահասարակական միջավայրից դուրս, զուտ հոգևոր հետաքրքրությունների տեր բանաստեղծ, որի համար Էականը առհասարակ մարդն է՝ աստծու, աստված՝ մարդու հարաբերությամբ։ Խըրք գնահատման բարձրագույն չափանիշ, Նայանը Մատյանը համարում է համառու Աստվածաշուն և երկրորդ Ավետարան։ «Այնքան առատացաւ յարդիմս բանից մինչ զի համարձակիմ ասել, թէ զայօթական բան իր իրար համառոտարան իմն Աստուածաշուն և իրը երկրորդ Աւետարան»<sup>18</sup>, Նարեկացու՝ երկրորդ Պրոմեթես, որը «գողացեալ զիոր յաստուծոյ և շնորհեալ մարդկան»<sup>19</sup>։

Նայանի գրքի մնայուն արժեքը պետք է տեսնել ոչ թե Արա կրոնահայրենասիրական գաղափարների, այլ Նարեկացու ստեղծագործության բնագրագիտական դիտողությունների, բառացաւորությունների, հայ մատնագրության մեջ ունեցած առնչությունների մատնանշման մեջ։ Նրա միշտը դիտողությունները հաշվի են առել 1763 և 1774 թ. հրատարակության պատրաստողները (ԳՆՄՈ, 202—206)։ Իր աշխատանքի նպատակն ու խնդիրը Նայանը բացատրել է այսպես. «Արդ, բանզի մտաբերելով մեր, թէ ներքին գեղեցկութիւնը բանից սրբոյ վարդապետիս, բանիք, իրը ամպովք թարուցեալը էին, վասն այնորիկ շանացար ձեռնարկել առ ի զբան լուծանել»<sup>20</sup>։ Նայանը Մատյանն ընթերցել է իր դարի ու իր սերնդի աչքերով՝ ճգույնով թափանցել Արա ներքին գեղեցկությունների մեջ և համեստորեն խոստվանել, թե «Այդամանին պալատին նեցին դուռ շինեցի»<sup>21</sup>։

1774 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Մատյանի, եթե կարելի է ասել, առաջին քննական հրատարակությունը (ԳՆՄՈ, 202—206)։ Հրատարակիչները բնագիրը պատրաստել էին՝ օգտագործելով շուրջ երեք տասնյակ ձեռագրեր։ Տպագրությունն իրականացնելով «համեմատութեամբ հնագոյն և ընտիր ձեռագիր օրինակաց»<sup>22</sup>, Արանք սրբագրել են բազմաթիվ սիստեմեր, վերանյել մի բանի գլուխների կարգը, ճշտել կետադրություններ, հաշվի առել Նայանի առանձին դիտողություններ և այլն։ Գիրքն ունի գլխավոր տարբերությունների ցուցակ, խթին բառերի բացատրական բառարան, վարքի մի տարբերակը, որը, ինչպես կարծում է Պ. Խաչատրյանը, ըստ երևոյթին նույն ժամանակ էլ հորինել է» (ԳՆՄՈ, 203)։

Նարեկացու կյանքին ու գործին անդրդիմ անդրդարձել է նաև պատմաբան Միքայել Չամչյանը (1738—1823)։ Նա ամփոփել է այն ամենը, ինչ հայտնի էր Նարեկացու վարքից, հիշատակարաններից, ավանդագրուցներից։ Նարեկը նա համարում է եզակի ստեղծագործություն, որի նմանը «Յարդ. չերկեցաւ յաշխարիխ»<sup>23</sup>։

Նարեկացիագիտության այս փուլի բարձրագույն մակարդակը հանդիպացավ Գարբիել Ավետիքյանի (1750—1827) վաստակը։ Նա նոր աստիճա-

<sup>18</sup> Հ. Նայան, Մեկնորին աղօթից, էջ 5:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 6:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 15:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 720:

<sup>22</sup> Նարեկ. Գիրք աղօթից սրբոց Գրիգորի Նարեկացու հոգեկիր հոկտորի, Կ. Պոլիս, 1774, էջ 7:

<sup>23</sup> Մ. Չամչյան, Պատմորին Հայոց, 1785, հ. Բ, էջ 853:

Այ բարձրացրեց 18-րդ դարի թե բնագրագիտական և թե մեկնաբանական աշխատանքը: 1801 թ. Վենետիկում լուս տեսավ Մատյանը՝ Ավետիքյանի մեկնություններով: Ընթերցողներին ուղղած իր խոսքում Ավետիքյանը Նարեկացուն ներկայացնում է 18-րդ դ. Կրոնա-հայրենասիրական մեկնակատից: Հունատանը հապատ է, որ Հոմերոս ունի, Խոտլիան՝ Վերգիլիոս, մինչեւ «վեր բան զնոսա առ Հայատանեայք ծագեաց երանաշնորհն Գրիգորիոս, որ գիտաց զապատամբ նոգին բանատեղծութեան հնազանդուն ընդ թեօր աստուածայնոյ հոգույն»<sup>24</sup>, — գրել է Ավետիքյանը:

Ավետիքյանը քննադատաբար է մոտեցել մին լուծունքներին: Գնահատելով, որ Նապանը մեծ ծավալի ծանր գործ է կատարել, նա միաժամանակ նշում է այդ գործի հիմնական թերությունը. «բայց ընդարձակութեամբն յայլ խօսս վարդապետական կամ բանասիրական՝ ոչ ժամանեալ տալ զնշմարիտ տեղեկութիւն առաջի եղելոց բանիցն»<sup>25</sup>:

Ավետիքյանն իր աշխատանքի ելակետն ու նպատակն է համարել բնագրի ստուգության խնդիրը. «առ ի գիտ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է խնդրելի»<sup>26</sup> Այս դրույթը այսօր մնում է բանասիրության առաջին պատկիրանը: Մատյանը, ինչպես նաև մի բանի ներքողներ Ավետիքյանը մեկնաբանել է հետևյալ սկզբունքներով. ա). բարդ բառերի բացատրություններ, բ) լեզվա-ոճական խթին արտահայտությունների, շարահիյուսական դարձվածների և աստվածաբանական հասկացությունների բացատրություններ: Ավետիքյանը բառարանագիր էր, և չկա բարդ, խթին, հազվագյուտ մի բառ, որին անդրադարձ չլինի ծանոթագրությունների մեջ կամ առընթեր բառարանում: Բնագրագիտական ոչ մի վիճակի խնդիր, տարակուսելի ոչ մի հարց ու կետ չի վրիպել հրա հայացքից: Հետագա բոլոր հետազոտողների համար Ավետիքյանը եղել և մնում է հեղինակություն:


Ավետիքյանի համար ևս Նարեկացու ստեղծագործությունն անսպառելի է: Ասպարեզը մնում է ուրիշներին՝ հաջորդ սերունդներին: Նա հետևողութերին է պատգամել թե իր վաստակի և թե նրանց ապագա աշխատանքի գնահատման այս չափանիշը. «սքանչելարունս Մատենիս բարձութիւն կամ խորութիւն գերազանցէ միշտ, բան զլար չափողի»<sup>27</sup>: Սա պետք է իմանալ Նարեկացու մասին գրելուց առաջ: Գրելուց հետո՝ պիտի խոստվանել դա:

<sup>24</sup> Նարեկուծ, էջ Դ:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ Ե:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ Ժ:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ ԺԲ:



## ԱՅՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅԻՀ Հայոց ամենաճշանավոր հոգևոր-եկեղեցական կենտրոններից էր, տևական ժամանակ կաթողիկոսական աթոռանիստ և եպիսկոպոսանիստ, ու հիրավի մեծաթիվ եկեղեցների քաղաք. որ հոգևորականությունն ու բահանայական դասը շատ ավելի բազմամարդ է եղել, քան միջնադարյան Հայաստանի որևէ այլ քաղաքում կամ վանական կենտրոնում:

ԱՅԻԻ հոգևորականության եերկայացուցիչների անունները պահպանած հիմնական սկզբանադրյուրները վիմագիր արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարանները ու պատմիչների վկայությունները են: Դրանց և մի քանի օճանակ աղբյուրների միջոցով մենք կազմել ենք ԱՅԻԻ ու նրա մերձական վաճերերի հոգևորականության համահավաք անվանացանկը, որը կցվում է սույն հոդվածին:

### ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅԻՀ կաթողիկոսական աթոռանիստ դարձավ 992 թ.՝ Սարգիս Ա. Անվանության սկզբից, և ապրեց ծաղկման ու վերելքի շրջան: Սակայն ԱՅԻԻ Բագրատունյաց թագավորության անկուսց հետո, 1047 թ. սկզբներին, բյուզանդացիները քաղաքից հեռացրին կաթողիկոս Պետրոս Ա. Գևոտաղարձին ու նրա տեղապահ Խաչիկ Անեցուն և կազմալուծեցին Ա- ՅԻԻ կաթողիկոսարանը: 1081-ին ԱՅԻԻ կաթողիկոսությունը կարճ ժամանակով վերականգնվեց Բարսեղ Ա. Անեցուն ձեռնադրության շնորհիվ, բայց այնուհետև Սթոռոր փոխադրվեց Կիլիկիայի սահմանները՝ Քեսունի Կարմիր վանք:

Սարգիս Սևանցու և Պետրոս Գետադարձի ժամանակ Անիի կաթողիկոսարանը մեծաթիվ միաբանություն ու պաշտոններություն է ունեցել: Այդ մասին արծեքավոր վկայություններ են պահպանվել պատմիչ Մատթեոս Ուռիայեցու մոտ: Նա ժամանակավագես գրում է. «Երկուտասան եպիսկոպոսը և չորս վարդապետը ի տան հայրապետին անպակաս լիներ և վախուն երեց՝ ի կրօնաւրաց և յաշխարհականաց՝ հինգ հարիր»<sup>1</sup>: Պատմության աշխարհարար թարգմանության մեջ հետինակի խոսքի վերջին հատվածը՝ սխալ է համարվել, «հայրապետի վեհարանում մշտապես լինում էին տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթուն երեց, ինչպես և հինգ հարյուր աշխարհական»<sup>2</sup>: Բայց պատմիչը նշում է վաթուն կուակրոն և հինգ հարյուր աշխարհական (ամուսնացալ) երեսների մասին, որոնք հենց այդ կերպ էլ հիշվում են ժամանակի եկեղեցական սպասավորության համակարգում («աշխարհական քահանա»)<sup>3</sup> և Անիի շրջանի արձանագրություններում («աշխարհական քրեղան»)<sup>4</sup>: Պատմիչի խոսքը, տվյալ հատվածում, կաթողիկոսարանի հոգեոր դասի և ոչ թե ընդհանրապես պաշտոներության մասին է: Մեկ այլ տեղում, ինչպես ստորև կտեսնենք, նա հիշատակում է նաև կաթողիկոսարանի աշխարհական անձնակազմին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք վաթուն կուակրոն և հինգ հարյուր ամուսնացալ քահանաների եերկայությունը կաթողիկոսարանում չափազանցված թիվ չէ, ապա մեզ թվում է, որ հատկապես աշխարհական երեսները ոչ թե օրնիքուն կաթողիկոսարանում էին լինում, այլ կազմում էին Անիի քահանայական դասը, սպասավորուն քաղաքի բազմաթիվ եկեղեցիներում, բայց միաժամանակ, ցանկացած պահի կարող էին հավաքվել կաթողիկոսարանում:

Անիի կաթողիկոսարանի չորս հշանավոր վարդապետներից երեքին անվանապես հիշատակում է պատմիչ Արհաստակես Լատիվելուցին, գրելով՝ «...և էին յայն ժամանակի վարդապետը՝ Սարգիս և Տիրանուն և յենովը, որ կաթողիկոսարանին էին վարդապետը...»: Սարգիսը այլ աղբյուրներում Սարգիս Անեցի կոչված հայտնի վարդապետն է, Գրիգոր Մագիստրոսի ունումնակիցն ու բարեկամը, որին նա միշտ շարք համակներ է հասցեագրել<sup>5</sup>: Իսկ Տիրանունին հիշատակում է նաև Մատթեոս Ուռիայեցին՝ հրան կոչելով «իմաստաէր Տիրանուն Կապանեցի»<sup>6</sup>:

Կաթողիկոսարանի և կաթողիկոսին սպասարկող անձանց թվակազմը մասին մոտավոր պատկերացում կարելի է կազմել՝ ծանոթանալով Պետրոս Գետադարձի 1046 թ. վերջերին Անիից Արծոց ողլուրվելու մասին Մատթեոս Ուռիայեցու թողած նկարագրությանը: Կաթողիկոսը գիտակցում էր, թե այդ ուղևորությունը կարող է անդառնալի լինել (և այդպես էլ եղավ, բյուզանդացիները հրան այլև չթողեցին երբեւ Անի վերադառնալ), ուստի իր հետ

<sup>1</sup> Մատթեոսի Ուռիայեցու ժամանակագրություն, Երևան, 1869, էջ 184:

<sup>2</sup> Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն (թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարդիկանի), Երևան, 1973, էջ 101, հնմտ. հունիսի վերաբերատարակությունը գրաբար թագորի մեջ (Երևան, 1991), էջ 167:

<sup>3</sup> Միթիար Գոշ, Գործ դատաստանի (աշխատավիրությամբ Խ. Թորոսանի), Երևան, 1975, էջ 881:

<sup>4</sup> Ն. Սարգսյան, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայութ, Վեճանիկ, 1864, էջ 183, 191:

<sup>5</sup> Արհաստակեսի Լատիվելուցույն պատմություն, Երևան, 1963, էջ 26:

<sup>6</sup> Կ. Մաթևոսյան, Սարգիս վարդապետ Անեցի, «Անի», 1992, № 1:

<sup>7</sup> Մատթեոս Ուռիայեցի, էջ 114, 115, հնմտ. (1869 թ. հրատ.) էջ 123:

Եր վերցրել Անի կաթողիկոսարանի սպասավորներից շատերին, առկորականից ավելի մեծաթիվ ուղեկիցներ: Ուղիայեցին գրում է. «Եւ ինքն (Պետրոս, Կ. Ս.) իր տանեցի ազատօքն փառաւոր արամբը երեք հարիդ՝ վառեալ զինուք, և վարդապետու և եպիսկոպոսուն և երաժիշտու և կրօնաւորս, քահանայս հարիդը և քանի հեծեալս ի ջորոց, հետեւակ պաշտօնեայս՝ երկերիւր»<sup>8</sup>: Խճանեան տեսնում ենք, պատմիչը որոշակիորեն զատում է ջորիների վրա մեծած հարյուր քանի հոգևորական ուղեկիցներին երկու հարյուր մետսակ աշխարհական սպասավորներից: Այնուհետև նա, մանրամասնելով իր խոսքը, անվանապես հիշատակում է ուղեկիցներից առավել նշանավորներին. «Եւ եր զիւն Տեառն Պետրոսի նախնականն և լաւն ի թնաւից Բողոքար վարդապետն և ամենագովելին Խաչատոր դպրապետն և Թադէոս՝ որ եր այս անպարտելի գրչութեամբ, Գեորգ Քարնեղեցին և Յովհաննես Քարնեղեցին և Մատթեոս Հաղբատացին և Միհիթ Բագնայրեցին և Տիրանու իմաստաւորն Կապանեցին, Միհիթարիկն, Վարդան Սանահնեցին, Բարսեղն Բաշխատեցին և համավայելուն և շրեղն տէր Եղիսէն և Բարսեղն Անրին Եղբայրն, Գեորգ՝ ջովհակ ձագն և տէր Եփրեմն և տէր Անանէն և տէր Խաչիկն: Արդ այս ամենայն վարդապետը և իմաստաւոր և հմուտը Հին և Նոր Կոտկարանացն Աստուծոյ»<sup>9</sup>: Թվում է, որ եթե թվարկման մեջ Աշվածներից ոչ բոլորը, ապա նրանց մեծագոյն մասը ներկայացնում էին Անի կաթողիկոսարանի հոգևորականությունը: Նրանցից ոմանց անվանը կից թեն Աշվում է Հաղբատեցի, Բագնայրեցի, Քարնեղեցի և այլն, բայց դա թնավ չի խանգարում վերջիններին կաթողիկոսարանի պաշտօնայ համարել, ինչպիսին եր, օրինակ, Տիրանու Կապանեցին: Բացի Տիրանունից այստեղ ծանոթ անուններ են նաև Գրիգոր Մագիստրոսի աշակերտներ Եղիսէն ու նրա եղբայր Բարսեղը, որոնք Պետրոս Գետադարձի ցանկությամբ իրենց ուսուցիչ կողմից ուղարկվել են Անի կաթողիկոսարանում սպասավորելու և կաթողիկոսի աշակերտելու համար<sup>10</sup>: Բնականարար Անի կաթողիկոսարանից պետք է լինեին պատմիչի մեծարած Բողոքար կոչված վարդապետը, Խաչատոր դպրապետը, հմուտ գրիշ Թադէոսը և մյուսները: Խել անվանացնելի վերջում Աշված Անահիտն (Անանէ) և Խաչիկը հավանորեն պետք է նույնացվեն Պետրոսի նույնանուն քրոջորդիների հետ:

Անիի կաթողիկոսարանն այդ շրջանում բավական լայն գործունեություն էր իրականացնում, համակարգում ու ուեկավարում երկրի եկեղեցական կյանքը, պատրաստում Եկեղեցու բանհմաց սպասավորներ և այլն: Կաթողիկոսարանին կից գործող հոգևոր դպրոցը, որը հայտնի էր դեռ այն ժամանակ, երբ Աթոռը գտնվում էր Սրբինայում, շարունակում էր գործել Անիում: Այդ մասին ակնարկներ են պահպանվել Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին և Սարգսի Անեցուն հասցեագրած համակներում: Նույն այդ թղթերում հիշատակվում է կաթողիկոսարանի արժանավոր սպասա-

<sup>8</sup> Մատթեոս Ուղիայեցի, էջ 114 (հմտ. 1869 թ. նրան. էջ 122):  
<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Իր թղթերից մեկում Մագիստրոսը դիմում է կաթողիկոսին՝ գրելով. «Խել բաղադրանու մեր ... հրամանակ էիր ստարձ առ Ձեզ, զի ծառայեցն փոխանիդ Յիսուսիւ... Ես կարի լոյժ ուրախ եղեւ. վասն զի գառինքս այս ի բազ նովի վատահացայ և ի ներք տառվի լրամալ...» Գրիգոր Մագիստրոսի Թղթերը (աշխատասիրությամբ Կ. Կոտանյանի), Ալեքսանդրապոլ. 1910, էջ 18, 20;

վորոներից Ստեփանոս քահանան և կաթողիկոսի քարտուղար սարկավագներից մեկը<sup>11</sup>:

Կաթողիկոսարանն ուներ հարուստ դիման և մատենադարան: Հիշալ շրջանում այդ մատենադարան-գրատան տաօրինությունն իրականացնում էր Սարգիս վարդապետ Անեցին, որը 1041 թ. հիշատակարանում հայտնում է, թե «հայեցյալ խնամով ի գրանցին» աստվածաբանական նյութերի մի արժեքավոր ժողովածու է վերցրել արքունի գանձատնից և փոխադրել այդ գրանց, որպեսզի օգտագործվի ըստ իր նպատակի և ոչ թե մնա գանձատանը՝ «անայցելու»<sup>12</sup>:

Պետրոսի ժամանակ կաթողիկոսարանի գրչատան նշանավոր գրիչ Թաղենուից բացի այսուղև է աշխատել նաև Գեորգ անունով գրիչն ու կամարը, որը 1046 թ. մի ձեռագիր է ընդօրինակել հայրապետի պատվերով և նրա թելադրությամբ գրել ստացողի հիշատակարանը (Մատենադարան, № 988):

Բարսեղ Ա. Անեցու աթոռակալության տարիներին կրկին բարգավաճեց Անիի Աթոռը, վերաբացվեց նրա հոգեւոր դպրոցը՝ վարդապետարանը, որի ուսուցչապետությունը հանձնվեց մեծահամբավ Հովհաննես Սարկավագին: Վերջինիս մոտ ուսանելու էին գալիս Հայաստանի ամենաստարեր շրջաներից, սակայն դպրոցի աշակերտության մեջ թիւ չէին նաև անեցիները: Նրանցից մի քանիսին հշիտակում է Սամվել Անեցին՝ «տէր Խաչառուր և Գրիգոր և Յովհաննես և Սամուել ամեներանք սոքա անեցիր»<sup>13</sup>: Սրանցից Գրիգորը հետագայում դառնում է Անիի Կաթողիկեի ավագերեցը, որի դեմ փորձում է ճնշում գործադրել Փաղուն ամիրան, բայց հաջողության չի հասնում<sup>14</sup>: Ավելի ուշ Գրիգորին փոխարինում է Սամվել Անեցին, իսկ դարավերջին Կաթողիկեի փակակալն է դառնում պատմիչ և թարգմանիչ Միհիթար Անեցին: Կաթողիկոսական Աթոռի Անիից հեռանալուց հետո քաղաքի հոգեւոր-եկեղեցական կյանքում կարևոր դեր են կատարում եպիսկոպոսարանի եկեղեցին՝ Ս. Առաքելոցը, և Կաթողիկեն՝ Մայր տաճարը, որ սպասավորում են քաղմատիկ արժանավոր հոգեւորականներ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԲ ԴԱՐՈՒՄ

Անիի ԺԲ դարի պատմության մեջ քաղաքի հոգեւորականությունը եպիսկոպոսի գլխավորությամբ կարևորագույն դեր է կատարել, բայց այդ իրողությունը մեծ մասամբ անտեսվել է նախորդ ուսումնասիրողների կողմից: 1064 թ. ակչուկների գրավելու ու ավելիուց հետո Մանուչե ամիրայի տիրապետության շրջանում քաղաքն աստիճանաբար վերականգնվում է, իսկ Բարսեղ Անեցու եպիսկոպության և կաթողիկոսության օրոք՝ ԺԱ դարի 70-ական թվականներից, կարգավորվում է նաև եկեղեցական կյանքը: Սակայն ԺԲ դարը Անիի պատմության մեջ բնորշվում է որպես մի

<sup>11</sup> Սույն տեղում, էջ 17, 34:

<sup>12</sup> Կ. Մաթևոսան, Սարգիս վարդապետ Անեցի, էջ 40—41:

<sup>13</sup> Սամուել Անեցի, Հավաբանությ ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 128:

<sup>14</sup> Մեծին Վարդանաց Բարձրբնիդոյ Պատմութիւն տիեզերական, Սոսկա, 1861, 158:

Այսուհետև՝ Վարդան Արևելցի:

Խարբուրամյա պայքարի շրջան, որը մղում էին մի կողմից Ծեղդադյան ամիրաները՝ իրենց իշխանությունը պահպանելու, մյուս կողմից՝ զորացած Վրաց քաջալորները՝ քաղաքն ու նրա շրջակայքը գրավելու համար։ Խև ազատասեր անեցիները, խոհանավելով այս երկու քաղաքական ուժերի միջև, փորձում էին պաշտպանել սեփական շահները, հնարավորության դեպքում դառնալ նաև իրադրության տերը։

Խճշելու փաստերն են վկայում, Անիի քաղաքացիության այս ձգտումներն իրականացնող շարժման գորով կանգնած էր հայ հոգևորականությունը։ Դա ուներ մի քանի պատճառ։ Նախ, ինչպես կտեսնենք ստորև, անեցիների քաղաքական գործունը պայմանավորված էր հենց կրոնական խնդրի սրումով (1124 թ.): Երկրորդ քաղաքում բնակվող հայ ազնվականության փորբաժիկ Անրեկայցուցիշները իրենց գոյությունը պահպանում էին միայն շնորհիվ այն քանի, որ զինվորական ծառայություն էին կատարում Անիի ամիրաների մոտ և չեն կարող ազատորեն գործել։ Երրորդ հոգևորականությունն այդ շրջանում հայ հասարակության այն խավճան էր, որն ուներ որոշակի հարկացին ու այլ արտօնություններ և, ծողովորի մեջ մեծ հեղինակություն վայելելով, ի վիճակի էր առաջնորդել նրան։ Եվ վերջապես, իշշազ շրջանում (նաև հետագայում) Անիի եպիսկոպոսական Աթոռու զբաղեցնող անձինք, սերելով ժամանակի առավել գորեն ազնվականական տներից, ունեին ոչ միայն հոգևոր իշխանություն, այլև ընդարձակ ագգակցական կապեր, միջոցներ ու հնարավորություններ, որոնք և օգտագործում էին ցան անհրաժեշտության։

Սյամ Անրեկայցներ ասվածը հաստատող փաստերը։ Անիի Արքավակար ամիրան, որն այնքան էլ բարյացակամ չէր հայերի Ակատմամբ, Վիրավորում է նաև նրանց կրոնական զգացումները, երբ Խլաթում մի մեծ մահիկ պատրաստելով, բերում ու բարձրացնում է Անիի Կաթողիկեի գլխին։ Սելչուկները տաճարը մզկիթի էին վերածել դեռ 1064 թվականին, և Արքավարը փաստորեն միայն նին մահիկը փոխարինում է նորով, բայց քաղաքի գորացած հայ համայնքը այլև չի հանդործում այդ վիճակը և օգտագործելով նոր մահիկի տեղադրման առիթը, ընդգործ է քաղաքի տիրոջ դեմ։ Անեցիները դիմում են Վրաց Դավիթ Ծինարար թագավորին, որն արշավելով Անի, դյուրությամբ գրավում է այն, գերում ամիրացին իր ընտանիքով և հանդիսավոր ծեսով վերստին օծել տալիս եկեղեցին։ «Ամիրայն Անոյ Արքուար... ես քերել նաև ծանրագին ...և զնել ի վերայ գմբեթի Կաթողիկեին՝ Խոխարեն զնիշալն լուսացնոցն։ Վասն որոյ սրտառեալ քրիստոնէցն կոչեն զնաիթ և տան ի ձեռն նորա զրահաքն Անի։ Եւ ընկեցեալ զգենն ատելի ի պատուական գիխոյն Կաթողիկէին... եղին զպակն զարդու և զքագն Յիսուսի զիխաշն աստուածընկալը»<sup>15</sup>։ Դեպքերը Ակարագրոյն են՝ հայ պատմիչները (Վարդան Արևելցի, Մատթեոս Ուռիանցի) և յե՛կիրաց պատմագիրը շնչում են հատկապես Կաթողիկեի ազատագրման պարագան<sup>16</sup>։ Երկու տարի անց Վրացիները ստիպված են լինում Անիի վե-

<sup>15</sup> Վարդան Արևելցի, էջ 156։

<sup>16</sup> «Դավիթ Վրաց թագաւորը ...եւս զբագաւորաբնակ քաղաքն Հայոց զԱՅի... և զմեծ եկեղեցին Անոյ զՄուր Կաթողիկէն, զոր մարիթ էին արարել, ծողովեաց գեախսկոպոսումն և զքահանապ և զկրօնաւոր Հայոց աշխարհին և օրթեաց զՄուրը Կաթողիկէն մեծա հանդեսի և եղև ուրախոցին ամենայն Տաճա Հայոց, զի տեսին ազատալ զՄուր Կաթողիկէն ի ծառայութենեց», Մատթեոս Ուռիանցի, էջ 392: «Դավիթ թագավորը ... գրավեց

րադարձնել Ծեղադյաններին, սակայն վերջիններին հարկադրում են երդվել, որ այս Կաթողիկեի Ակատմամբ ուղղվություն չեն կատարի<sup>17</sup>:

Դրանից հետո հայ հոգևորականության դիրքը քաղաքում ավելի է ամրապնդվում: Խոսկով 1155 թ. Անիում ծավալված իրադարձությունների մասին, երեք արար պատմիշներ (Իրն ալ-Ասիրը, Ալ-Ֆարիկին և Այահին) զրեթե նոյն բառերով հետևյալն են հաղորդում. «...Անի քաղաքում Հայոց քահանաները ապստամբեցին և այն գրավելով ամիր Շաղադիդի համաձենցին եղբորը՝ Ֆաղունինի»<sup>18</sup>: Բայց ինչպես երևում է, այս ամիրան ևս անեցին սերի սրտով չի լինում, և 1161-ին նրանք վերջինիս վոնդում են քաղաքից: Ալ-Ֆարիկին այս մասին գրում է. «Անա (Անի) քաղաքում քահանաներն ապստամբեցին նրա տիրոջ՝ Ամիր Ֆաղունի իրքն Մանուչիրի դեմ, որը պարունակում ու գնաց Բարբան (Բագարան) կոչված ամրոցը Սուրմարիի մոտ: Քահանաները Անան հանձնեցին Ափխազաց թագավոր Քարբորին (Գեորգի): Նրա գորքը եկավ տիրեց, մեծ հարստություն կողովուեց...»<sup>19</sup>: Այս և Անախորդ վկայություններին անդրադարձ տումբասիրողները սովորաբար ընդգծում են, որ Անիի քահանաներ ասելով պետք է հասկանալ քաղաքի քրիստոնյաներին<sup>20</sup>: Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ եթե այս ժողովրդական եղոյթների շարժիք ուժու Անիի քրիստոնյամ հայ բնակչությունն էր, ապա նրան գիխավորողը՝ քաղաքի հոգևորականությունը: Այդ է պատճառը, որ արար մեղինակները միահամուռ շեշտում են քահանաներին («քահանաները ապստամբերին»): Այս իրողությունն ավելի է միմնավորվում ու հստականում 1161 թ. դեպքերի կապակցությամբ հայ մեղինակի՝ Միթթար Գոշի մոտ պահպանված վկայությունների շնորհիվ: Նա ճշում է, որ Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսն ու Սահիրայան ազնվականական տունը մերկայացնող նրա եղայլուները մի քանի անգամ հրավիրել են Գեորգիին՝ Անի գրավելու, բայց հետո (ինչպես երևում է, այն քանի հետո, եթե սեփական ուժերով վտարել են քաղաքի ամրիային), եթե Գեորգին արշավել է դեպի Անի, չեն ուզել քաղաքը հանձնել նրան: Վրաց թագավորը քաղաքը գրավել է բռնությամբ, ընդդիմացողներից շատերին պատժել, որոնց թվում՝ քահանաների ու կրտսավորների. «Ինչ Գեորգի իրքն թագաւորեաց... առնոյր և գրաղաքն Անի միանգամ և երկից կոչելով եպիսկոպոսին Բարսեղի և եղբարց նորա՝ որդոց Մագիստրոսին Հասանայ. և ապա ընդդիմացեալ ոչ տային ի ձեռն նորա գրաղաքն. և առեալ բռնաբար գրա-

քաղաքը ... կալանավորեց ու կոտորեց Ալֆասալյաններին, որոնք մզկիթի էին վերածել Անիի եկեղեցին... ժողովեց կարողիկոս-Եպիսկոպոսներին և օծումով այն նորոգեց»: Լ. Մելիքսեպ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և նայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 42—43:

<sup>17</sup> «Ինկ որդիբն Մանուչի արարին սաստիկ երդումն, վասն զի Սուրբ Կաթողիկենն ունասազ Հայոց կայց և մի՛ մոցէ ի ևս տաճիկ և ոչ մարման ազգ», Մատթեոս Ռուկանիցին, էջ 400: 1129-ին Փատուն ամիրան մի պատահական միջադեպից օգտվելով կալանում է Կաթողիկեի ավագերեց Գրիգորին և փորձում «ձեռնարկել ի Սուրբ Կաթողիկեն», բայց, ըստ պատմիչի, ամարելիվում ու խցուում է եկեղեցու բանահիներից դուրս եկած «հրակերպ արանց» կողմից ու հարկադրված ազատում Գրիգորին, նրա օրինանքը խնդրնով (Վարդան Արմենցի, էջ 158):

<sup>18</sup> Իր ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 257, 400, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 89:

<sup>19</sup> Հ. Մարգարյան, Եղվ. աշխ., էջ 101:

<sup>20</sup> Նոյն տեղում. էջ 99, Բ. Ալարելյան, Քաղաքները և արևետները Հայաստանում IX—XIII դր., հ. 2, Երևան 1964, էջ 165, և այլն:

դաբն և հրամայեաց աւար հարկանել և մերկացուցեալ զօրացն զամենեսեան զար և զկանալսն, գքահանայս և զկրօնատրս բազում անարգան ցուցանեին յաղագ ընդդիմանալով...»<sup>21</sup>:

Այստեղից միանգանացն որոշակի է դառնում, որ միջազ անցքերի ժամանակ, որպես անեցիների ընդհանուր շահերի արտահայտիչ, հանդես է եկել քաղաքի հոգևորականությունը իր եպիսկոպոսի գլխավորությամբ: Իսկ քաղաքորն ընդդիմացողներին պատմելիս թեև եպիսկոպոսին հրապարակայությունը չի դառնապարտել, բայց նրա ենթականությամբ քաղաքի բահանական շենքում գործում է լուսնելու այդ տեղեկությունը՝ Սնիի եպիսկոպոսի խաղացած կական դերը պարզաբանելով: Բնական է, որ քաղաքի քահանաներն ինքնագոյնին չեն գործում, այլ դեկազարկում էին իրենց հոգևոր պետի՝ Բարսեղի կողմից, որը, լինելով Սնիի այս շրջանի ամենաազդեցիկ ազնվականական տաճ զավակ, հետագայում ևս քավական ինքնուրույն գործունեություն է ծավալել<sup>22</sup>: Բավական է նշել, որ նա, իբրև «արքեպիսկոպոս քաղաքորանիստ քաղաքին Սնուր», «Եպիսկոպոս յարելու հիմստոր, համարվում էր Հոյոսիային Հայաստանի ողջ հայ հոգևորականության առաջնորդը, գլխավոր դեր կատարում Հոռոմկայի կաթողիկոսական Աթոռի հետ եղած հարաբերություններում, հանդես գալով դավանական անգիշողականության պաշտպանությամբ, իսկ 1195 թ. Սնիում կաթողիկոս է ձեռնադրվում: Հոռոմկայի Աթոռը, որ մեկ այլ դեպքում անհապաղ անօրինական կհամարեր նման ձեռնադրությունը, ձեռնապահ է մնում որևէ որոշում կայացնելոց:

<sup>21</sup> Հ. Մարգարյան, Աշվ. աշխ., էջ 101—102:

<sup>22</sup> Միսիքար Գոշի հայունած տեղեկությունը վկայաբերելով Հ. Մարգարյանն այն տեսականն է առաջ քաշում, թե «Գերգի Գ-ը եկել էր գրավելու Սնիի քաղաքացիների մի մասի Բարսեղով, որոնց գիտակորու են Հասանյան տոհմին պատկանող Բարսեղ արքեպիսկոպուսը և նրա եղանակները, սակայն քաղաքում գործում էր Հասանյաններին ընդդիմադիր այս խմբակցություն ևս, որը և նաղոթու հանդիսացավ և չէր կամենաւ հանձնել Սնիի Գերգիին» (Հ. Մարգարյան, Աշվ. աշխ., էջ 102): Մինչդեռ այլ ուսումնակրոններ գտնում են, որ նենց Բարսեղն ու նրա եղանակներն են իրենց մուսուրությունը փոխել (Նոյն տեղում, ծան. 60, Հ. Մանանցան. Երկեր, հ. Գ. Երևան, 1977, էջ 126): Ենքն համարին ենք այս տեսակինեն, բայց որ այն բնում է Գոշի բարձրից: Գերգիին ընդդիմացողներին պատժելիս աշխարհականների ներ անարգանքի է ենթարկել նաև հոգևորականների՝ «զրահանայն և զկրօնատրս», որոնք, բնականարար, չեն կարող հանդես գալ որպես ընդդիմություն՝ քաղաքի եպիսկոպոսի նկատմամբ (այդ դեպքում նրանք անմիջապես կարգադրությամբ): Հետևաբար, Վրաց քաղաքորին դիմակալելով նրանք կատարել են նենց իրենց նույն պետք և քաղաքի ողջ բնակչության միասնական կամքը: Սնիի բնակչության կարծեցար երկիրեկլամության մասին ոչ մի ակնարկ չտնի նաև նոյն դեպքը նկարագրող Գրիգոր Երեցը, բայց որի Գերգին գրավեց «զրաղաքն բնութեամբ և սպան մարդ հազար ընդ բրախտնեալ և ընդ պլազմի» (Մատուռն Ունիացին, էջ 474):

<sup>23</sup> Բարսեղ Բ. Սնեցու գործունեության մասին հանգանաներն տե՛ս Կ. Մարգարյան, Ամենապահ Հայոց կարողիկություննը..., «Եցմիածին», 1993, Ա—Բ—Գ, էջ 129—133:

Հոգենոր և եկեղեցական վերապարթունիք հետ միասին անեցիները ավելի համախմբված են դառնում: Հատկանշական է, որ 1186 թ. թեև քաղաքը գտնվում էր ամիրայական տիրապետության տակ, բայց անեցիները զենք վերցնելով հարձակում են գործում մահմեղականների կողմից զավթված և ավագակային որչ դարձած Ծառաքար ամրոցի վրա, գործում այն ու վերադառնում իր օրինական տիրոջը, որն այլ ոք չէր, քան Անիի եպիսկոպոս Բարսեղը<sup>24</sup>:

Այսպիսով, տևական պայքարի գնով անեցիները հասնում են այն քայլին, որ Ծեղդայանների տիրապետության վերջին շրջանում, ԺԲ դարի վերջերին, ոչ միայն լիակատար կրտսական ազատություն են վայելում, այլև ձեռք են բերում քաղաքական կշիռ ու հեղինակություն: Եվ այդ գործում կարևոր դեր է կատարում Անիի հոգևորականությունը:

### «ԱՆԻՈՅ ԵՐԵՑԱՆԻՒ» ԺԳ ԴԱՐՈՒՄ

1199 թ. երբ Անին վերջնականապես ազատագրվում է Ծեղդայանների տիրապետությունից և անցնում Զարարյանների իշխանության տակ, նկրսվում է քաղաքի երկրորդ խոշոր ծաղկման շրջանը, որը թեև 1236 թ. մի պահ ընդհատվում է մնանոլական ենթակաման հետևանքով, բայց այդ դաժան հարվածն անգամ անմիջապես չի կասեցնում Անիի զարգացումը և, ինչպես փաստերն են վկայում, մինչև դարավերջ քաղաքը շարունակում է որոշ զարգացում ապրել: Այս շրջանում են հանդես գալիս Անիի եպիսկոպոսներ Սպիրատի որդի Սարգիսը, Սրուղամբի որդի Գրիգորը, Ամիր Երկարի որդի Բարսեղը, Սարգիս Բ-ը, Միհրան Տեղերցին, Գրիգոր Բ-ը, Հովհաննես Ա-ը, որոնք ձեռներենց գործիչներ էին և ոչ միայն նպաստում էին եպիսկոպոսական Աթոռի զրացմանը, այլև համապատասխան կանոնագիր արձանագրությունների միջոցով կարգավորում քաղաքի ենթամայնքային կյանքը:

Անիի քահանապատճեն դասը, որն, ինչպես տեսանք, ԺԲ դարում արդեն համախմբված ուժ էր ներկայացնում, ԺԳ դարի մի շարք վիմագրերում հանդես է գալիս երեցանի (Իրիցանի) ընդհանուր անվանմամբ<sup>25</sup>: Արդեն նշել ենք, որ քաղաքաթիվ եկեղեցիների քաղաք Անիում բնականաբար նաև մեծ թվով քահանաներ կային: Քահանաներն ու հրանց ընտանիքի անդամներն իրենց հովանավորության տակ գտնվող ազգականների հետ միասին բավական խոշոր սոցիալական խավ էին կազմում, ուստի պատահական չէ, որ ունենի իրենց ուրույն շահերը:

<sup>24</sup> Վարդան Արևելցի, էջ 174:

<sup>25</sup> Ժամանակին Բ. Առաքելյանը և Ս. Ավագյանը նիմնավորապես ապացուցել են, որ Ն. Մատն ու Արամ Ռատոնեանը կամ Սպիր մի շարք արձանագրություններում նշվում «երեցանին նոյնացնելով քաղաքի ավագանու հետ» (Բ. Առաքելյան, Եշվաշխում, էջ 155—173, Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարձնություն, Երևան, 1978, էջ 105—109): Այս իրողության ամենայն է Թ. Հակոբյանը, որն իր «Անիի Պատմության» մեջ երեցանին ավագանի է համարում (Թ. Բ., Երևան, 1982, էջ 118, 292): Ավագանին քաղաքային ինքնավորության մարմնի էր, որը գործում ուներ նաև Բագրատունաց շրջանում «զիակատը քաղաքին» անվանումը, իսկ նույսապահ ավելի մեծ դեր էր խաղում, կազմական լինելով աշխարհիկ ու հոգևոր քարձրաստիճան, եթինակավոր գործիչներից: Մինչդեռ երեցանին Անիի քահանապատճեն դասը էր, որի գլուխ կանգնած էր եպիսկոպոսը:

Սնիի երեցանին, որպես մի միասնառյուն, առաջին անգամ այդ անվամբ հիշվում է Սարգիս Ա Կպիսկոպոսի 1220 թ. արձանագրության մեջ, որ վերջինս, վերացնելով քաղաքում երեցենոց մահվան ժամանակ գանձվող հարկը, նշում է, թե այլև ոչ ոք իրավունք չունի այն պահանջել «իրիցանոց»<sup>26</sup>: «Երեցանի» բառը հանդիպում է նաև Սարգիս Բ Կապիսկոպոսի ամուսնական հարցերի կարգավորմանը նվիրված թերի ըներցվող արձանագրության մեջ<sup>27</sup>:

1269 թ. Սնիի տաղմանձնելերը (հարկահավաքները) եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու արձանագրության մեջ հայտնում են, որ իրենց պարուների «երկարկենանության» համար Սնիի երեցանին ազատում են բաժ հարկից: «Ընորհին Սատուծոյ մեք տաղմանիքս ...քարձաք ի յԱն իրիցանուս զբաժն, զոր ի սկզբանէ ազատ էք. Մեք վերատին այլ հաստատեցաք, չունի ոք իշխանութիւն բաժ ուզել ու ոչինչ ազգ ով իցէ, որ կապէվոր լինի...»<sup>28</sup>: Այսուեղ կարևոր է նաև այն նշումը, որ Սնիի երեցանին ի սկզբանէ ազատ է եղել բաժից: Սակայն մոնղոլ իշխողների ու նրանց կապալառուների հարկահավաքությամբ հարատանալու մոլուցք կարճ ժամանակ անց նորից է կախման մեջ դրել քաղաքի քահանաներին: Ս. Առաքելոց եկեղեցու 1280 թ. արձանագրության մեջ ազպում է. «Ես Նորայդին Քոթիս իմ ընկերաւքս եկի յԱնի տաղմիս վերայ, տեսայ զԱնոյ իրիցանուս զի առելիսին հրամանքն որ ի սկզբանէ բաժ ու տամդա չեին տվել, ես այլ հաստատեցի իմ ընկերաւքս, որ ոչ բաժ տան ոչ տամդայ»<sup>29</sup>: Որոշ ժամանակ անց Սնիի երեցանու շիարկվելու իրավունքը կրկին անտեսվել է: 1280-ական թվականների վերջերին, քաղաքի պարունարյունը վերատին ստանձնելով, Զաքարյանները նորից են երեցանին ազատել հարկից: Ս. Առաքելոցի 1289 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «...ես պարոն Աղքունակ որդի ամիրապատլար Չաշնշահի, թոռն մեծին Զաքարիայի եւ ես պարոն Թամարս, դուստր իշխանաց պարոն Բոլոտային տեսաք զԱնո Արքոս եւ զիրիցանիս, որ հարկ կեր ի վերենին, զոր մեք նախ...»<sup>30</sup>: Թեև արձանագրությունն անավարտ է, սակայն ակնհայտ է, որ նրա շարունակության մեջ քաղաքի նոր պարուները նշել են հարկը վերացնելու կամ առնը-վազն նվազեցնելու մասին:

Սնիի երեցանու ունեցած հեղինակության մասին է վկայում Գրիգոր Բ Կապիսկոպոսի 1277 թ. արձանագրությունը, որը նաև սահմանելով ամուսնալուծության ժամանակ կողմերից լուրաքանչյուրին տրվող գույքի չտափը, հայտնում է, որ որոշումը կայացրել է քաղաքի պարոնի և քահանաների կամակցությամբ («...կամակցութեամբ պատրոնին Փախրադինին եւ քահանայից քաղաքացէացս...»)<sup>31</sup>:

Այսպիսով, Սնիի քահանայական դասը ԺԳ դարի արձանագրություններում հանդես է գալիս «երեցանի» ընդհանուր անվանման տակ, որպես որոշակի արտոնություններ ունեցող սոցիալական խավ: Այն թեև չի կարո-

<sup>26</sup> Դիմում հայ վիմագրության, պր. Ս. Սնիի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 17:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>30</sup> Դիման..., էջ 22:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 15: «Երեցանի» բառը պահպանվել է նաև Սնիի պեղումներից գտնված մի արձանագրության թնդորի վրա (Նույն տեղում, էջ 75):

դանում ամբողջովին խուսափել մոնղոլական տերության մեջ հարկահավաքության ասպարեզում տիրող կամալականություններից, սակայն շարունակ պայմանագրում է իր իրավունքների պաշտպանության համար և, դատելով առկա փաստերից, նիմնականում հաջողության հասնում:

Այս դարաշրջանի Անիի եկեղեցական կյանքի հետաքրքիր երևոյթներից մեկն էլ ճրա քահանաների պայմանական բաժանումն էր բնիկների ու եկվորների: Այդ մասին են վկայում մի քանի վիմագիր արձանագրություններ: «Եկվորների» բոսքը հավանաբար սկսվել է հենց ԺԳ դ. սկզբին, երբ Զաքարյանների տիրապետության տակ անցած քաղաքը բուռն ծաղկում է ապրում, և կորուկ մեծանում է ճրա բնակչության թիվը: Նման պայմաններում բնիկ անեցիներն ամեն կերպ աշխատում էին ընդգծել իրենց տեղացիությունը: Օրինակ, 1211 թ. Հաղբատում կրթություն ստացած Սահակ քահանան իր պատվիրած Ավետարանի հիշատակարանում շեշտում է, որ «ազգով և տոհմով» անեցի է («Մահակ... ազգաւ եւ տոհմի ի մեծ մայրաքաղաքն Անոյ...»)<sup>32</sup>:

Անիի երեցանու՝ ըստ տեղաբնիկության սկզբունքի բաժանվածության մասին վկայող առաջին վավերագիրը Սարգիս Ա եպիսկոպոսի վերը նշված 1220 թ. արձանագրությունն է: Այսուեղ «զամենայն քաղաքի քահանախց» ընդհանուր ձևակերպումը հետագա շարադրանքում մասնավորեցվում է «զփարթամաց եւ զաղքատաց, զեկաց եւ զբնակաց...»<sup>33</sup>: Ուշագրավ է, որ եկվոր և բնիկ (զեկաց եւ բնակաց) քահանաներից բացի նշվում է ճրանց ևս մի բաժանում՝ ըստ սոցիալական վիճակի՝ ուներթների ու չուներթների (զփարթամաց եւ զաղքատաց), ինչպես որ այդ արված է ԺԳ դարի մեկ այլ արձանագրության մեջ («...զԱնո քահանախց» զմեծի և զփ[ոքրաւ]որաց...»)<sup>34</sup>: Սարգիս Բ եպիսկոպոսի Ս. Առաքելոց եկեղեցում թողած մի արձանագրության մեջ նոյնպես ընդգծվում է Անիի երեցների տեղացի և եկվոր լինելը: «Ես տէր Սարգիս եպիսկոպոս... [ի]րիցանու՝ զեկաց եւ զբնակաց...»<sup>35</sup>, իսկ քաղաքի պեղումներից գտնված մի քարարեկորդի վրա ընթերցվում է «զՄարկոս երեց բնական...»<sup>36</sup> արձանագրության հատվածը:

(Ծարունակելի)

<sup>32</sup> ԺԳ դարի նալերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմեց Ս. Մաթևոսյան), Երևան, 1984, էջ 71:

<sup>33</sup> Դիվան..., էջ 17:

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 20:

<sup>35</sup> Նոյն տեղում, էջ 25:

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 56:

## ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ\*

### 16. ՍԱՂԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՒԻ ՎԱՆՔ

Սյս վանքից մեզ հասել է ընդամենը մեկ հիշատակարան, որի հիման  
վրա Ռուբանն այն դասել է Եղբակայի վանքերի շարքում, քանի որ այդ հի-  
շատակարանում խոսվում է ոչ միայն վանքի գոյության մասին, այն էլ  
դեռև 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին, այլև ցոյց Է տրը-  
փում, որ այն եղել է մշակութային կենտրոն: Ակնարկված հիշատակարանը,  
գրած 1413-ին, սկսվում է այսպես. «Արդ գրեցա... ձեռամբ Սամուչի...  
գրչի ի գաւառի Եկեղեց ի սուրբ ուխտու որ կոչ Սաղի սուրբ Ստեփանու՝  
ընդ հովանեաւ սուրբ Նախավկայիս... հրամանաւ Մարգարէի աստորածամի-  
րի առաջնորդի անապատիս, ծախիթ և արդեամբ Ոնոփրիոսի աւագ սար-  
կաւագի և Պետրոսի կուսակրօն արեղի և Յակոր կրօնաւորի...: Արդ գրե-  
ցաւ սա ի թուականիս Հայոց ՊԿԲ (1413) ի հայրապետութեան տեառն  
տէր Գրիգորի արքապիսկոպոսի...: Արդ (յիշեցէք) ...զատացող տափս  
զՄնոփրիոս աւագ սարկաւագն զհայր վանաց, որ եղ ի դուռն սուրբ Կա-  
րապետիս լիշտառակ անջինչ...: Արդ յիշեցէք յահօթս ձեր զհայր Ոնոփրիոս  
և գեղբայրն իր զՖիքատոր արեղան և զհայրն իր զԴայիթ զհանգուցեալ-  
սըն ի Քրիստոս և զմայրն իր զՍիմայն...յիշեցէք և զՊետրոս արեղան, որ  
օգնական եղև ի գորոց գրելէն ԳԾ դրամ...: Յիշեցէք և զՅակոր արեղան  
զփակակալն... ընդ նմին յիշեսցիք... զատացնորդ սուրբ անապատիս զսուրբ  
Ստեփանոնու Նախավկայիս զհայր Մարգարէ, որ բազում երախտիք ունի  
առ մեզ և յորդորեաց ի բան յայսմիկ և հանգոյց... և զամենայն եղբայ-  
րութիւնս առնասարակ: զՅովկաննես կրօնաւորն զհոգեսոր հայրն մեր, որ  
բազում աշխատութանք սնույց և ուսոյց զիս և նա եղև պատճառ այսմիկ և  
զօրինակն շնորհեաց և զծնույն... և զքուերդիս զՃամբիարն որ զգիրքս  
զիսաւորեաց և զԿարապետն»<sup>72</sup> և այլն:

\* Ծարտակված «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի Թ—Ժ—ԺԱ. միացյալ, ԺԲ և  
1993 թվականի Ա—Բ—Գ, Է—Ը միացյալ համարներից:

<sup>72</sup> Ա. Ս. Խաչիկյան, ժԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ա. նաև, էջ  
153—156:

Հիշատակարանից երևում է, որ Սաղի Ս. Ստեփանոսի վաճքը ունեցել է մեծ թվով միաբաններ, նաև կարող վանահայր: Նրան՝ Մարգարեհին, հիշելին ասվում է, թե նա մեծ ծառայություններ է մատուցել վանքին ու միաբանությանը, նորդորել է գրել այդ ձեռագիրը, թե նրան շատ բան է պարտական «զամենայն եղբայրության առհասարակ»:

Նույն այս հիշատակարանից իմանում ենք, որ գրիչ Սամուելի քեռորդին էլ ըստ երևությին եղել է ծաղկող և գրել է ձեռագրի սկզբանատերը:

Բայց ե՞րբ է պատմության ասպարեզից անհայտացել նման մի վաճք, որ իր ժամանակին ունեցել է այդքան համբավ: Այդ ի՞նչ ուժ է եղել, որ երկրի երեսից շնչել, խապան մոռացության է մատնել մի սրբատեղի, որ մարդիկ չեն էլ իմացել, թե նման մի վաճք գոյություն է ունեցել:

Երգնակայի վանքերի մասին գրողներից ոչ մեկը ոչ Կ. Ղազանջյանը, ոչ Ս. Ամատյանը և ոչ էլ Գ. Սյուրենենյանը այն շեն հիշում անգամ հանգած վանքերի շարքում:

Այդպիսի ավեր չեր կարող գործել մարդ արարածը, որքան էլ լիներ դաման, գազանարար բնազդի տեր: Ամենայն հավանականությամբ մեծ երկրաշարժերից մեկի ժամանակ է, որ հիմնահատակ կործանվել է:

Այս առիթով ուզում ենք անել մի ենթադրություն. Երգնակայի վանքերից մի բանիս ունեցել են երկու, երբեմն երեք անուն: Հնարավոր է, որ Սաղի Ս. Ստեփանոսի վաճքի գործունեության մի մասը հիշատակված լինի մեր մատնահագության մեջ որևէ այլ վանքի առիթով:

## 18. ԶԱԳՐՄԱՆԻ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ.

Գտնվել է Զագրման գյուղի մերձակալքում, Քեշիշ Դաղի սարի լանջերին, փոսի մեջ, Երգնակայի հյուսիս-արևելյան կողմը: Քարաշեն և փոքր եկեղեցի է եղել, ունեցել է առողջ օդ, սառը ջրեր:

Ամատյանը այս վաճքի մասին գրում է «Զագրմանը կը համարիմ Զարիսափան բատին աղավաղությունն. վանքին մոտիկ փոքրիկ՝ իսկ ավելի վարը բավական մեծկակ՝ երկու թուրքաբնակ գյուղեր սույն անվամբ կը կոչովին, մեծ Զախսրմանու մեջ կա Ս. Աստվածածին անվամբ հին եկեղեցյակ՝ որ ի Մարագ փոխարկյալ է: Այս վաճքը կը գտնի դաշտին միշտ հյուսիսակողմն, Քեշիշ բարձրաբերք գագաթին առջև, սարահարթի կամ լեռնատափի վերա, որ ողղաձիգ, բարձրացած է դաշտեն և ունի խիստ դժվար վերելք: Օդն, տևարանն ու դիրքն աննման, քանի որ խիստ բարձր է և կը տիրե դաշտին ամբողջ միջավայրին, որ սփռված են ցրիվ բազմաթիվ գյուղեր, և հանդիպակաց լեռնեց (Մերձան, Ղազան Ղայ) և նոցա օժանդակ սարերու և լեռնակոհակներու և որ ի նոսա տարածյալ գյուղերու և Վանուց: ...Հանդեպ գյուղին, արևելյան կողև և հինգ վայրկյան հեռավորությամբ կը գտնվի փոքրիկ, քարաշեն ու կամարակապ այլ կիսակործան մատու մի և նմին կից դարակալոր ածուներ, դերբուկ և ավերակաց մնացորդը: Մի բանի տարի տառաջ առաջ այս մատուն իրեն գոմ կը ծառայեր և վանուց սակագի արտերն հանձնված էին թորք վանապահի մի և ամենաշ վանուց ալ պիտի մոռցվեր, երբ Հմայակ եպիսկոպոսի առաջնորդության անուն ալ պիտի մոռցվեր, երբ Հմայակ եպիսկոպոսի առաջնորդության օրու վանուց օթարանն և արտերն հայ վանապահի հանձնվեցան, գրավ-յալ արտորեից մի մասն հետո առնվեցան, վանուց կարասիբն ու սպասներն, որք ի պահ դրված էին՝ հավարվեցան, հանգանակությամբ ուրիշ կարևոր

պիտույք ձեռք բերվեցան, և այսօր վաճքն՝ եթե ոչ կատարյալ վիճակ՝ գեթ նորա սովոր ունի: Եկեղյաց գավառի մոխ վաճքերն մին էր երբեմն այս, որ ամենն ավելի ստարկա եղած է հարձակման և հափշտակությանց, Դերջանա ու Բարերդու միջև որչացյալ քրդաց մոտ և ի լեռնավայրի գտնվելուն համարը<sup>73</sup>:

Սրանք են մեր ունեցած տվյալները Զագրմանի Ս. Պողոս-Պետրոս վաճքի մասին:

Հ. Ուկյանի հիշատակած Յ4 վաճքերից քննության առանք 18-ը, առավել վավերական գործունեություն ունեցողները: Մնացածների վերաբերյալ ներ տեղեկությունները սակավ են և հակասական, եթե չասենք մի քանիշը նաև ոչ իրական: Դրանց մի մասի ոչ հիմնադրման ժամանակն է հայտնի, ոչ էլ կրթական, մշակութային դերը: Պարզապես հիշատակվել են բանասերների կողմից որպես Երզնկայի վաճքեր, նենվելով տեղանունների կամ ավերակների վրա:

Մի քանիշն էլ պարզապես թյուրիմացությամբ են արձանագրված Հ. Ուկյանի մոտ: Օրինակ՝ Խշողի վաճքը: Հենց Ուկյանն էլ է կասկածում, որ դա նոյն Ծողա վաճքն է, բայց դրանով հանդերձ հատուկ թվարկումով դասել է Երզնկայի վաճքերի շարքը: Կամ Հերմոնի վաճքը, որ Ծլեմոնի վաճքն է, բայց հիշատակված է առանձին:

Քանի որ մի քանի վաճքեր իսկապես անցյալում գործել են, բայց հետագայում ավերվել կամ ամայացել, իսկ դրանցից մեծ մասի տեղերն էլ որոշակի են, ավելորդ չենք համարում շատ հակիրճ տողերով հիշատակել նաև այդ վաճքերը:

## 19. ԱԿՆՋԻ ՎԱՆՔ

Այս վաճքի անունը մեզ հասել է միայն մի հիշատակարանից, գրված 1599-ին: Առա այդ հիշատակարանը. «Զվերշին կազմող Աստուածաշունչ գրքիս գուեր Կիրակոս արեղայու և Յակոբ գրոց աշակերտու... կազմեցաւ գիրք ի դառն և ի նորր ժամանակին վասն անօրէն տաճկացն, անողորմ կողոպտէն գքրիսասոննեալքը, օրն անգամ մի ի լայրս և ի ծերպս վիմաց փափաք, հազին կարացանք համել զգիրք, թվ. ՌԽԸ (1599) յԵկեղեց գաւառի ի յԱկընջին վաճք, ի տէր Կիրակոս Հարպետէն և այլ միաբանիցն. ամէն»:

Ուրեմն վաճքն ունեցել է միաբանություն, մարդիկ գրադաւել են գրչագրությամբ, այն էլ 16-րդ դարի վերշերին և 17-րդ դարի սկզբներին:

## 20. ԱՆԱՐԾԱԹ ԲԺՇԿԱՑ ՎԱՆՔ

Հիշատակում են մի շարք բանասերներ Երզնկայի մյուս վաճքերի շարում, առանց որևէ ճշգրիտ տեղեկություն տալու: Կ. Ղազանճյանը տեսել է նրա ավերակները, որը վկայում է, որ անցյալում իրոք այդպիսի վաճք գոյացյուն ունեցել է: Բուժական նպատակով մարդիկ ոխտի են գնացել այն-աեղ մինչև մեծ եղեռնը:

<sup>73</sup> «Արևելյան մամուլ», 1887, էջ 52—53:

## 21. ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՆԻՆ ԿԱՄ ՀԱՐԽԱՓԱՆԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երգմկայից երկու ժամ հեռու, Չախըրմաճ գյուղի մոտ: Հիշատակվում է Պ. Նաթանյանի «Արտոս Հայատանի» և Գ. Այուրմենյանի «Երգմկա» գրքերում, որպես հանգած վանք, ուխտատեղի:

## 22. ԳԱՌՄԻԿ ՃԳՆԱՎՈՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երգմկայի Տաճրակ և Շրգմի գյուղերի մոտակալքում: Գտնիկ ճգնավորի մասին հիշատակել են մեր պատմիչները՝ (Խորենացի, Սամվել Անեցի և որիշներ): Ըստ ավանդության ապրել է 4-րդ դարում: Հետեւաբար նրա անունը կրող վանքն էլ պիտի որ շատ հին լիներ, սակայն ժամանակի ընթացքում կործանվել է: Ժողովուրդը ցոյց է տվել նրա ավերակները, որոնք ուխտատեղի են եղել հավատացյալների համար:

## 23. ՍՈՒՐԲ ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔԵՐ

Այս անունով Երգմկան ունեցել է երեք վանք, մեկը՝ Կեղզուտ գյուղում, մեկը՝ Հանդիսում, երրորդը՝ Երկան գյուղի Ս. Գևորգի վանքի մոտակալքում: Երեքն ել վաղուց դադարել են գործելուց և մեր մատենագրության մեջ ել չեն հիշատակվում:

## 23. ԽԱՇԿԱ ՎԱՆՔ

Կոչվել է Աաև Տիրաշեն, բայց բոլոր բանասերներն էլ գտնում են, որ շպետք է շփորել Տիրաշեն Ս. Ներսեսի վանքի հետ: Տ. Պալլանը գրել է: «Մենք ինքնին համոզում մը գոյացուցինք, թե ասոնք առանձին առանձին վանքեր պիտի ըլլան»:

## 24. ԽՆԴՐԱԿԱՏԱՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՆԻՆ ՎԱՆՔ

Գտնվել է Մարեք գյուղի մոտ, կոչվել է Աաև Խամեկատուր Ս. Աստվածածին: Վանքի ամայացումից հետո նրա հողերն օգտագործել են Մարեք գյուղի բնակիչները:

## 25. ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵՏԻ ՎԱՆՔ

Երգմկայի ամայացած վանքերից է. գտնվել է քաղաքից երեք ժամ հեռու. Սրկաթող գյուղի մոտ, որի անունն էլ անշուշտ առաջացել է Սուրբ Կաթողիկե բառերի աղավաղումից: Մի հիշատակարանի ժլատ տվյալներից երեսում է, որ այս վանքը անցյալում եղել է շեն և մշակութային կենտրոն, որտեղ գրվել են ձեռագրեր «ի մայրաքաղաք յԵրգմկայս, ընդ հովանեաւ սուրբ Կաթողիկէիս աստուածաբնակ տաճարիս»:

## 26. ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍԻ ՎԱՆՔ

Այս վանքի հիշատակությունը գտնում ենք բազմաթիվ բանասերների մոտ՝ Ղազամճան, Ամատյան, Ալիշան, ևան Դարանաղի և որիշներ, տակայն ոչ մեկը որոշակի ոչինչ չի ասում նրա անցյալի մասին։ Ասում են միայն, թե գտնվում է Երզնկայի արևմտյան կողմում, Կապոսի վանքի մոտերքը, Մելուն լեռան լանջերին, թե այս վանքում, ժԳ դարում սպառել է Հովհաննես Երզնկացին։ Եթե ճիշտ է վերջին փաստը, Եշանակում է Ս. Մինասի վանքը մասնակիցն է Երզնկայի 12—13-րդ դարերի մոտավոր զարդումիքի։ Տ. Պալյանը գրում է. «Այս վանքը այ ի վաղոց անցած է ի շարու շաբաթացյալ հայ վանորեից և այժմ բեկորները կնշանարվին։ Անշուշտ նիւմա այդ բեկորներն ել չկան։»

## 27. ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ

Ումանց կարծիքով եղել է Երզնկայի հնագույն վանքերից։ Գտնվել է բաղադրի հյուսիսային կողմում, Ախորձը գյուղի մոտ։ Կոչվել է նաև «Պաղ ապուրի վանք», «վասնզի մեծ պահոց առաջին լոթենեկին շաբաթ օրը հոս կայցելեին ոխտավորները։ Միմիայն պաղ ապուրով կգոհանային»։ Նշանակում է, եղել է սիրված ոխտատեղի։ Զպեսք է շփոթել Սրբիվը սուրբ Թորոսի վանքի հնու։ Կան որոշ հիշատակություններ, որոնց համաձայն 14-րդ դարում ունեցել է գրչագրական գործունեություն։

## 28. ՓՈՐՉԱՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայի Ղոլիշան կամ Գուգուչան գյուղում։ Հնուց բանդըվել է և դարձել ոխտատեղի։

## 29. ՔԱՌԱՍՈՒԽ ԽԱՉԵՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Մբնդոր (Սուրբ Գրիգոր) լեռան ատորոտում, դեպի Տրապիզոն տանող ճամփին։ Վաղոց բանդված է եղել, թեև մինչև 19-րդ դարի վերջերին օշարակել են ավերակներ։

## 30. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայի և Տաճրակի միջև։ Անցյալում եղել է քարաշեն ու կամարակապ գեղեցիկ վանք, որ բանդվել է վաղոց և քարերը օգտագործվել են Եփրամի վրա ձգված կամուրջի համար։ Տ. Պալյանը այս վանքի մասին գրում է. «Տաճրակ անոն գյուղեն կես ժամո՞ւ չափ հեռի, Պրատիկ անոն գյուղի հարավ-արևմտյան կողմն է և անցած է ի շարու շաբաթացյալ հայ վանքնրու, թեև ասկից 40 տարի առաջ վանքին և իր միջի քարաշեն ու կամարակապ տաճարին կանգուն ըլլալը գիտցողներ կան»։

## 31. ՍՈՒՐԲ ՕԳՄԵՆՏԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երգմկայից երեք կամ չորս ժամ մեռու, Կարմիր աճուն գյուղի մտակայրում: Տեղացիների հավատիացմամբ անցյալում կոչվել է Օգոստոսի վաճք: 19-րդ դարի վերջերին դեռ ավերակները պահպանված են եղել:

\* \* \*

Մենք մանրամանորեն խոսեցինք Երգմկայի վաճքերում կատարված մշակութային աշխատանքի մասին: Հիշատակվեցին բազմաթիվ գրիչներ, ծաղկողներ, մանրամարիներ: Չխոսեցինք միայն այդ վաճքերի ճարտարապետական արժեքի մասին:

Երգմկան այս բնագավառում պարծենալու թիվ բան ունի: Ծարտարապետական այնպիսի կոթողների, ինչպիսիք են Զվարթնոցը, Հոփիսիմեն, Աղթամարը, Հաղբատը, Սանահինը, Ամին Սոռքելոց եկեղեցին, չենք հանդիպում Երգմկայում:

Անցուած դա պիտի բացատրել առաջին հերթին շինանյութի հնարապորոշյամբ: Արևելյան Հայաստանի տոփը, ըստիր բազալտը մեծագույնել են հայ ճարտարապետներին ստեղծելու այնպիսի կոթողներ, որոնցով հիացել են բոլորը, որոնք զարմանը են պատճառել Արևմտստքին:

Երգմկայի դաշտավայրը չի ունեցել առհասարակ քարի որևէ շտեմարան, պատած է եղել համատարած հողով, որի միջով հոսել է Եփրատը: Անգամ այն վաճքերը, որոնք շինված են հեռու վայրերից բերված քարերով, չունեն այն վեհությունը, որ ունեն Արևելյան Հայաստանի վաճքերը:

Կա վկայություն, որ հենց Գր. Լուսավորչի օրերին կառուցված եկեղեցիների մի մասը փայտու են եղել:

Շինանյութի պակասին պիտի վերագրել այն փաստը, որ Երգմկայուն միայն հեթանոսական կրոնից քրիստոնեության անցնելու շրջանում է նկատվում հին տեղում նոր վաճքերի, եկեղեցիների կառուցումը, մի բան, որ ըստհանուր էր նաև Արևելյան Հայաստանում, այլ հենց միջին դարերում էլ մարդիկ հազվադեպ են նոր վայրերում աղոթաւելիներ կառուցել: Հնի տեղում են կառուցել, օգտագործելով քանդվածի շինանյութը, առաջին հերթին քարը:

Քարի պակասի թելադրանք է եղել նաև այն, որ չնայած մուտքման տիրապետողները սրբատեղիների նկատմամբ որոշ հանդուրժողականություն են ունեցել, արդյունք նախապաշարումների, սակայն կառավարական շատ շինությունների, կամուրջների համար օգտագործել են մեր հին վաճքերի փլատակներից հանված սրբատաշ, նաև անուած քարերը: Երբեմն էլ քանդել են անգամ կանգուն եկեղեցիներ կամ վաճքեր: Եվ եթե այնուամենայնիվ որոշ վաճքերի փլատակները հասել են մինչև մեր օրերը, ապա դրանք եղել են այնպիսի անմատչելի վայրերում, որտեղից քարեր տանելը դրդվագիր կամ անհնարին է եղել:

Բանասերները վկայում են, որ իրենք թուրքական ոչ միայն հման կառուցների վրա, այլև սլվորական բնակարանների, անգամ գումբերի պատերին տևած են հայերեն շատ հին արձանագրություններ ունեցող սրբատաշ քարեր, հավանաբար սալով բերված որևէ հայկական վաճքի ավերակներից:

\* \* \*

Քանի՞ վաճք է ունեցել Եկեղյաց գավառը: Անհնար է այս հարցին Եշդիտ պատաժան տալ, բայց որ անհամեմատ մեծ թիվ պիտի լինի, քան մեզ հայտնին է, կասկածից վեր է: Երգմկայի շրջակայրում կան բազմաթիվ անուններ, որոնք ինքնին հուշում են անցյալում սրբատեղիներ լինելը, ինչպես Սրբնոր, Տաճրակ, և այլն: Ս. Ամատյանը գրում է, որ գյուղական սովորական շինարարությունների, անգամ վարուցանքի ժամանակ երկացել են հնում կառուցված տաճարների հետքեր, գերեզմանաբարեր, արձանագրություններ, այն էլ այնպիսի վայրերում, որտեղ բացառապես ապրելիս են եղել թուրքեր կամ քրդեր:

Որոշ հին վաճքեր էլ, մոտակա գյուղերի բռնի թուրքացման կամ թուրքերով վերաբնակեցման պատճողով դարձել են մահմեդական սրբատեղիներ, անգամ արաքերեն արձանագրություններ են գրվել: Այդպիսի մի մասուն կա Դերջանի Մամախաթուն կենտրոնում, կա Անի Կամախում, այդպիսին է դարձել Գառնիկ ճգնավորի վանքը, որը 19-րդ դարի սկզբներից եղել է թուրքական սրբատեղի և կոչվել Սովորան Սեփի...

Ս. Ամատյանը պատմում է, թե ինչպես թուրքերը հորինել են մի ամբողջ վավանդություն վերոհիշյալ թուրք սուրբի մասին և պատմում են սրբատեղիի պահակները: «Չի գիտցվիր թե,—գրում է Ամատյանը հումորով,— Գառնիկ ճգնավորի և Սեփի սովորանի միանգամայն վերաբերյալ այս քնարակին մեջ ո՞ ի սոցանե կեցնե արդյոք»:

Գոյզէ ոչ մեկը, բայց որ սրբատեղին եղել է քրիստոնեական, հայկական և Գառնիկ ճգնավորի մասին էլ խոսում է Խորենացին, փաստ է:

Այն վաճքերը, որոնք կառուցված են եղել անմատչելի վայրերում, կամ առհասարակ մարդկային բնակավայրերից հեռու, քարաժայուների վրա, անդընդախոր ձորերի լանջերին, համեմատաբար գերծ են մնացել ավազակալին հարձակումներից, քանդումներից: Դրանք չեն կարողացել դիմանալ միայն տարերային աղետներին, առաջին հերթին երկրաշարժներին, իսկ այն վաճքերը, որոնք կառուցված են եղել մեծ ճանապարհների մոտ, օսմանյան տիրապետության շրջանում աստիճանաբար օղակվել են թուրքելով, կուլ գնացել իրենց հավատացյալ ծիսերով:

### ԵՐՁՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻ ԱՍՏԻՇԱՆՍԱԿԱՆ ՇԻՋՈՒՄԸ

Օսմանյան կայսրության 500 տարիների ընթացքում մեր վաճքերն աստիճանաբար փոխել են իրենց կոչումը՝ դառնալով ոխտագնացության կենտրոններ:

Գր. Դարանադցին ակնհայտնի վրդրվումներով խոսելով Սեպուհ սարի լանջերին գտնվող վաճքերի մասին, գրում է. «Որ և այսօր տակային դեռ այնպէս են մեր վաճքերը լԱրգրումն ի վայր, կանանց տունք և քրտառունք են, ոչ մշտնշենաւոր ժամակարգութիւն, ոչ պատարգ, ոչ կարգ, ոչ կրօնք և ոչ սաղմուերգութիւնք»<sup>74</sup>:

Դարանադցին իր գրքի մի էջում, ընդհանրացնելով հարցը, գըտնում է, որ ոչ վարդապետներն են կանգնած իրենց կոչման բարձրության

<sup>74</sup> Գր. Դարանադցի, էջ 78:

վրա, ոչ քահանաները: Երզնկայի քահանաները, ասում է նա, աշխարհական մեծամեծների նետ սեղան են նստում և իրենց տալիս են կերուխումի: Նրանք ոչ պաս են ճանաչում, ոչ ոտես, «անխորի ուստին զձեթ և արբեցութիւն գործէին ի պաս առորդն և մեծ աղոփացիցն ոչ կիրակի էր լայտ, ոչ լուր առորդն, ի գինարքեցութիւնսն ընդ այր և ընդ կին և ընդ օստարականի խառնիխուուն նստելով՝ անտակութիւն գործէին»<sup>75</sup>:

Հենց վանքերում, ասում է Դարանաղցին, մարդիկ ավագ ուրբաթ օրը ինչ ասես ուստում են՝ կատակելով թե Քրիստոսն այդ օրը խաչի վրա լինելով՝ չի տեսնի իրենց արարքները, «զի տէրն լինելով ի խաչին»:

Դարանաղցին ափսոսաներով է հիշում այն երանելի ժամանակները, երբ ժողովրդի մոտ ընդհանուր հարգանքը ու հավատք կար Սեպտիմ սարի վանքերի ու երանցում գտնվող վանականների նկատմամբ: Գովում է Սվագ, Կապոսի և Երկանի վանքերը: Վերջինում,—ասում է,—բազմաթիվ վարդապետների գերեզմաններ կան և «քազում գրեանք ի Երկանի վանս և Կայիփոսին, այլ նմանապես և յԱսագ վանքն այլ առաւելապես»:

Հասկանալի է, որ Դարանաղցուն հաջորդող դարը ավելի պիտի խորացներ վիճակը, վանքերը տաներ դեպի լիակատար քայլայում, թե տնտեսական և թե բարյական տեսակետից, ենթակա ենթերական տևական սարսափների, որի պայմաններում այրվել, ոչնչացվել են բազմաթիվ ձեռագրեր, եկեղեցական մասունքներ, իսկ միաբանությունները աստիճանաբար քայլայվել են, ձովվել, փորբացել, վանքերի ձեռքից խվվել են նրանց պատկանած կալվածները, նետևաբար միաբանությունը սնող միջոցները, մանավանդ որ այդ շրջանում զանգվածային ուխտագնացություններն են բազմադեպ են եղել:

Մղկոտում է Ղազանճանը, տեսնելով վանքերի այդ տիսուր վիճակը:

«Հիմա ինչ է և ինչ նպատակի կծառայեն վանքները. թեև իբրև հնություն պիտի մնան, պետք է քայլայվածներուն և ավերակներուն տեր ըլլալ, նորոգել և կանգուն եղածները քայլայում խնայել: Եթե իբրև ազգային կալված կապահվի, պետք է անոնց եկամուտները շատցնելու կամ գեթ չկորցնելու հոգ տանել. եթե իբրև ովաստատելի և կրոնական զգացմանց վառարան պիտի համարենք, պետք է մի այնպիսի ձև տալ որպեսզի ժողովուրդի շերմեռանդությունը չի խանգարի և ս. Ավետարանի ճշմարտությունը քարոզվի. Եթե իբրև գրոսավայր, պետք է գոնե կանոնավորության մը ենթարկել և ժողովրդյան բարուց և վարուց վերաշնորթյան օգտակար ընել»<sup>76</sup>:

Այսպիսով, 19-րդ դարի կեսերին Երզնկայի վանքերը հասկ էին այնպիսի մի աստիճանի, երբ Կ. Պոլսի պատրիարքարանի առաջ կանգնած էր երկու ելք՝ կամ հաշտվել գավառի հարյուրավոր վանքերի աստիճանական քայլայման, կալվածների հափշտակման ու խապա վերացման փաստի նետ, կամ մտածել գեթ վանքերի ու նրանց կալվածներից մի մասի պահպանման մասին:

Անշուշտ նախընտրելին երկրորդն էր:

Որոշվում է վանքերը հանձնել ոչ թե վահանակրենի խնամակալությանը, այլ՝ վահապահների պահպանությանը, այն ել բացառապես ամուսնացած մարդկանց՝ այսինքն կամ քահանաների կամ աշխարհական մարդկանց, որոնք այն պիտի ժառանգեին միմյանցից և օգտագործեին:

<sup>75</sup> Դարանաղցի, էջ 510:

<sup>76</sup> Կ. Ս. Ղազանճան, խառն նամակներ, էջ 22—23:

Այս նոր կարգադրության հիմնական նպատակը վաճրի ապահով պահպանն էր ավագակային հարձակումներից: Եթե վանքը դեռևս բավականաչափ կալվածներ ուներ, վանապահն էլ ի վիճակի էր այն շահագործման դեմք, դրանից կարող էր օգտվել թե վանապահը և թե ազգը, իսկ եթե այնպիսի վիճակում էր, որ հազիվ ինքնարավ կարող էր համարվել, նրանից ազգը ոչինչ չէր ապահում, իսկ եթե ավելի ծանր վիճակի մեջ էր, և նոյնին վտանգ կար, որ վանապահը, չկարողանալով տոկալ, կարող է թողել և հնատնալ, այդ դեպքում կարող էր ստանալ որոշ նպաստ:

Այստեղ կար նաև ավելի հետատարած ծրագիր՝ ժողովրդին ոխտացնացույցների միջոցով կապել հայոց եկեղեցուն, հետևաբար բրիսոններքան հետ, երբ համատարած ժորացումը սպառնում էր Հայատանյաց Եկեղեցու գոյությամբ:

Սուսանին վանքերի մասին խոսելիս մենք ծանոթացանք նման վանապահներից մի քանիքն, տեսանք, որ հրանք միաժամանակ ֆիզիկապես ուժող, ի պահանջել հարլի թշնամուն գենքով դիմագրավելու կարող մարդիկ էին:

Որպես ոշագրավ վավերագիր այստեղ մեջ ենք բերում Երգնկայի վանքերից մեկի հոգաբարձության և վանապահ-վարդապետի միջև կնքված պայմանագիրը նոյնությամբ:

## Ս. Ներսես վանքի հոգաբարձության և վանապահ-վարդակալի միջև կնքված պայմանագիրը

1. Վանոց այնպես պիտի խնամ տանիմ, ինչպես իմ սեփական կալվածքին. պարտական եմ կատարել ի նմա այն ամեն շինություն ու նորոգություն, որո ծախսը ավելի չէ քան հարյուր դարեկան, պարտավոր և նոյնպես ի գործան վանոց շրջակային մեջ տնկել երեք հարյուրի շափուի ու բարտի ծառատուներ:

2. Վանքապատկան բոլոր գույքերն, զորս հոգաբարձությունն համրելով ու տոմարավ ինձ կիանձնեն, թվականես մեկ տարի վերջ իրեն պիտի դարձնեմ հինգածները նորոգելով:

3. Էղմեզընա ինձ համձնված լինելով ութ ոչխար, յոթ այծ, հինգ կով ու երեք հորթ, մեկ տարի վերջ հոգաբարձության պիտի վերադարձնեմ զայն նոյնությամբ. պարտաւան եմ, ըստ հնավանդ սովորության, ամեն առավոտ այցելուաց բաշխել մածոն, կար և այլ:

4. Եկեղեցական մասունքի, գանձանակի հասույթը և իմ ծառապությանը համար ստացած դրաւական պարգևներս ինձ կպատկանին:

5. Վանքապատկան բոլոր հողային կալվածոց էմլաքի տուրքը ևս պիտի վերցնեն: Պիտի վճարեն, վերջը փոխարեն հարդեն վանքի բաժինն են պիտի վերցնեն:

6. Վանքապատկան կալվածոց, ինչպես են՝ այգի, պարտեզ և արտայք, հողային բերքն պիտի բաժնի ըստ օրինաց մշակության, իմ ու Հոգաբարձությանց միջև. պարտական եմ այգվոյն թերի մասն ամբողջացնել:

7. Պարտեզին քարե ցանկապատը, որ ավերածներ ունի, հառաջիկա գործան պիտի նորոգեն և պատին այժմու բարձրության վրա հինգ կարգ այլուս և պարտավոր եմ շարել:

8. Սահմանալ տարեկան յթն ու կես օսմանյան ուկը վարձքը կա-

մաս ու հոժարովթյամբ պիտի վճարեմ, կես ուղին թվականներ երկու ամիս վերջ և մնացյալն հասաքիկա 84 տարվո հունիս 25-ին հատուցանելով:

9. Վանուց անասնոց աղը միմիայն վաճառապատկան արտորեից ի պարտություն պիտի գործածեմ:

10. Հանուն Ա. վանուց նվիրելի կենդանիք, անոթք, իրեղենք ազգին կվերաբերին:

11. Վանուց ծառերը չպիտի կտրեմ, ջուրը չպիտի ծախեմ:

Վերոդիյալ պայմաններով և մեկ տարի պայմանաժամանակ կատանձնեմ Ա. Ներսեսի վանուց վաճառապատկանը, որո ի հաստատություն կատորագրեմ:

### ԽԱՉԱՏՈՒՐ Տ. ՊՈՂՈՍՅԱՆ

3 օգոստոս, 1888

ի վաճառ Ա. Ներսեսի Եկեղյաց

(Վկայք)»<sup>77</sup>:

Այս պայմանագրի ընթերցումից դժվար չէ կումել, որ հոգաբարձության միակ նպատակն է եղել տվյալ վաճքի պահպանումը, ծառերի բազմացումը և այլն: Երեսում է նաև, որ վաճառապին շատ էլ բան չի մնում: Գուցե դա է եղել պատճառը, որ որոշ վաճքերի վաճառապահները հրաժարվել են նման ծանր պատասխանատվությունից և թողել-մեռացել են:

Բայց եղել են նաև գերդաստաններ, ինչպես Սըրբիաը Մոռուս վաճքի հոգան իր վրա վերցնող վաճառապահները, որոնք սերնդներուն մոտ մեկ դար պահել են վաճքը և բերել-մասցը են մինչև 1916 թվականը, ոուսական բանակի գրավման օրերը:

Վաճքերի անվտար պահպանան համար ուրիշ միջոցների էլ դիմել է պատրիարքարանը: Այդ միջոցներից է եղել դրանք հայ ամիրաներից մեկնումնեկի խնամակալությանը հանձնելը: Այսպես, Պալյան ամիրաները, որ հայունի են եղել ազգանվեր իրենց գործունեությամբ, իրենց վրա են վերցրել Երգմեկայի գավառի որոշ վաճքերի հոգատարությունը:

Բայց, ըստ երեսության, Կ. Պոլսում 1840—1850-ական թվականներին ամիրաների և էսմաֆ դասի, այսինքն արհեստավորության միջն բորբքված բուռն պարքարը, որ իր բարձրակետին հասավ Սկյուտարի ճեմարանի խնամակալությունն ստուանձնելու հարցում, իր ազդեցությունն է թողել նաև գավառի, այդ թվում՝ Երգմեկայի վրա:

Ս. Ամատյանի ճկարագրություններից երեսում է, որ Երգմեկայի վաճքերից մի քանիսի պահպանան հոգած իրենց վրա են վերցրել ոչ թե Կ. Պոլսում ապրող ու գործող ամիրաները, այլ հենց Երգմեկա քաղաքի արհեստավորական դասը: Օրինակ, պղնձագործները իրենց հովանավորության տակ են առնել Երկանի Ս. Գևորգ վաճքը:

Որպես վերշաբան ուզում ենք մեջքերել գերմանացի Ամանդ Ֆրենի՝ 1840-ական թվականների տպավորություններից մի քանի տող.


«Սեպուհ լեռան ամրուղ զանգվածը, քանի-քանի անգամներ սասանություններ կրած է, ապասամներ ապակի պես կոտրած և իրենց մեջ ահա-

<sup>77</sup> «Արևելյան մամուլ», 1888, փետրվար:

գին անդունդներ բացած են, ուսկից ճամփաները այժմ կտանին հայկական սրբավայրերը։ Այդ բարձանց վրա ոչ մի բուսականություն իրարու վրա դիզված բարձայուրու ահավոր պատկերը չմեղմացներ։ Միայն տեղ-տեղ ժայռերու զագարանց վրայեն կախված են վայրի շոճիներ և զարդուրեկի անդնեղոց վրա անհուն բարձրության մեջ կճախրեն արծիվներ։ Ամբողջ օրվան մի ճամփա կտանի այսպէս տանթեական դժողաց մեջ, ուսկից Տուժիկի ավազակ բրդերն անգամ ահարեկ խուս կուտան։ Արդարք հափշտակելու ալ ոչինչ չէ կարծի գտնել այստեղ։ Անառիկ բերդերու նման երեք առանձնացլաւ վանքեր կան մի անկյուն թագուցած, որ ոչ բարբարության ճիրամը և ոչ ալ բաղաբակրտության հշովը կրնան թափանցիլ։ Լեռանց խոռոչներուն մեջ կգտնվին նաև բնական զավիթներ, հայ թագավորաց դամբաններ, որոնց վեհափառ դիակներն ու աճյունները ժամանակի փոթորկները ամեն կողմ ցրած են»<sup>78</sup>։

<sup>78</sup> «Արնելյան մամուլ», 1878, նոյեմբեր, էջ 26։





## ԳԵՎՈՐԳ ԴԵՎՈՒԿՅԱՆ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐՍՉԱՆՔԻ ԽՈՌՀՐԴԱՆԻԾԸ «Սասունցի Դավիթ» Էպոսի գրառման 120-ամյակը

Այժմ իրեն բուն նյութ այս գրքովիկիս պիտի կցորդեմ ԴԱՎԻԹ ՍՍ-  
ՍՈՒԻՆՅԻ կամ ՄԶԵՐԻ ԴԱԼԻՌ վեպը, որը երեք տարի հետամուտ եղա ձեռ-  
քը բերելու և ոչ ոք գտա, որ ամբողջապես գիտենար մինչև 1873 հունիս ամ-  
սույն՝ Մշո դաշտի Սոնիստ գեղի երեսինան պ. Կրպոն ներկայացավ ինձ ար-  
ժանապատիք Օհան վարդապետի միջոցով։ Սա կպատմեր, թե յոր վարպե-  
տը շատ ընդարձակ գիտեր այս պատմություն, և թե մեզ ընկ մեջ շատ տե-  
ղեր ուսանալոր խաղեր կային, որ ձայնով կերգեր։ Թե՛ այդ վարպետը եր-  
կու վոշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թե ինքը՝  
բավկան ժամանակ պատմած չլինելով, շատ կտրներ մոռցած էր։ Այնու-  
ամենայնիվ երեք օր զինքը պահեցի, խնդրեցի, պատվեցի, պարզատրեցի,  
և առ ինքինքը կազորութելով, պատրաստելով, պատմեց բերանացի, զոր  
իրեն բարբառով և գրի անցուցի։ Այսպես էր գրում 1874 թ. Կ. Պոլոսկ հրատարակված «Գրոց և բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դոր։ ծրա-  
գրեաց Գ. Վ. Սրվանձնեանց» գրքում հեղինակը։

Եվ այդ 1874 թվականը եղավ ու դարձավ մեր մեծագույն Էպոսի, մեր  
ժողովրդական անգնահատելի վեպի ծննդյան տարին։ Խոկ 1873-ը՝ առա-  
ջին գրառման։ Այն, ինչ պատմում ու պատմում էր ժողովուրդը դարեր ի  
վեր Սասունում, Տարոնում, Վասպուրականում ու Բարակից շրջաններում  
ու վայրերում, գրի էր առել Գարեգին վարդապետ Սրվանձնյանցը և գրով  
հիշատակել։ Հիշատակում էր, քանզի լավ գիտեր դրա արժեքը, ահա թե ին-  
չու այնքան հետամուտ էր եղել, որ լսի ամբողջական վեպը, և երբ հնար  
էր եղել, ուրախացել էր սաստիկ ու գրատել և շտապել մեկ տարի անց ներ-  
կայացնել ընթերցողին, սակայն արձակ պատմով, թեև գիտեր, որ վեպի  
շատ հատվածներ երգային են և երգվել են։ Խոկ վեպը պարզ էր ու կա-  
ռուցիկ և հարազատ զավակն էր իր հող ու ջրի, իր ժողովրդի, իր սրբու-

րյունների. «Բաղդըդո Խալիֆեն շատ զոր ո զորընեղ կեղճի. ազգար կեցե՛ կիզս վըր մեր Սուրբ Կարապետու. շատ զմըր ազգ կնվազցու ո շատ ուսիր կըուն տանե»: Այսպէս էր Ակալում պատումը, սակայն թիշ անց ժողովրդի ինքնապիրությունը չէր տանում այս հնվատացումը, չէր տանում Խալիֆի հզորությունը և անս հրան էր հակադրում ազգի ուժը, «Ըդ Խալիֆեն հեղմ լի ազգար էրեց ո եկավ վըր մըր ազգին. մըր ազգ (մեռնիմ ուր սուրբ հրաշքին, Սուրբ Կարապետ) ըդ անգամ զինք շատ նեղ լծեց...»:

Խակ Բարս ավելի «Նեղ էր լծելու», երբ Դավիթը հաղթելով Մարս Մելիքին հաւելու էր նրա թախտին: Պատմելու էր ժողովուրդը դարեղար և հույս ու հավատով սպասելու էր Մելիքին, որը հովին ասելու էր. «Եբոր ցորեն եղավ քընց ալոն ո գարին եղավ քընց մասուր մի. հրպամ լի հրանք կա, որ էնանք իդա տեղեն»:

Մեկ տարի անց նշանավոր հայագետն Քերովիք Պատկանյանը «Սասունցի Դավիթը» վերաբարձրակեց Սանկու Պետերուրդում, ապա թարգմանեց և լույս ընծայեց ոռուերեն (1881 թ.), խակ Արթուր Լայսուր թարգմանեց գերմաներենի և հրատարակեց Լայպցիգում՝ նույն թվականին: Վեպը համբեղիանոր ոգերություն առաջացրեց ազգային շրջանակներում: Հեղինակին շնորհավորական համակներ հղեցին Պոլսու պատրիարք Ներսէս Արքեպիկոպոսը, երախտաշատ բանատեղ ու ազգային գործիչ Գարբրիէլ Պատկանյանը և վերջապես՝ հայագիտության հոկաներից Հայր Ալիշանը և որիշներ:

Այսպիսին էր լինելու «Գրոց-բրոցի» ընդունելությունը: Խակ նրա հեղինակը հավատավոր էր ժողովրդի ապագային, նրա հավերժությանը: Ահա թէ ինչու այնպէս ջանադրաբար ու ոգերությամբ հավաքում ու հավաքում էր նին ավանդություններն ու մատուք-զրուցները, առասպելները, հավատալիքները:

Ահա ժողովրդին իր ստեղծածը, իր ունեցածն ու դարերով կուտակածը սիրել տալու ծրագիր-նպատակով էր ասպարեզ իշնում Գարեգին Վարդապետը, դառնալու համար հայ բանագիտության ուսմիրա: Եվ որպէս ուսմիրա՝ ունեցավ իր բազում հետևորդները, որոնք ընթանալով նրա ուղիով, շատ ու շատ գանձեր փրկեցին կորստից, ուսումնասիրեցին ու դասդասեցին դրանք, գրառեցին ու հրատարակեցին: Եվ ոչ միայն տեքստերը, այլև եղանակ-երաժշտությունը:

Եվ մի ուկենանք դարձավ նրա գրառած կառուք. հայտնաբերվեցին «Սասունցի Դավիթ» նորանոր և ընդարձակ պատումներ, որոնց թիվն սկսեց տասնյակներով հաշվել, հետագայում ամփոփվելով «Սասնա ծոերի» անվար հաստորների մեջ: Էպոտով սկսեցին զբաղվել ու հայ էպոսագիտության հիմքը դրեցին ականավոր գիտնականներ, աշխարհին ճանաչելի դարձնելով այդ մեծագոյն գանձը: Բայց երբեք ու երբեք չխամրեց առաջին հայտնագործողի փառքն ու պատիվը, Գարեգին Սրբանաւոյնցի փառքը, որին նա երբեք էլ չձգուեց: Նա բաշ գիտակցում էր, թե դա իր մայր ժողովրդի փառքն է, որ պիտի վեր հանի մոռացությունից և վերադարձվի ժողովը դիմուն: Բայց մի՞թե ժողովուրդն անգիտակ էր իր ստեղծածին: Ոչ և բոլոր վիճ էլ՝ ոչ: Նա պատում էր ամենուր ու երգում էր ամենուր: Սակայն դեռևս շիային գիտության այն ճյուղերը հայոց մեջ, որ պիտի գրաղվեին դրանց համակողմանի ուսումնասիրությամբ: Բայց արդեն կար այդ հետաքրքրությունը և գնահատանքը, որի սկիզբն էին դրել Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Թափայել Պատկանյանը, Պերճ Պոռշյանը և այլք:

Սակայն դեռևս ապարեզ չէր իշել գրառող-հրատարակողը և ըստ հնարավորության՝ ուսումնասիրողը: Եվ այդ առաջինը եղավ Գարեգին Սբու կանաչանցը, իսկ այդպիսինքը միայն մեկ բառով են որակվում ուսումնում ժամանակը: Իսկ ժամանակն այնպիսին է դարձնում ժամանակը: Եթե ժամանակն այնպիսին էր, որն անվանում ենք ազգային զարթոնքի վերելքի շրջան, վերելք ամեն մի բնագավառում, որն առնչվում էր ազգային հներնագիտակցության, հպարտության և ժողովողին ոգի-կրոպ հաղորդելու հետ: Այդ մեծ գործին էր ծառայում և բոլորանվեր ծառայեց Գարեգին Սրվանձտյանցը:

Նրա կատարածն իրոք մեծ հայտնագործություն էր: Նա հայտնագործեց մի հրաշք գանձարան, որին ժողովուրդն ի պահ էր տվել հանուն Ազատության ու Անկախության իր մեծ երազանքը, ազատագրական պայքարի հաղթանակի հույս-հավատը, իր հավատալիքներն ու կենցաղը, իր ոգին ու բնագործությունը, այն ամեն լավագույնը, որ ձեռք էր բերել դարերի լնթացքում:

Իսկ ո՞վ էր Սրվանձտյանցը և առհասարակ ի՞նչ ծառայություն է մատուցել հայ մշակույթին և առավելապես՝ բանագիտությանը:

Նա ծնվել էր 1840 թ. նոյեմբերի 17-ին Վաճի հոչակավոր Այգեստանում Սանդենց կոչվող ընտանիքում: Նրա մկրտության անունը Օհանես էր և այդ այնուհետև, Եղիշեի հերոսամատյան ընթերցելուց հետո, իրեն կոչվի Ավարայրի հերոսներից մեկի անունով:

Նախ սովորել էր Հայմակոյսների վարժարանում, ապա Խրիմյան Հայրիկի հիմնած ժառանգավորաց դպրոցում, որ ընդունվել էր 17 տարեկանում: Այսուհետեւ սկսեց իր գրական առաջին քայլերը, և նրա բանաստեղծություններն սկսեցին լույս տեսնել Հայրիկի խմբագրած «Արծվի Վասպորականում»: Դպրոցն ավարտելուց հետո մնաց աշխատելու որպես ուսուցիչ և թերթի խմբագրի օգնական: Այս շրջանում էլ թղթակցում էր Կոստանդնուպոլիսի, Թիֆլիսի և Զմյունիայի մասովին, հրատարակելով թե՛ իր գրառած ժողովրդական բանահյության նմուշները և թե՛ իր թղթակցություններում պատմելով ժողովրդի ծանր վիճակի մասին: Ապա նաև Խրիմյան Հայրիկի հետ կշրջագայի Արևելյան ու Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, հանդես կգա որպես նվիրակ ու քարոզիչ: Նրանք կացելեն նաև Սուրբ Էջմիածին ու Թիֆլիս: Հանգանակած միջոցներով էլ Մշո Սուրբ Կարապետի վանքում կիմնեն «Արծվիկ Տարոն» լրագիրը:

Սրվանձտյանցի այս գործունեությունը շատ շուտով կարժանանա թուրքական կառավարության ուշադրությանը և նրա վրա գաղտնի հսկողություն կահմանավի:

Սակայն նա շատ անվախ շարունակում էր իր գործունեությունը, 24 տարեկանում վարդապետ ձեռնադրվելով, Վաճում մեծ նեղինակություն է ձեռք բերում իր կրակու քարոզներով: Հետո կշրջի համարյա ողջ Արևմբուհայատանը, գործի բերումով կիմնի Կարինում, Սեբաստիայում, Դիվրիկում, Ակնում, Երզնկայում, Արարքիրում ու այլուր և իր ճամփորդական տապակություններն ու գրառած ժողովրդական բանարվեստի նմուշները կամփուի «Թորոս Աղբարի» երկու գրքերում:

Իսկ լրտեսները բնած չէին, և կառավարությունը լավ իրազեկ էր իր գործունեությանը: Եվ եպիսկոպոս դարձած Սրվանձտյանցին կիմնեն Պողոսիս, և նա այլևս իրավունք չի ունենա այստեղից դրւու գալ: Այս քաղաքում էլ շատ վաղաժամ, 52 տարեկանում, 1892 թ. կիմքի իր մամկանացուն:

Սակայն առ հասցեկ էր շատ բան անել: «Գրոց-բրոցի» և «Թորու Աղբարի» ենեւ հրատարակել էր «Հեղ նորոցը», «Մանաման», «Համով նոտովը»: Եվ ի՞նչ բանականական գանձեր էր փրկել դրանցով՝ ներխաժներ, սպանելություններ, երգեր, համելուկներ, առած-ասացվածքներ, ժողովողական ստուգաբանություններ, բարբառային բառեր՝ իրենց բացատրություններով: Խսկ դրանց մեջ ինչպիսի՝ սիրով էր նկարագրում հայրենի բնաշխարհ, տպիս ամեն մի բնակավայրի տեղադրությունն ու վիճակագրությունը:

Նրա այդ գործն ունեցավ իր շարունակողները:

Թեև շատ լավ ընդունելության արժանացավ Արվանդյանցի հայտնագործությունը, սակայն մինչև 1889 թվականը նոր պատում չհայտնաբերվեց: Միայն այս թվականին էր, որ Ծովիում լույս տեսավ ապագա ականավոր հայագետ Մանուկ Արենյանի «Դավիթ և Միկ» ժողովրդական դրազգագնական վեպ-գիրը:

Այն գրի էր առնվել Էջմիածնում աշխատած շրջանում 1886 թվականին Մոկաց Գիմեկանց գյուղի շինական Նահապետից (Նախու քեռոց): Այս պատումը հանդես էր քերում գեղարվեստական նոր արժանիքներ և լրացնում Արվանդյանցի գրասումը: 1892 թվականին նշանավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը երկու նոր պատում հրապարակեց Մոկաց և Ապարանի բարբառներով, որոնց երգվող հատվածների ճայնագրությունները կատարել էր Սովորուն Սարկավագը՝ նոյն ինքը հանձնարեղ Կոմիտասը:

Սյնուհետև մինչև 1900 թվականը այդ գրաված պատումների թիվը հնայալ 8-ի (Խաչիկ Դադյան, Սարգսի Հայկունի, Բագրատ Խալաթյան), իսկ մինչև 1936 թվականը ընդհանրապես գրաված պատումների թիվը անցավ հինգ տասնյակից, որոնք 1936, 1944, 1951 թվականներին Մանուկ Արենյանի խմբագրությամբ և Կարո Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ լույս տեսան «Սասնա ծոեր» խորագիրը կորող երեք սովորներում:

1930-ական թվականներին բանակյուսական արշավախումբը երախավոր Կարո Մելիք-Օհանջանյանի շանեքրով Հայաստանի տարրեր վայրերում մոկացիներից, շատախցիներից, կաճեցիներից, սասունցիներից ու պաշկերտոցիներից գրի էր առել ուժ նոր պատում: Նոր պատումներ էին գրատել նաև Արամ Ղանձանյանը, Հարություն Ավճանը և Վարդ Բդրյանը:

1960-ական թվականներից էպոսի նոր պատումների գրասումն գործում կրկին աշխատացում է սկսվում: Դրանով են գրավվում բանագետ Գրիգոր Գրիգորյանը և Վահագն Գրիգորյանը, հայտնաբերելով ևս տասնհինգ պատում-տարրերակ: 1970-ի սղզբներին բանասեր-բանագետներ Սարգսի Հարությանը և Արույսակ Սահակյանի շանեքրով մեծ հաջողությամբ են պատկվում: Նրանք կրտսեցին փրկում են ևս 81 պատում: Դրանք ոչ միայն նոր տվյալներ էին հաղորդում մեր ժողովրդական վեպի մասին, այլև ապացուցում, որ էպոսը շատ տարածված է եղել նաև Սասունում, քանի որ 81 պատումներից 21-ը սասունցիներ էին: Ընդհանրապես, որ «Սասունցի Դավիթը» շատ տարածված է եղել պատմական Հայաստանի մեծ մասում և մեծ ժողովրդականություն է վայելել՝ կասկածից դուրս է:

Ինչպիսի, վեպի պայմանի գրասումն թափք դեռևս անցաւ դարավերջից իր հետ բերելու էր նաև բանասերների ու պատմաբանների լայն հետաքրքրությունը: Արդեն դարավերջից լույս են տեսնում էպոսի պատմական ու բամեմատական կողմերին նվիրված Բագրատ Խալաթյանցի և Ստեփան

Կանայանցի հետազոտությունները: Մանուկ Արեղյանի «Ազգային վեպ», իսկ հետագայում «Հայ ժողովրդական վեպ» գիտական ուսումնասիրությամբ հիմք է դրվում մեր հպատակացիությանը: Տարիների ընթացքում հանդես են գալիս նորանոր ուսումնասիրություններ ու հոդվածներ, այդ թվում և հշանավոր արևելագետ ու հայագետ Հովհաննի Օքրեան «Հայ հերոսական էպոսը» նշանավոր ուսումնասիրություններ:

1939 թվականին Շշվեց «Սասունցի Դավթի» ստեղծման հազարամյակը և այդ առիթով հյուսվեց նրա համահավաք բնագիրը Մանուկ Արեղյանի, Գևորգ Աբովի և Արամ Ղանձանյանի աշխատափրությամբ: Այն հրատարակվեց նաև ուստերեն ու այլ լեզուներով և շարտենակվում է հրատարակվել: Մեր ազգային էպոս իր պատմական շերտերով, մտածողությամբ ու համամարդկային վեհ գաղափարներով շատ մեծ հետաքրքրության է արժանացել: Այն որքա՞ն ճիշտ է բնութագրել մեծ Վարպետը. «Նա՝ դրերի մեծ բանաստեղծը, իր անսանձ երևակայությամբ խորտակելով ժամանակագրական և աշխարհագրական բոլոր ահմանները, իր ստեղծագործական քուրայի մեջ լցորել է իր հին ու նոր աստվածներին, իր հին ու նոր հավատալիքները, իր հին ու նոր հերոսներին, իր հին ու նոր պատմական հուշերը, նաև էպիկական ընդհանոր մոտիվները և ազգային առանձնահատուկ առասպեկտները, և խառնել է բոլորը ի մի և ձուլել է նրանցից իր հանճարեղ պատմությունը, միաժամանակ իր բարդական հայացքները, իր բաղանքները և հավատը լավագույն ապագայի համար՝ իր բովանդակ հոգին»:

Մեր էպոսը ոգևորել ու ներշնչել է արվեստագետներին, նշանավոր քանդակագործ Երվանդ Քոչարը քանդակել է հանրահայտ արձանը, Էպոսի ծեսավորություններով հանդես են եկել Հակոբ Կոչոյանը, Միկո Արեղյանը, Գրիգոր Խանջյանը, Էդվարդ Խաբեկյանը, Միհրան Սոսյանը և ուրիշներ:

Ենուն 1908 թվականին Մանուկ Արեղյանը գրում էր. «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վեպը, որ մերն է, մեր սեփականը, մեր ժողովրդի դարավոր պատկերը... ուսումնասիրներ այն բազմակողմանի կերպով և մենք կգտնենք նրա մեջ մեր ժողովրդի խորքերը: Խսկ եքք մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նյութը նոյն ժողովրդական ոգով մշակի վելարվեստորեն, դա կիհնի մեր ազգային բանաստեղծության մարգարիտը»: Տարբեր տարիներին վեպի գրական մշակմանը ձեռնամոխ եղան Հովհաննես Թումանյանը, Ավետիք Խանջյանը, Եղիշե Զարենցը, Լևոն Մանվելյանը, Նաիրի Զարյանը, Տիգրան Չիշունին, Մկրտիչ Խերանյանը և ուրիշներ:

Խսկ մեր էպոսագիտությունը բնավ էլ չի սպառել իրեն:





## ԱՐԳԻՍ ՑԱՓՈՒԶՅԱՆ

### ԲԱԲԳԵՆ ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ (1868—1936)

Լրացավ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռակից Կաթողիկոս, քաջ հայագետ, պատմաբան-բանասեր, հայ հին մատենագրության և գրաբարի ոսկեբերան դասախոս, կորովի խմբագիր, հայ մշակույթի հշանավոր գործիչ Բարգեն Կյուլեսերյանի ծննդյան 125 տարին:

Ծնվել է 1868-ին Այճթապում: Նախակրթությունն ատացել է ծննդավայրի հայունի Վարդանյան վարժարանում: 1889—1896 տարիներին սովորել և ավարտել է Արմաշի Դպրեվանքը:

1899—1900-ին՝ վաճառայր և առաջնորդ Տարոնի (Մուշ) վիճակի: Անդրանիկի հայդուկային խմբին օգնելու, զենք ու զինամթերք մատակարարելու մեղադրանքով բանտարկվել, ապա աքսորվել է Կ. Պոլիս, որտեղ «ընդ հսկողությամբ» մնացել է մինչև 1907: Այս տարիներին խմբագրել է «Հոյս» եկեղեցագիտական շաբաթաթերթը և դասախոսել Պերպերյան և Վեդրոնական վարժարաններում:

1907—1909-ին վերատեսուչն է Արմաշի Դպրեվանքի:

1914-ին մեկնում է Ամերիկա՝ բուժվելու: Վրա հասած համաշխարհային առաջին պատերազմի պատճառով ստիպված մնում է այնուն մինչև 1922: Բուստոնում հրատարակում է «Տավրոս» շաբաթաթերթը:

1924—1927-ին Եղիշե Դուրյան Պատրիարքի օգնականն է, «Սիոն» ամսագրի խմբագիրը և Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի դասախոսը:

1928-ին Մեծի Տանն Կիլիկիո Սահակ ծերտնազարդ Կաթողիկոսի կողմէց կոչվում է Աթոռակից Կաթողիկոսության՝ կազմակերպելու համար Կիլիկիո Կաթողիկոսությունը Սիրիայի մեջ: Զեռնադրվել -օծվել է 1931 ապրիլի 26-ին Հայեափի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցում:

1931—1936-ին՝ Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո և դասախոս՝ Առարարաց Դպրեվանքում:

Բարգեն Կյուլեսերյանի անձի մեջ միշտ նախանձելի ներդաշնակությամբ համագորակցել են հոգևորական գործիչը, դասախոսը, խմբագիրն ու գիտնականը: Այդ ներդաշնակության շնորհիվ անշո՛շտ որ աստանա-

կան և ոչ երկար կյանքի ընթացքում առ կարողացել է աշխատասիրել և հրատարակել երեք տասնյակից ավելի երկեր, որոնցից են գիտական աշխարհին լայնորեն հայտնի «Ծովք, Տլուկ և Հոռմկա», «Եղիշե», «Խպամբ հայ մատենագրության մեջ», «Հայ Եկեղեցին Ե. դարուն մեջ», «Կողու Հով հանճես Պատրիարք», «Ցուցակ ձեռագրաց Ղալարիո», «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիի Կարմիր վանուց և շրջակայից», «Պատմություն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» և այլն:

Համակարգված գիտելիքների, խորունկ մտքի ու պողպատյա տրամաբանության, անսպառ կորվի և անահինան խիզախության մի համաձուլվածք, որ, սակայն, ամեն բոլե անակնկալի կարող էր բերել քեզ իր փրկության քնքշարտությամբ, եթե խոսքը վերաբերվում էր հայությանը, ճրա պատմության ու լեզվին, փառքին ու ճակատագրին:

Միրում էր հրապարակային վեճը, ու պայքարն իր տարերքն էր: Իր հշմարտությունը պաշտպանում էր ազնիվ կրով ու բաց խիզախությամբ: Կովկաս էր միշտ բաց դաշտում ու երեք չեր խրամատավորվել...

Եթե առիթը ներկայանար, սիրում էր պատմել իր հրապարակային վեճ ու «մարտերից»: Պատմում էր այնպիսի կենդանի ոգեսրությամբ ու կրով, որ թվում էր, տարիների վաղենություն ունեցող այդ վեճը նա մղում է հենց հիմա՝, հենց քո՞ դեմ: Ու մի անգամ, եթե պատմում էր Մխիթարյան միաբան, հշանավոր հայագետ հայր Արսեն Ղազիկյանի հետ ունեցած մի վեճի մասին, մեր դարձնելերից մեկը սրամտորեն մկատեց.

— Վեհափառ, հայր Արսեն Ղազիկյանը մեր դասարաննեն չէ:

Սնակնելի եկած, մի պահ լովեց Վեհափառը, ապա շարունակեց.

— Գիտեմ, որ հայր Ղազիկյանը ձեր դասարաննեն չէ, բայց վստահ չեմ, որ ձեր դասարաննեն ալ Ղազիկյան մը չելլե...: Ռատի, խոսք ու կոիվս Վեհետիկեն եկած և ձեզմէ ելլեիք ղազիկյաններուն մասին չեմ...

Մեզ խորապես հուզում էր նա, եթե արդեն Տանն Կիլիկիո Կաթողիկոս, աներեր հավատքով և իրավ համեստությամբ խոսում էր Հայ Եկեղեցու միասնականության ու լուսավորչանաստան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերակայության մասին: Գաղափարը, որ Բ. Կրոլեսերյանի համար համոզ-մունք էին, գործունեության անհամատելի սկզբունք, և որոնց իրականացնանը անմնացորդ նվիրեց իր՝ բարձրաստիճան եկեղեցականի, խիզախ քարոզիչ-հրապարակագրի, ուլերերան դասախոսի, հմուտ գիտնականի և մեծ հայրենաների ի սկզբանե պայծառ ու մինչև մաս անբասիր կյանքը:

Բերեմ հանրածանոթ մի օրինակ: Բարգեն Ս. Կյուկեսերյանի Կաթողիկոսության տարիներին (1928—1936 թթ.), ընդունված կարգի համաձայն Կիլիկյան թեմի բոլոր եկեղեցիներում, առանց բացառության, Ս. Պատարագի ժամանակ հիշատակվում էր նախ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որից հետո միայն Տանն Կիլիկիո Կաթողիկոսի անունը: Մինչև հիմա ականչիս մեջ հնչում են այդ օրերի պատարագիչների և ի մասնավորի Բարգեն Ս. Կյուկեսերյան Կաթողիկոսի սրտահոյզ պատասխանը դպիրների «Յիշեա՛ Տէր և ողորմեա՛» ու սարկավագի «Օրինեա՛ Տէ՛ր» պատասխանը: «Եւս առաւել գեափսկոպոսապետին մեր և զպատուական Հայրապետին ամենայն Հայոց զՏէր Խորէն Ա. Կաթողիկոսն շնորհեացես մեզ ընդ երկար առիս ուղիղ վարդապետութեամբ...»:

Ես զգիտեմ, հիմա շարունակվում է արդյոք Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եկեղեցիներում եղբայրական վերաբերմունքի գեղեցիկ և ուսանելի այդ ավանդույթը:

Բարգեն Ա Կալողիկոսը ապրում էր աշխատանքային խատամբեր կյանքով: Նրան չէին հուզում պաշտոն, փառք ու փափկակեցություն:

Երեք սրբություն էր դավանանո՞ւ հայրենիք ու հայ ժողովուրդ, հայ դրաց ու դպրություն և ինքնագուխ (autocephalus) Հայ Եկեղեցի: Ուներ եռակ հպարտություն՝ որ ծնվել է հայ և մկրտվել հայ առաքելական դպաւանքի սուրբ ավագանում, որ կարող է խստել ու գրել մեր մեծասրբանց գրաբարով, որ շրթները սուս չեն բարբառել ալեկոն կյանքի ամենատագնապակի պահերին, անգամ հայակեր սովորան Համբիի քննիչների առաջ...:

Երբ բարձր էր լինում տրամադրությունը, մանկորեն «պարծենկու» սապանում» էր.

— Տղայիր, հիմա գրաբար կխոսեմ, հա՞...

Ու... խոսում էր: Ու կարկաչում էր հայոց մեծասրբանց գրաբարը՝ վարելով պատասի մեր հոգիները ոսկեդարյան խոհերով, որ վեն էին ու վեմ...:

Հիշեմ մի քանի դրվագ Տանն Կիլիկիո Ամֆիլիասի դպրեվանքում 1931—1935 թվականների իմ ուսանողության ժամանակաշրջանից, որոնք ավելի քան կես դար, մինչև ծերության այս օրերը, ապրում են իմ հիշողության մեջ որպես մշտապես շարունակվող դասեր ու պատգամ:

## «Զ» ՆԱԽՈՒՐԸ

Գրաբարը ժողովրդախոսակցական լեզու եղել է, թե ոչ: Այս խնդիրը երկար գրալեցրել է հայ և օտար հայագետների: Գիտնականների մի խումբ ասում է, թե եղել է, իսկ մի ուրիշ խումբ՝ թե չի եղել: Մեր դասախոս Բարգեն Կյուլեսերյանը առաջիններից էր:

Արմաշի դպրեվանքն ավարտելուց և վարդապետի կարգ ու կոչում ստանալուց հետո, 1898 թ., երիտասարդ Կյուլեսերյանը նշանակվում է Մշոն ու Տարոնի շրջանի առաջնորդ, ուր հոգևոր-ազգային գործունեությանը զուահեռ շարունակում է պատմա-բանասիրական իր աշխատանքները:

Մի անգամ, անակնկալորեն, իր մոտ հյուր է լինում Միսիթարյան ովիսից մի վարդապետ, իր երեմնի «հակառակորդներից» մեկը: Գրականգիտական շրջապատից հեռու, Մշո անմատելի լեռների կղզիացման մեջ, այս հանդիպումը չսպասված, սակայն իրական երանություն է լինում գիտնական-վարդապետների համար: Եվ, մոռացած ամեն ինչ, տրվում են հանդի, աշխույժ գրուցի:

Հյուրը, որ ազգագրագետ է, անհոգ հետաքրքրություն է ցուցաբերում տեղի ժողովրդական առասպեկների ու ավանդույթների նկատմամբ: Կյուլեսերյանը ասացողներ է հրավիրում: Մշո անուշ բարբառով առիմբնող նրանում են բազմապիսի անսպաս առասպել ու ավանդություններ, բոլորն ել խորիմաս, ինքնատիպ, չլաված: Եվ, ահա, գիշեր ու ցերեկ այնպես են խառնվում իրար, որ մեկնումի նախապես որոշված օրը անպատճի անակնկալ է թվում բարեկամներին:

Ողջերթի համար հավաքվել-եկել են Մշո երևելիները: Հյուր ու հյուրների իրար կողքի՝ լուս են: Լույս են բոլորը: Առաջնորդարանի բարպանը, մշեցի մի գեղջուկ, որ իրեք է տեղափոխում, գալիս-կանգնում է Կյուլեսերյանի առաջ ու հայունում ինքնագոյն:

— Հայր Սուրբ, զըմեն դարը պըրծը:

Համեկարծ, բոլորովին անսպասելի, Կյուլեսերյանի մտքում կայծակում է «զ» նախորդը. նա հիշում է նիմ վեճը՝ «եղել է, թե՝ չի եղել»: Եթե չի եղել, այդ «զ»-ն որտեղից հայտնվեց անուսում այս մշեցու լեզվի վրա: Ոչ սա, ապացուց է, անհերքելի ապացուց: Ու մոռացած ամեն պաշտոնականություն, ուղղակի իրար է անցնում, գրկում երբեմնի «հակառակորդին» ու եռանդագին բացականչում.

— Հայր Սուրբ, լեցի՞ր, թե ինչ ըսավ այս մշեցի անուսում շիմականի համբուրելի լեզուն,—ու, դառնալով Օվե թիմային, խնդրում է թախանձանք, — կիսնդրեն կրկնես ինչ որ նիմա ըսիր, «զ»-ով ըսիր:

Բարապանը, հյուրն ու ողջերթի եկածները ոչինչ չեն հասկանում, նրանք զարմացած հայում են իրար, մինչ վարդապետը խնդրում է.

— Կիսնդրեն, կրկնես...

Իսկ Օվե թիման, շիվար ու խոճուկ, հարցնում է.

— Հայր Սուրբ, զո՞րն ասիմ, զո՞րն կրկնիմ, ես իմալ կիմամ: «Զամենից» հետո, ահա և «զօրն», գրաբարյան մի նոր մնացող, մի նոր ապացուց: Կյուլեսերյան վարդապետը էլ չի դիմանում ու եռանդագին բացականչում:

— Հայր Սուրբ, լեցիր, չէ՞ «զորն», «զամեն»: Կիհշե՞ս, ինձմեն ապացուցներ կուգեիր: Խնդրեն, օր մըն ալ մնան և վստահ եղիր, որ խորչինդ ապացուցներով կրկնա: Իսկ հիմա, Հայր Սուրբ, վեր չկենա՞ս ու շիմբուրեն Օվե թիմայի անուշ լեզուն:

— Արդար եք, Հայր Սուրբ, արդար և իրավ. Օվե հայրիկի լեզուն հայրենի մասունք է հնավանդ, մասունք համբուրելի:

— Որ այդպես է, — Կյուլեսերյանը դիմում է իր հյուրին, — Հայր Սուրբ, ես, ի ներկայության Օվե թիմայի և հարգելի ազգայնոց, հետայսու լուծված եմ համարում մեր վեճը և բարի ճանապարհ մաղթում Ձեզ. «—Երթայր խաղաղութեամբ և Տէրն ընդ Ձեզ. ամէն»:

### ՄԵՐԹԵԿՆԵՐԸ

Երեսունական թվականների սկզբներին, Վենետիկի Մխիթարյան վարդապետ, անվանի հայագետ Արտեմ Ղազիկյանը (1870—1932) «Բազմավեպ» հանդեսում տպագրում էր շատ երկար մի հոդվածաշարք՝ «Մի գոեք, այլ գրեցեք» ընդհանուր խորագիր տակ: Հայոց լեզվի ուղղագրությունը կարգավորելու ձգտող մի աշխատություն, որի հյութերը հայր Ղազիկյանը քաղում էր սիյուռքահայ առօրյա մամուլից ու գրականությունից: Բարգևն Կյուլեսերյանը բարձր էր գնահատում այս աշխատությունը, այն համարում էր հայոց լեզվի ուսուցման որակավոր դասագիրք և «Բազմավեպ»-ի ամեն մի համարին սպասում էր մեծ անհամբերությամբ: Ու երբ որևէ համար մի փոքր ուշանում էր, նա մտահոգ կրկնում էր.

— Ուշացալ, չեկավ «Բազմավեպ»-ի նոր թիվը:

Մեր Վենետիկ դասախոսի կարծիքով հայր Արտեմ Ղազիկյանը մեր լեզվի մեծահարուստ, նվիրյալ ու մշտարժուն պահապանն էր, և որի զարգացման այսօրվա մակարդակի համար մեր մողովուրդը շատ է պարտական նրան:

Բայց և այնպես, որոշ առիթներով գանգատվում էր նրանից.

— Երբեմն շատ է համառ տնաշենը, կարծես հազարամյա ծառի կոճղ ըլլա, կուրեկ-տարհամողեկ չես կրնար գինքը...

Մի օր լսարան մուավ նա՝ ձեռքին սև կազմով մի գիրք: Լուս, գլխահակ բարձրացավ ամբիոն, գիրքը դրեց ամբիոնին, իսկ փափլիկ, զորեղ աջը՝ գրքի վրա: Զգացվում էր, որ բարկացած է և ասելիք ունի:

— Հայր Արսեն Ղազիլյանի նոր երկասիրությունն է,—ասաց բառերը հատիկ-հատիկ ու ծանր-ծանր արտասանելով,—հայաշոն, խելացի, օգտակար գիրք է: Կարդացե՞ք: Անպայման կարդացեք: Իսկ ես դիտողություն ունիմ,—ասաց՝ բոլորին ցուց տալով հոռմեական թվանշաններ, որոնցով թվագրված էին աշխատության բաժինները՝ I, II, III և այլն:

Հետո փակեց գիրքը, զորեղ աջը նորից ծանրորեն դրեց նրա վրա ու շարունակեց՝ խոսքը ուղղելով հեռավոր Ս. Ղազար կղզում ապրող հեղինակին:

— Վարդապետ, քու հայերեն գիրքիդ մեջ ի՞նչ գործ ունին հոռոմներու աչք ծակող մերթեկները, ինչո՞ւ մեր մայրենի ա, բ, գ-ով չես թվագրեք: Ինչո՞ւ անոնք կրցան բավարարել Անանիա Ծիրակացիի և այլոց տիեզերական հաշվումները, իսկ քեզ ու քու գրքիդ բանի մը բաժինները՝ ո՞՛: Հա՛յր Սուրբ, ի սեր Աստծո, մեկ կողմ հետեւ օտար այդ մերթեկները, որ աչք ու հոգի կծակեն...

Այսպես, մոռացած լսարան ու մեզ բոլորս, մեր Վեհափառ դասախոսը կոիվ էր մղում հեռու-հեռավոր հեղինակին փոխարինող սևակազմ, փոքրիկ այս գորույկի դեմ, որը հիմա, կարծես վախեցած, ավելի էր փոքրացել-կըծկըտեղ նրա հզոր աջի ճնշման տակ:


Երբ, մի փոքր հանգստացած, մեր դասախոսն ուզում էր անցնել օրվա դասախոսության ընութին, տղամերից մեկը հարցրեց:

— Վեհափառ, Դուք՝ մաքուր, անխառն, դասականորեն անբասիր հայենի շատագով եք, ի՞նչ անհրաժեշտություն Զեզ մղեց գործածելու «Մերթեկ» բառը, որ թուրքերեն է:

Հարցը սկզբունքային էր, ու մենք անհամբեր էինք իմանալու, թե ի՞նչ կպատասխանի Վեհափառը: Չուշացավ պատասխանը.

— Տղա՛յր, մեր գերանը իր ուսին հայոց տուն ու երդիկ կպահե, ժողովուրդ կպատսպարե... ուստի՝ ափսոսացի և... մերթեկը գործածեցի:

Այդ օրը, մենք՝ ուսանողներս, որիշ դասի կարիքը չգգացինք...:





## ՊՐՈՖ. ՎԱՐՍԶԴՂԱԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Հայաստանի Հանրապետության արվեստի  
վաստակավոր գործիչ

## ԾՆՎԵԼ ԷՐ ԾԱՌՏԱՐՄՊԵՏ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այժմ կլրանար նրա ծննդյան 85-ամյակը, բայց նա իր մահկանացուն կնքեց 20 տարի առաջ՝ Համընկան ծննդյան և մահվան ամիսները՝ սեպտեմբեր: Մեր սերնդի հայ ճարտարապետների մեջ Ռաֆայել Խորակյանը, բոլորին սիրելի Ռաֆոն, ավելի քան որևէ մեկը մեզնից աչքի էր ընկնում արտակարգ հրապուրվածությամբ հանդեպ ճարտարապետական արվեստը, ժողովրդի կյանքում նրա հշանակության բարձր գիտակցությամբ, հարազատ ժողովրդին անմնացորդ նվիրվածությամբ և որ ամենակարևորն է՝ ստեղծագործական բացառիկ տաղանդով:

Վերընթաց նորավ նրա ստեղծագործական ույին՝ տարեց-տարի տանելով դեպի վարպետության բարձունքները: Նա ծննած էր ճարտարապետ լինելու ու դարձավ, այն էլ ինչպիսին: Սակայն նրա շոայլ տաղանդը տարածվեց՝ ընդգրկելով նաև արվեստի այլ բնագավառներ:

Իր ճարտարապետական կրթությունը ստանալով Սանկտ-Պետերբուրգի գեղարվեստական ակադեմիայում, որուական այդ հիմնավորց կրթական օջախում, ավարտելուն պես փոփաց Երևան, քանի հարազատ ժողովրդին ծառայելը համարում էր իր բարձր պարտքը: Այստեղ նա դարձավ նետուրող հայկական արդի ճարտարապետության այն դպրոցի, որի հիմնադիրն էր Ալեքսանդր Թամանյանը: Դրան նա հավատարիմ մնաց ողջ ստեղծագործական կյանքում, իր բազմակողմանի հարուստ տաղանդով շարունակեց, զարգացրեց ու բազմապատկեց «վճացման տարիների» հայկական ճարտարապետության ծանրակշիռ նվաճումները:

Ռաֆայել Խորակյանի առաջին իսկ գործերը բնութագրվեցին հավատարմությամբ հանդեպ հայկական ազգային ճարտարապետության հարուստ ավանդույթները, դրանք նոր ժամանակներին համապատասխան հնչեղությամբ մատուցելով ազնիվ ճգումամբ:

Այդ ողջությամբ նրա նախապատերազմյան գործերից առավելագույնը է «Արարատ» տրեստի գիմեզգործարանի առաջին ներթը (որը նաշելի է

խագծվել է հեղինակակցությամբ Գևորգ Քոչարի): Այն իր հնչեղ ճակատով դիմահայաց է Հրազդանի գեղատեսակի կիրճին՝ դատնալով նրա բարակուռ զարդը: Դրանում հեղինակները «խոսել են» հայկական ճարտարապետության հնարազան լեզվով: Ծափայել Խորացելանը արտահայտչական այդ նոյն լեզվով շարունակեց ու զարգացրեց իր հետագա բոլոր գործերում և հավատարիմ մնան ստեղծագործական այդ մեթոդին իր ոչ եղկար, բայց բացադիկ արդյունավետ կյանքի ողջ տարիներին:

Եթե ներ հայրենամկան պատերազմի ճակատներում մղվում էին ծանր մարտեր, մեծ հայրենասակ ճարտարապետի մոտ միուր հղացավ՝ կառուցել աղբյոր-հուշարձաններ՝ հավերժացնելով համար ուազմի դաշտերում զինված նայ մարտիկների հիշատակը: Հորինվածքով անկրկնելի այրպիսի տասնյակ աղբյորներ շարք մտան ողջ Հայաստանում՝ զարդարելով նրա գեղեցիկ բնությունն ու բնակավայրերը: Դրանց հեղինակի մտահղացմամբ ճարտարապետական այդ փոքր ձևերը պիտի ծառայեն այն բանին, որ աղբյորներից մշտապես կարկաչուն ջրերը խորհրդանշեն զոհվածների անմահությունը:

Այդ նոյն թեման, ընկածների անմահությունը և մեծ զոհերի գեով տարած հաղթանակի պահացումը, առավել մեծ մաշտարով իր արտահայտությունն ստացավ նրա կողմից նախագծված «Հաղթանակ» հուշակորողում (այժմ՝ «Մայր Հայաստան»): Կոտոր ու հանդիսավոր, կնոշ արձանով (հեղ՝ բանիակագործ Արա Հարությունյան) պատկան այդ հոյակերտ կոթողը վեր է խոյանում «Հաղթանակ» հիբրուսակու բարձութիւն՝ իր հարուստ ծավալաձերով հշիւելով Երևանի տվալ տարածքի համայնապատկերում:

Ծափայել Խորացելանի նույնակի նշանակության մի այլ ստեղծագործությունը եղավ «Արարատ» տրեստի գինեգործարանի շարունակությունը: Այն իր շքեղ կարասների բարձրաքանակներով զարդարուն ճակատով դիմահայաց է «Հաղթանակ» կամրջին ֆոն ծառայելով նրանց միջև առաջացած հրապարակի համար: Հեղինակի մտահղացմամբ այս կառուցքը, ուր մշակվում է խաղողը ու պահլում հարազատ հողի արևային հոյութը, պիտի ընկալի որպես գինու պալատ: Այդ է պատճառը, որ այն բնութագրվում է կոտոր դասականությամբ ու պատերի բանդակային հարուստ պլատինակայով, ինչը կոչված է արտահայտելու շենքի ֆունկցիոնալ բովանդակությունը:

«Հաղթանակ» հուշակորողում և այս շենքում պարզորոշ երևան է գալիս Ծափայել Խորացելանի վարպետության բարձրացման նոր աստիճանը: Ծառ ափսոս, որ գինեգործարանի շինարարությունը մնացել է թերավարություն Տակավին չի հրականացվել դրա առավել հետաքրքիր մասը՝ բարձր աշտարակով ընդգծված մի թևը, որը կոչված է իր առաջ կազմավորել մի նոր հրապարակի ճարտարապետական անսամբլը:

Արտադրական շենքերի թեմային է պատկանում նաև նրա նախագծերով կառուցված գինեգործարանը Օշականում, Քանաքեռի այլումինի գործարանի առանձին մասնաշենքը:

Հաջորդ տարիներին դեպի վարպետության բարձունքները ընթացող ճարտարապետի ստեղծագործությունը բնութագրվում է բազմաթեմայնությամբ: Ուկեձեռիկ Ծափայել Խորացելանը կարողանում էր ոչ միայն գտնել միմյանցից տարբեր թեմաներ, այլև, ինչպես միշտադարյան հայ վարպետները, իր ստեղծագործության «պտուղներ» զարմանալի հմտությամբ տեղափոխվում էր բնական միջավայրում, դարձնում դրա ներդաշնակ զարդը, միմյանց ձուլում անձեռակերտն ու ձեռակերտը:

Սլդախիս նպատակադրման լավագոյն օրինակներն են Պանսիոնատի շենքը Աղվերանի գեղատեսիլ կիրճում, «Արագիլ» և «Ծովինար» ռեստորանները, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի ամառանց «Հայկաշենը»՝ թառած Արագած լեռան հարավային լանջին, դրանից քիչ վերև գտնվող ֆիզիկայի ինստիտուտի շենքը, «Զարենցի կամարը» Գառնի տաճող ճանապարհին, Հրազդանի կիրճում կառուցված ջրանցուց-կամուրջի ձևավորումը և այլն:

Սլնութանդերձ, տաղանդավոր ճարտարապետի նախասիրված թեման մնաց ճարտարապետական փոքր ձևը, ինչ ասպարեզում նա մնաց հիրավի չգերազանցված: Քարի ճարտարապետության մեջ բազմաթիվ վարպետը քարակերու հրտելու մանրամասների ստեղծման իր հետամտության արդյունքներով հրտինեց հոյակապ կոթողներ:

Պատահական չէ, որ քարը՝ Հայաստան աշխարհի ի վերուստ տրված այդ առան պարգևը, գովերգության է արժանացել:

Բերենք քարին ձոնված մեծատաղանդ քանատեղ Համո Սահյանի բառյակները:

«Քարը՝ կամար, գմբեթ ու քիվ,  
քարը՝ դուռ,  
քարը՝ խաչքար, քարը՝ արծիվ,  
քարը՝ նոռ:

Քարը՝ թոփշք, քարը՝ մասյան,  
քարը՝ կոչ.  
քարը՝ ոգի, քարը՝ ոստյուն,  
քարը՝ ոճ»:

Հոդվածի ներկա սահմանները թույլ չեն տալիս անդրադառնալ այդ ուղղությամբ իր ողջ ժառանգությանը: Բավարարվենք միայն հիշատակելով Երևանի հյուսիսային և արևմտյան «դարպասները», Բարեկամության կոթողը Քանաքեռում, Զոհվածների հիշատակին Կարբիում կառուցված հուշարձանը, բրոնզաձոյլ արծվաքանդակով պատկեր կոթողը դեպի Զվարթնոցի տաճարը տանող մուտքի առաջ: Մի քանիսի քանդակները, իր իսկ էսքիզներով, իրականացրել են քանդակագործներ Արա Հարությունյանը և Երանելի Քոչարը:

Հիշարժան է վարպետի նվիրյալ ծառայությունը Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի շինարարական ծրագրերի իրականացման գործում: Նա նեղինակն է «Հայկաշեն» ամառանցի, Ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի մարմարակերտ Խաչկափի, Խշման նոր սեղանի, դասը ատյանից անջատող մարմարյա բազրիքի, հրանց միջև բրոնզաձոյլ դռնակների, Մայր տաճարի շրջափակում կառուցված եղեռնի հուշարձանի և «Կաթոնադրյուր»-ի: Իր մասնակցությամբ է ձևավորվել նոր Վեհափառ գահապահը: Նրա նախագծով է հիմնական վերակառուցման ենթարկվել Երևանի Սուրբ Սարգիսի առաջնորդանիստ եկեղեցին, իր էսքիզային գաղափարով է այժմ վերակառուցման ենթարկվում Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Լավատեղակ հայ ժողովրդի անցյալում ունեցած դժվարին ճակատագրին մոլեռան հայրենաւերը առանձին հրապուրանքով զբաղվեց ազգային-ազատագրական հերոսամարտերին նվիրված ճարտարապետական կոթողների մարմնավորմամբ: Արդյունքում վեր խոյացան նոր Հաճնի, Մուսա

լեռան և Ապարանի հոյակերտ հուշակոթողները: Դրանցից յորաքանչյուրը իմբռատիպ է, իսկ միասին կրու են նրա մեծ տաղանդի անանցանելի կերպ:

Սակայն նոյն թեմայի՝ անկախության համար մղած հերոսամարտի մարմնավորման առավել ցայտուն օրինակը հանդիսացավ Սարդարապատում 1918 թ. մայիսին թորքական հորդաների դեմ մղած հերոսամարտի հուշահամալիրը, այն հերոսամարտի, որը բոխտորոշ հանդիսացավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

Ռաֆայել Խորայելյանի մոտահացմամբ Կերտված այդ ընդարձակ հուշահամալիրը (ափոված այն բարձունքներին, որտեղ տեղի են ունեցել վճական մարտերը) ընդհանուր հորինվածքով շատ բարդ է ու բազմարուվանդակ: Դրա յորաքանչյուր հատված, սկսած հանդիսավոր հուտքից, հասնելով մինչև համալիրը եղբայրակող ազգագրական թանգարանի իր ֆունկցիոնալ կազմակերպմամբ ու արտաքին ճարտարապետությամբ եզակի շենքը, կոչված է սինվոլիկ միջոցներով արտահայտել հերոսամարտի մեծ խորհուրդը, հայրենիքի անկախության համար գոհվածների հիշատակը:

Այդ գաղափարների լիարժեք մեկնաբանման նպատակադրությամբ է հեղինակը դիմել պլատիլայի (Վկոր բանդակների, բարձրաքանդակների ու հարթաքանդակների) օգնությանը՝ իրականացված բանդակագործներ Արա Հարությունյանի, Սամվել Մանայանի և Արշամ Շամինյանի կողմից: Կառուցումն ավարտելոց հետո, Սարդարապատի հուշահամալիրը՝ Ռաֆայել Խորայելյանի «կարապի երգը», վերածվեց Հայաստանի և Սփյուռքի հայության ուխտավայրի, տեղ գրավեց Հայաստան այցելող հյուրերի ուղերթներում:

Սուակն ասում է՝ «Զկնորսը ձկնորսին ճանաշում է հեռվից»: Հայ մեծ գորդ Վիլամ Սարոյանը այցելելով Սարդարապատի հուշահամալիր և որպեսզի իր հիացմունքը հայտնի հեղինակին, տեղեկանալով, որ հեղինակն այլևս կենածի չէ, վշտացած բացականչել է «Ինչու ասան մարդիկ շուտ կմեռնին», իրոք, ինչո՞ւ: Տէ որ Ռաֆայել Խորայելյանի հման մեծատաղանդ արվեստագետները հաճախակի չեն ծնվում: Սակայն միթքարությունն այն է, որ այդպիսիների ստեղծագործական սիրանքն ապրում է դարեդար:

Վարպետի ստեղծագործական գործունեությունը խախտեց Հայաստանի սահմանները, հասալ հեռավոր ափեր: Նա հանդիսանում է Նյու Յորքի կենտրոնում կառուցված Սուրբ Վարդան, Միլանի և Սունտելիդեկոյի եկեղեցիների էսքիզային համագծերի հեղինակը: Դրանք բոլորն եւ հայաշունչ են, պատմական բախտի բերություն օտարության մեջ գոնվող հայերին հիշեցնում են իրենց Մայր Հայունները:

\* \* \*

Ռաֆայել Խորայելյանը ներքուատ համոզված էր, որ յորաքանչյուր ժողովրդի համար, մանավանդ հայերի, ճարտարապետությունը նոյնպես, ինչպես լեզուն, գիրն ու գրականությունը, երաժշտությունն ու արվեստի բոլոր տեսակները, ի զորու են ծառայել ազգապատկանությանը: Ուստի այն այիտի ունենա ազգային առանձնահատկություն, զարգանա ազգային ավանդույթների սկզբունքներին հավատարիմ: Ոչ մի հանգամանք, նոյնիսկ գիտա-տեխնիկական առաջնաժամկետ և նորարարական որոշումները, չպետք է խանգարեն այդ անառարկելի ճշմարիտ ընթացքին:

Նա պնդում էր՝ «Մեր ճարտարապետության մեջ մենք պիտի դրսից փոխառնենք ամեն լավը, առաջարեմը, լինի դա շենքին ներքին կազմակերպման, թե նոր շինանյութերի կիրառության մեջ։ Սակայն ամբողջ նոր լավն ու համարձակ կիրառելով, ինչպես մեր հին վարպետներին են արել, պետք է հնաշեցնել հայերեւ։»

Վարպետը լավ էր հասկանում, որ ճարտարապետական արվեստը մըշտանորդ, հարափոփոխ արվեստ է, չի կարող կառչել հինգ, հետևելով նոյնիսկ ամենակատարյալին։ Նոր ժամանակների ու հրա գաղափարա-գեղարվեստական ընրությունների և, ինարկե, գիտատեխնիկական առաջընթացի ընձեռության համար նոր հնարավորությունների թելադրանքով պիտի ընդունի զարգացման նոր ուղի, արդիականանա։

Այնուհանդերձ իր խոր ըմբռմամբ, ճարտարապետական արվեստը, որպես հոգեւոր մշակույթի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, պիտի մենահարազարտ տեղի ավանդույթներին, նրանցով հարատանա, լինի հավատարիմ հարազարտ ժողովրդի գեղարվեստական ընկալմանը, ճաշակին, ծառայի ազգային ինքնագիտակցման սրբազն գործին։

Լինելով ճարտարապետական ավանդույթների համոզկեն երկրագագու ու լավատեղյակ, այդ ավանդույթների նկատմամբ նրա վերաբերմունքը միայն և միայն ստեղծագործական էր։ Նա դիմում էր անցյալին, որպեսզի ավելի վստահ առաջ նայի։ Իր գործերում անցյալի որևէից կրկնություն չկա, չի կրկնել իր ուսուցչին։ Ալեքսանդր Թամանյանին, ոչ էլ իրեն։ Նրա բոլոր ստեղծագործությունների վրա, սկսած փոքրերից, վերշացրած «մեծ կոտավի», խրայելական ինքնատիպ դրոշմ կա, վկայող հեղինակի մեծ վարպետությանը։

«Խորոշովյան» տարիներին ողջ մեր երկրի ճարտարապետության մեջ արմատավորվեց տիպային նախագծերի մասսայական կիրառությունը, անդեմ, ըստ Էլոյյան կոստոպոլիտյան ճարտարապետությունը։ Որպես բոլոր այդպիսի գործընթացի դեմ, Ծափայել Խորայելյանը ստժամանակ լրեց ճարտարապետական ասպարեզը։ Նա դադարեց նախագծելուց, նույնիսկ հրաժարվեց մասնակցել երիտասարդ ճարտարապետների դաստիարակման գործին՝ տեսնելով, թե ինչպես են իր ուսանողները ամսագրերի միջոցով հրապարվում «քանոնային» ճարտարապետությամբ։

Ազգային ճարտարապետության ավանդույթների շարունակումն ու զարգացումը այդ տարիների ձախ տեսարանների կողմից որակվում էր որպես ազգայնամոլություն։ Սակայն ուղարկու ու ծուծով հայրենասեր, համաշխարհային քաղաքակրթությանը լավատեղյակ Ծափայել Խորայելյանը ամեննեին էլ ազգայնամու չէր։ Ծուսական ճարտարապետական դպրոցի սանը միշտ շնորհակալությամբ էր հիշում իր փառապահն կրթօջախն ու ուսուցիչներին, իսկ իր համակուրսեցի ճարտարապետ Սվյատովակ Ագաֆինովի հետ սերտ կապեր պահպանեց մինչև իր կյանքի վերջը։ Մշտապես հրապորված էր աշխարհի ժողովորդների հերիադներով, ուսական և համաշխարհային գրական գործարենորով։

Ճարտարապետությունից հեռացած տարիներին նա տեսնորեն շարունակեց ստեղծագործել։ Բազմաքանքար արվեստով այդ ընթացքում գրադարձեց նաև կիրառական արվեստով, շարադրեց և հրապարակեց գիտական և հրապարակախտական հոդվածներ, նոյնիսկ գեղարվեստական ակնարկներ (որոնց համար արժանացավ Մարիետա Շահինյանի դրվագանդին), գրքային գրաֆիկայով։

Բայց երբ նորից վերադարձավ ճարտարապետություն, ստեղծեց այն այսի մեծագործություններ, ինչպիսիք են Սարդարապատի հուշահամալիրը և Ասպարանի հուշակոթողը: Ցավոր սրտի մեղինակը վերջինս իրականացված չտեսավ (իր թռղած էսքիզի օգնությամբ այն ավարտի հասցրեց որդին՝ ճարտարապետ Արեգ Խորայելյանը):

Մեծ հայրենասեր ու քաղաքացի, իր հարազատ ժողովրդի արժանավոր զավակ Ռաֆայել Խորայելյանն իր ինքնատիպ ստեղծագործությամբ լուսավոր հետք թողեց, թողեց քարակերտ գանձեր, դրանով իսկ իրեն կանգնեցնելով հայ վարպետաց-վարպետի՝ Մանուկի, Տրդատի, Մոմիկի և միջնադարյան տաղանդաշատ այլ վարպետների շարքը, թողեց քարի հիշատակ իր մասին:

Նրա ստեղծագործական սխրանքն ըստ արժանվույն գնահատվեց: Նա Պետական բարձրագույն մրցանակի դափնինեկիր էր, նրան շնորհվել էր Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչումը, երկրի ճարտարապետության վարպետներից առաջնաներից մեկը արժանացավ ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետի կոչման:

Հայոց նորը ծնել է ու շարունակում է ծնել տարբեր բնագավառների հազվագյուտ տաղանդի տեր զավակներ: Ծարտարապետության ասպարեզում աղյափին եղավ իմ վաղամեռիկ, եղբայրացած ընկերը՝ Ռաֆայել Խորայելյանը: Հիրավի նա ծնվել էր ճարտարապետ լինելու համար: Ու դարձավ:

Փառք ու պատիվ իրեն, ու անթառամ հիշատակ:



ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈԽԹԸ Ժ—ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ  
ԵՎ. ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ\*

Թեև միշնադարյան որոշ պատմիչներ և նորագոյն շրջանի բանասերներից մի քանիսը եգիպտահայոց առաջնորդներից ոմանց անվանել են պատրիարք կամ կաթողիկոս, պետք է նշել, որ նրանք չեն ունեցել կաթողիկոսական իրավասույթուններ (մեռն օրինել, եպիսկոպոս ձեռնադրել և այլն), այլ համար կատարել են սուկ եգիպտահայոց գաղթավայրի առաջնորդները: Եթե Ռուխայեցին և Անեցին գրում են Գրիգորիս Արքեպիսկոպոսի կաթողիկոս լինելու մասին, պետք է նշել, որ Գրիգորիսը Հայ Եկեղեցու կաթողիկոսների ոչ մի ցուցակում չի նշվել: Նկատի առնելով միշնադարյան այդ շրջանում եգիպտոսի հեռավորությունը Հայաստանից և հայոց հոգևոր կենտրոններից, ինչպես նաև եգիպտահայ գաղութի արագ աճը, երկի Գրիգոր Վկայաւեր Ամենայն Հայոց կաթողիկոսը Գրիգորիսին ձեռնադրելով եպիսկոպոս, տվել է նաև կաթողիկոսի անվանական տիտղոսը, պարզապես երկրի խալիֆայի, վեզիրի և կառավարության առջև ավելի բարձրացնելու հայոց առաջնորդի պատիվն ու անունը, քանի որ եգիպտոսում դպտիների մեծավորը պաշտոնական կերպով ճանաչված էր որպես պատրիարք: Նույն ձևով էլ պատմիչ Արու Սալիհին Անանիային և վերջին անանուն առաջնորդն կոչել է պատրիարք, պարզապես երկրի դպտի և հայ հոգևոր առաջնորդներին դնելով հավասար աստիճանի վրա, գոնե անվանական կերպով, քանի որ նրանք փաստացիորեն չունեին ո՞չ նույնանման պատունական և ո՞չ ել նոյն պարտականությունները: Խակ երկրի իշխող տարրն էլ արարենքը, չխմանալով այս նրբությունն և հավասար գետնի վրա դնելով եգիպտոսի դպտի պատրիարքին ու հայոց առաջնորդին, այս վերջնույն կոչել են պատրիարք: Սակայն միակ ճշգրիտ և ստուզ փաստն այն է, որ եգիպտահայերի հոգևոր դեկապարներն եղել են պարզապես առաջնորդներ, եպիսկոպոսական աստիճանով, իսկ նրանցից ոմանք միայն եղել են արքեպիսկոպոս:

ՃԱ դարի վերջում եգիպտահայ գաղութի թիվը հնաել է մոտավորապես երեսուն հազարի: Այս մասին առաջին անգամ նշել է պատմիչ Մատթեոս:

\* Ծարտական «Եջմիածին» ամսագրի 1993 թվականի Է—Ը միացյալ համարից:

Սուհայեցին գրելով նետևյալը. «Եթ բազմու օքքը ժողովեցան յԵգիպտոս իրին երեսուն հազարաց»<sup>53</sup>: Անշուշտ խոսքը կովոյ զորքի մասին էք, բանի որ այդ ժամանակ Եգիպտոսի բանակն էլ երեսուն հազար զորք չուներ, այլ խոսքը վերաբերում էք Եգիպտոսի հայերին, որովհետև նախադասության շարունակությունում էլ խոսում էք հայերի մասին այսպես «և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթողիկոս զՏէր Գրիգոր՝ գըուրորդին»<sup>54</sup>: Հետագա բոյր պատմաբաններն ու բանակերները այս թիվը վերցնելով Սուհայեցոց, գտնում են, որ ԺԱ—ԺԲ դարերում Եգիպտահայերի թիվը եղած է երեսուն հազար:

Դրանց մեջ վերշերս միայն պատմաբան Հ. Թուրշյանն է, որ այդ ժամանակաշրջանի Եգիպտահայերի թիվը հասցնում է հարյուր հազարի: Այսպես, Շշելով Սուհայեցու հիշած երեսուն հազարը, դրա վրա ավելացնում է Պահլավունիների Եգիպտոս բերած քանի հազար հոգուն, ինչպես նաև այդ երկիրն անկազմակերպ ձևով ներգաղթած հայերին և «98 տարիների (1074—1172 թթ.) բնական աճի հետ միայն հայերի Եգիպտահայ գաղութի թիվը, այսպիսով, կազմում է մոտավորապես հարյուր հազար»<sup>55</sup>:

Հակառակ, որ հայկական այդ աղոթավայրերը ցիր ու ցան տարածված էին ամբողջ Եգիպտոսում, Նեղոս գետի երկարությամբ, մենք գտնում ենք, որ ԺԱ դարի վերշերին և ԺԲ դարի սկզբներին, երբ Եգիպտահայ գաղութը բանական տեսակետով հասել էք իր բարձրակետին, ամբողջ գաղթավայրի թիվը պետք է լիներ 50—60 հազար հայ բնակչություն: Աղազարն ևս իր մի հոդվածում գտնում էք, որ հայերի թիվը ԺԲ դարում պետք է 30,000-ից ավելի մեծ լիներ<sup>56</sup>: Պարզ է, որ Եգիպտահայերի մեծ մասը կենտրոնացած էր մեծ քաղաքներում և կենտրոններում, ինչպես՝ Կահիրե, Աղուբրանդրիա, Թերե, Իթֆիհ և այլն, որտեղ էին հայկական գլխավոր վանքերն ու եկեղեցները, իսկ երկրորդական բնակավայրերում, ինչպես ավաններում ու գյողերում, կային միայն փոքր չափի աղոթավայրեր՝ այսինքն մատուններ և այլոց եկեղեցներում աղոթքի առանձին սեղաններ:

Եգիպտոսում թիշ հայեր կային Ժ դարի սկզբում, որոնց թիվն անում էք կամաց-կամաց: Նրանց կարևոր մասը պատկանում էր առևտրական դասակարգին: Պետք էք Էլ-Զեմալի հայագի վեզիրի ժամանումն Եգիպտոս, որ շրջադարձին եղավ տեղովով հայկական գաղութի համար: Հայերի հոսքը և բանակն օր ըստ օրե ավելացավ երկրում: Գալիս էին գործացիներ և քաղաքացիներ, շինականներ և արհեստավորներ, ինչպես նաև կյանքի զանազան ասպարեզներում գործող հայ մարդիկ ընկերացած իրենց ընտանիքներով: Գալիս էին նրանք մեծ և փոքր խմբերով: Հայերի ներհոսքը դեպի Եգիպտոս շարունակվեց և ուժեղ թափ ստացավ Բերիի (1074—1094) և իր որդու՝ Աֆդալի (1094—1121) վեզիրության 47 տարիների ընթացքում: Աֆդալի սպանությամբ ներգաղթի թափը կոտրվեց և այս անգամ գալիս էին պատահական մարդիկ միացն, այն եւ թիշ թվով: Պատճառն այն է, որ շուրջ

<sup>53</sup> Մատթեոս Սուհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

<sup>54</sup> Նոյն տեղում:

<sup>55</sup> Արևելացիտական ժողովածու, № 2, Երևան, 1964, տեսնել Հ. Թուրշյանի հոդվածը «ԺԱ և ԺԲ դարերի Եգիպտահայ գաղութի պատմությունից», էջ 315:


<sup>56</sup> Սուրեն Պարթևեան, Եգիպտահայ տարեցոյցը, Ա տարի, Գամիրէ, 1914: Տեսնել Աղազարմի հոդվածը «Եգիպտահայ գաղութը (պատմական և վիճակագրական ակնարկ)», էջ 21:




ԱՄՐՈՑԻ ԵԼ-ԶՈՒՆԵՑԼԱ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1091 թ.  
(ԳՈՐԾ ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԻ)




ԱՄՐՈՑԻ ԵԼ-ԶՈՒՆԵՑԼԱ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1091 թ.  
(ԳՈՐԾ ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԻ)




ԱՄՐՈՑԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1087 թ.  
(ԳՈՐԾ ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԻ)



ԽԱՆՔԱՐ  
ԹՎԱԿԱՆԸ 1749 թ.



ԽԱՆՔԱՐ  
ԹՎԱԿԱՆԸ 981 թ.



12-րդ դարի ՀաՅուսան վանք՝ ԳԵԶՐ Էլ-Աբրադ  
ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈԼԻՄ ՔԱՂԱՔԻ ՄՈՏԵՐԸ (ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ)

կեսդարյա, ծագումով երկու հայազգի վեզիրների տիրապեսությունն երկրում առաջացրել էր որոշ հակահայկական հոսանք և խմորումներ, ինչպես նաև նախանձ և վրեժմներություն երկրի հայերի նկատմամբ, որոնցից շատերը բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական-քաղաքական կառավարման մարմիններում: Վեզիր Սփդալի սպանության ժամանակ նրան նոյնիսկ «շուն հայ» էին անվանել, հակառակ, որ նա մաքոր իւլամ էր կրոնվ, արարախութեավով և երկար պայքարել քրիստոնյա խաչակիրների դեմ: Աղազարմը գտնում է, որ ֆաթիմյանների ժամանակ Եգիպտոսի պատական բարձր պաշտոններ ունեցող հայերի թիվը շատ մեծ է եղել: Նոյնիսկ երկրի բանակում կային զուտ հայերից բաղկացած հետևակային և ձիավոր գներ, որոնց հրամանատարներն էին շատ հաճախ հայեր<sup>57</sup>:

Եգիպտահայ գաղութի համար փայլուն մի շրջան հանդիսացավ նաև երկրի քրիստոնյա նախարարապետ Վահրամ Պահլավունու կարճատև վեզիրության (1135—7 թթ.) ժամանակաշրջանը, որի Կամիրիեց անփառութակ փախատից հետո երկրի նոր վեզիրը՝ Ռոդովանը, սկսեց հալածել հայերին և պաշտոնից հեռացնել կառավարական մարմիններում աշխատողներին: Վերջապես շատ իրավամբ Աղազարմը գտնում է, որ ֆաթիմյանների անկումով հայոց համար սկսվեցին ծանր օրեր: Եգիպտոսից արտաքեցին բոլոր հայ մեծամեծները: Երկրում մնացող հայերն էլ խիստ հալածանքի ենթարկվեցին և մեծ մասն էլ արտագաղթեց ուրիշ երկրներ և կամ տեղական տարրի, ավելի ճիշտ դպտիների հետ ձոլվեց, այնպես, որ Եգիպտոսի մնացին թիվով հայեր<sup>58</sup>, մյուսներն անցան Պաղեստին, Սիրիա, հեռավոր Հարեւստան և այլ երկրներ:

Ֆաթիմյանների երկրորդ հարյուրամյակն այնպիսի մի շրջան հանդիսացավ, որ Եգիպտոսի անոնն ավելի բարձր հնչեց մերձավոր արևելյան երկրներում, և եգիպտահայերը հասան ավելի բարգավաճ աստիճանի: Այս պատճառով հարևան և այլ հեռավոր երկրներից Եգիպտոսի այցելող մարդկանց մեջ կային նաև հայեր, որոնք գալիս էին առավելապես առևտրի նպատակով: Սակայն, բացի այդ, կային նաև ուրիշներ, որոնք գալիս էին զանազան պաշտոնական հանգամանքներով և գործերն վերջացնելուց հետո վերադառնում էին իրենց երկիրը: Այսպես, օրինակ, Երուսաղեմի հայոց պատրիարքը՝ Եսայի Ա. 1137 թվին գնում է Եգիպտոս, այնուեղի հայկական շրջանակներում դրամ հավաքելու նպատակով, Երուսաղեմի հայոց վանքի կարիքների համար<sup>59</sup>:

Ֆրանսիացի Աքքա Մարտենը հետաքրքիր մի դրվագ է պատմում այս հայ պատրիարքի մասին, ցոյց տպով միևնույն ժամանակ վեզիր Վահրամ Պահլավունու ունեցած մեծ ազդեցությունը օրփա խալիքայի վրա: Խաչակրաց շարժման առաջին իշխաններից մեկը՝ Զենքին գերի է մնացել արաբների ձեռքք շուրջ 33 տարի: Երկարատև այդ ժամանակաշրջանում իր հարազատների և Երուսաղեմի ֆրանկ թագավորների բոլոր ճգնաժամքերը արարական գերությունից ազատելու համար Եվրոպացի այս իշխանին, մնացել են անարդյունք: 1137 թ. երբ Եսայի Ա. պատրիարքում էր Երուսաղեմից գնալ Կամիրե, իր Աթոռին ի նպաստ հանգանակություն կատարելու նպատակով, Երուսաղեմի խաչակիրներն և Զենքինի հարազատները դիմում են և խընդ-

<sup>57</sup> Նոյն տեղում, էջ 6:

<sup>58</sup> Նոյն տեղում:

<sup>59</sup> Մ. Աղաւանունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, էջ 128:

բում հայոց պատրիարքին, որպեսզի միջնորդի Եգիպտոսի խալիֆայի և իշխանության մոտ, 33-ամյա գերությունից ազատվելու համար այդ Փրանկ իշխանին: Այս կարևոր առաքելության մեջ հաջողելու դեպքում, Օքանը խոստանում է և Երուսաղեմի հայերին նվիրել մի գոտի: Թվում է, որ այդ գոտի պետք է լինի կամ Աղեմին, և կամ Բեյթ-Արիֆ գյուղը: Եսայի Պատրիարքը 1137 թ.<sup>60</sup> գաղով Կահիրե բարեխոսել է Եգիպտոսի վեզիր և իր հայրենակից Վահրամ Պահլավոնուն, իսկ այս վերջինն էլ Ել-Հաֆիզ խալիֆային, որի սիրելին ու վատահելին էր Վահրամը: Խալիֆան, ընդառաջելով հայոց պատրիարքի և հայ վեզիրի միջնորդության, երկարատև գերությունից ազատել է Զենֆրիին, ի մեծ ուրախություն իր հարազատներին և Երուսաղեմի Փրանկ թագավորության: Աբրա Մարտեն այս ստույգ տվյալները վերցրել է Լոռն քաղաքի գրադարանում գտնվող ԺԲ դարի մի ձեռագրի հիշատակարանից<sup>61</sup>:

Եվսեբիոս Ռենոնդիոս գրում է, որ 1187 թ. Եգիպտոս է եկել մի հայ եպիսկոպոս, Սպահենդին սովորանի և Մոսուլի Սեյֆեդդին Ղազի իշխանի դիվանագետների հետ: Այս սովորանի հրամանով հայերին է վերադարձվել Զունիրայի և Բուսթանիի երկու եկեղեցիները, որոնք նախապես դատիները գրավել էին հայերից<sup>62</sup>: Սա այն եպիսկոպոսն է ապահովաբար, որի մասին գրում է Աբր Սալիհը, որ 1177 թվականից հետո, երեք հայ քահանաների ընկերակցությամբ, գնացել է Եգիպտոս, ուղարկված լինելով Կիլիկիայի թագավորի և Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից հասուկ գրերով, վերստին ձեռք բերելու համար Եզ-Զունիրի և Ել-Բուսթանիի երկու եկեղեցիները: Եպիսկոպոսն իշխանել է Հարեթ Ել-Զունիլայի Ս. Հովհաննես Մըկրոտիչ եկեղեցում և խնդիր է ունեցել Ֆարիհ Ել-Մուսիի հետ, մի քանի ամիս ապրել է այստեղ, ապա հիվանդացել և մահացել այդ եկեղեցում, առանց իր նպատակին հասնելու: Ապա նրան թաղել են Եզ-Զունիրի հայոց եկեղեցում, ինչպես գրում է հայագի պատմիչը<sup>63</sup>: Ա. Բաթլըրը գտնում է, որ հայոց թագավորը պետք է Լոռն Բ-Ա լիներ: Այսինքն պետք է պատահած լիներ 1186 թվականից հետո, երբ գահակալեց Լոռն Բ-Ա<sup>64</sup>:

Մըրլյանն և գտնում է, որ հոգևորականների այս պատգամավորությունն Եգիպտոս է եկել մոտավորապես 1186 թ.<sup>65</sup>:

Եգիպտոս է այցելել նաև միջնադարյան անվանի հայ հոգևորական գործիք և մատենագիր Ներսէս Լամբրոնացին<sup>66</sup> (1153—1198 թթ.), որ բռոշ որդին էր Կաթողիկոս Ներսէս Շնորհալուն և մոտ ազգականն Եգիպտոսի վեզիր Վահրամ Պահլավոնու: Լամբրոնացին 22 տարեկան հասակում (1175 թ.) Գրիգոր Տղա Կաթողիկոսից ձեռնադրվեց (Տարտոնի) եպիսկո-

<sup>60</sup> Աբրա Մարտեն 1138 թ. է գրել, ապահովաբար նա միավում է, քանի որ այս թվականին արդեն Վահրամը վեզիր չէր և նեռացել էր այդ պաշտոնից:

<sup>61</sup> Journal Asiatique, Huitième Série, Tome XII, Paris 1888 (Juillet-Décembre), pp. 487—490. Les premiers princes croisés et les syriens Jacobites de Jérusalem, par M. L'Abbé Martin.

<sup>62</sup> Eusebius Renaudotius, p. 553.

<sup>63</sup> The Churches & Monasteries of Egypt..., pp. 10—11.

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 10 (տողատակի ծանոթագրություն):

<sup>65</sup> Գ. Մըրլեան, Ականատը հայեր Եգիպտոսի մեջ, Գամիրէ, 1947, էջ 158:

<sup>66</sup> «Սիրն» ամսագիր. Երուսաղմ, Յուլիս 1947 թ., էջ 275, տեսնել «Ներսէս Լամբրոն հացի» հոդվածը:

պոս և ապա նշանակվեց վաճառայր Սկևու վանքի<sup>67</sup>: Մեզ թվում է, թե Լամբրոնացին Եգիպտոս է այցելել 1175—1198 թթ. ժամանակահատվածում, Հյուրյան հարատության սկզբնական շրջանում:

Այս ընթացքում անպաշտոն և պաշտոնական հայագիր բազմաթիվ մարդիկ են այցելել Եգիպտոս: Միաժամանակ Եգիպտահայ գաղթօջախներից ել առևտրականներ և այլ անձններ այցելել են հարևան երկրներն առևտրի և այլ նպատակների համար: Ամեն տարի գարնանը, Ս. Զատկի տոններն, Եգիպտահայ գաղութից ուստավորներ այցելել են Երուսաղեմ, եկեղեցական արարողություններին և տոնական հանդեսներին ներկա լինելու համար:

Այժմ տեսնեմք, թե Ժ—ԺԲ դարերում Եգիպտահայ գաղթօջախներն որտեղ էին սփռված, երկրի ո՞ր քաղաքներում և ո՞ր գյուղերում, և այդ բնակչայրերում ազգային-եկեղեցական ի՞նչ հաստատություններ ունեին նըրանք: Նախ նշենք, որ Ժ—ԺԲ դարերում գաղութի ազգային գիտակցական կյանքն ու գործունեությունը կենտրոնացած է եղել տեղի աղոթավայրերի շուրջը: Ավելի քան երկիրաբանական պատմություն ունեցող Եգիպտահայ գաղութին ամենաշատ աղոթավայրեր ունեցել է ֆաթիմյան շրջանի երկրորդ կետում, երբ երկրի վեցիրների մեծագույն մասը հայկական ծագում է ունեցել: Այս համեմատանքը մեծապես նպաստել է հայերի գաղթին դեպի Եգիպտոս: Հայերն ունեին վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և քրիստոնյա այլ օւստրազգի համայնքներին պատկանող եկեղեցիներում պատարագի սեղաններ: Այս մասին միակ և վատահելի սկզբնադրյուն է արարերեն գրող հայագիր Արու Սալիհը, որ ապրել է ԺԲ—ԺԳ դարերում և որպես ականատես, տեսել է դրանց մեծ մասը, և շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում միջնադարյան Եգիպտոսում գտնվող ու գործող հայկական վանքերի և եկեղեցիների մասին: Հետինական իր արժեքավոր աշխատանքում խոսում է նաև Եգիպտոսի դպտի, հաքեց, ասորի և այլ քրիստոնյա համայնքների, ինչպես նաև հարևան որոշ երկրներում եղած եկեղեցիների և սրբավայրերի մասին:

Դեռք է ճշտել այստեղ, որ ոչ ընդհանրապես, սակայն առհասարակ Եգիպտոսում եղող հայկական վանքերն ու եկեղեցիները գործել են երկրի մեծագույն քաղաքներում և բնակավայրերում, որտեղ ավելի հոծ թվով էին ապրում հայերը, իսկ մատուռներն ու պատարագի առանձին սեղանները գտնվում էին ավելի գյուղերում և այն բնակավայրերում, որտեղ հայերի քանակն ավելի նոր էր և նրանք կարող են ու պահանջն չէին գգում եկեղեցի ունենալու: Միջնադարյան հայ և արար պատմիչներն երբեք չեն ճեն, թե Եգիպտոսի հայաբնակ վայրերում որքան հայեր են ապրել: Ըստ աղոթավայրերի, մենք կարող ենք որոշ շափով (ոչ ճշգրիտ կերպով սակայն) պատկերացում ունենալ հայ համայնքի տեղաբաշխման և այդ բնակավայրերում հրանց քանակի շատ ու թիզ լինելու մասին: Սա մի կարևոր հարց է գաղութի պատմությունն ուստինասիրողների համար:

Արու Սալիհ պատմիչի աշխատանքը լավագույն և վատահելի աղբյուր է ճշտելու Եգիպտահայ համայնքների բնակավայրերն ու սրբատեղիները: Սակայն այս ձեռագիրն ունի իր մեծ թերությունը: Այդ այն է, որ ձեռագիր բնագործ սկզբի 22 թերթերը ժամանակին թափած լինելու պատճառով մեր իմացությունը

<sup>67</sup> Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հասոր Գ, Երևան, 1948, էջ 47, «Ներսէս Լամբրոնացի»:

եգիպտանակերի մասին թերի է, քանի որ բանասերները իրավամբ գտնում են, որ կորած թերթերը տպիս էին բանկարժեք տեղեկություններ եգիպտանաց մասին, որոնք դժբախտաբար առնավետ կորել են: Արո Սալիհը այս ձեռագրում խոսում է երկրորդական և այլ եկեղեցիների մասին, սակայն խոսք չկա առաջնային կարևորություն ունեցող մի քանի աղոթավայրերի վերաբերյալ, որով բանասերները հաճագում են այն եզրակացության, որ հեղինակը դրանց մասին անդրադարձել է սկզբնական ձեռագրի կորած առաջին 22 թերթերում: Այս մեծ բացը փակելու համար, հայտնի արաբագետ Գ. Մըրլլյանն աշխատել է որոշ հավելվածական տեղեկություններ վերցնել ԺԵ դարի արծանահավատ արար պատմիչ Մաքրիզիից: Մենք էլ հետևելով նոյն օրինակին և համեմատելով Արո Սալիհի և Մաքրիզիի գրածները, ինչպես նաև Ալիշանի և Մըրլլյանի գրքերը, շանացել ենք վերականգնել գլխավորապես ԺԱ—ԺԲ, ինչպես նաև ԺԳ—ԺԵ դարերի եգիպտահայ սրբատեղիների ընդհանուր ցուցակը, որքան որ հնարավոր է եղել մեր հնամեսու ուժերով:

Այժմ թվենք միջնադարյան եգիպտահայ աղոթավայրերի ցուցակը, տալով յուրաքանչյուրի մասին կարևոր տեղեկություններ միայն՝ անունը, վայրը, թվականը և այլն:

1. Արո Սալիհն իր ձեռագրի պահպանված հենց առաջին պարբերության մեջ խոսում է 1168—69 թթ. վերաշինված **Ս. Հակոբ** հայկական եկեղեցու մասին, որ գտնվում էր Կահիրեի Էլ-Խասաթին (Այգեստան) թաղամասում<sup>68</sup>:

2. Այդ նոյն թվականին Կահիրեի Հարեթ Էլ-Ջուելա թաղի Անբիծ Տիրամոր եկեղեցու երկրորդ հարկում գտնվող **Ս. Հովհաննես Մկրտիչ** եկեղեցին հատկացվել է հայերին: 1168—69 թթ. այստեղ է ապրել հայոց պատրիարքը, ինչպես գրում է Արո Սալիհը, այսինքն իթֆիհի նախկին եպիսկոպոսը, որ հետագայում դարձել է եգիպտահայոց առաջնորդը, որի անունն անհայտ է<sup>69</sup>:

3—4. Կիլիկիայից եկած հայ եպիսկոպոսը 1186 թ. դասիներից ետ է պահանջել Չուիրիի և Էլ-Բուաթանի հայկական երկու եկեղեցիները, որոնց մասին խոսվեց թիվ վերևում: Հատ երկութիւն այս երկրորդ եկեղեցին Այգեստանի **Ս. Հակոբ** եկեղեցուց տարբեր պետք է լիներ, որովհետև այս վերջինս արդեն 1168—69 թվականներից հայերի սեփականությունն էր, մինչդեռ Էլ-Բուաթանի մյուս եկեղեցին ետ էր պահանջվում 1186 թ., շորով 18 տարի հետո<sup>70</sup>:

5. Կահիրեի Դեյր Էլ-Խանդակ թաղում հախասակ կար **Ս. Գևորգ** անունով մի եկեղեցի, ինչպես գրում է Թորգում Արքեպիսկոպոս Գուշակյանը, որ 1084-ի ատենները առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոսի խնդրանքով Բեյր Էլ-Ջեմալի վեզիրը դպտիներին կարգադրել է այս տակ հայերին: Վերջիններս ստանալով այս եկեղեցին, ընդարձակել են այս և գրեթե կըրկին վերաշինել: Ասպում է, թե այն հշանավոր է եղել իր ժամանակին, այստեղ կատարված հրաշագործություններով<sup>71</sup>: Արո Սալիհը գրում է, թե այս եկեղեցում է թաղված Նուրիմայի քրիստոնյա Սոլոմոն թագավորը, իսկ իրը

<sup>68</sup> The Churches & Monasteries of Egypt..., p. 1.

<sup>69</sup> Նոյն տեղում, էջ 8:

<sup>70</sup> Նոյն տեղում, էջ 10—11:

<sup>71</sup> Թ. Արո. Գուշակյան, Եգիպտոսի հայոց մին և արդի եկեղեցիներ, էջ 12—13:

Սույնաւերն էլ վկայում է, թե նոյն եկեղեցում է թաղված Եգիպտոսի հայոցի վեճիր Վահրամ Պահլավոնին<sup>72</sup>: Մըսրլանն եզրակացնում է, որ 1084 թ. խարիսով հիշյալ եկեղեցին տրված է եղել հայերին, իսկ 1169 թ. պեսք է վերադարձված լիներ իր նախկին տերերին՝ դպտիներին, քանի որ Արու Սալիհը այն չի հիշում այլևս որպես հայերի սեփականություն: Երկի եկեղեցին դադարել է գոյություն ունենալուց մինչև ժԵ դարը, քանի որ Մաքրիզին այն չի հիշում բղորովին<sup>73</sup>:

6. Կահիրեի Հարեր Էլ-Ջուելա թաղամասում կար Անբիծ Տիրամոր աւազան Ավիրված մի եկեղեցի<sup>74</sup>, որի վրա՝ երկրորդ հարկում էր գտնվում **Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին**: Միջնադարում սովորություն կար ունենալ երկարկանի եկեղեցիներ, մեկը մյուսի վրա, տարբեր անուններով, փաստորեն երկու տարբեր եկեղեցիներ, մի քանիչ դեռ պահպանվել են Եգիպտոսում:

7—8. Կահիրեի Այգեստան հայաբնակ թաղամասից շորջ երեք կիլոմետր հեռու, Նեղոս գետի աջ ափին, գտնվում էին **Ս. Գևորգի** անվան նվիրված եկեղեցին և նոյնանուն վանքը: Եկեղեցին փոքր էր, երբ առաջ պատկանում էր դպտիներին, սակայն երբ Գրիգոր Վկայաւեր Կաթողիկոսը Եգիպտոս եկավ և Բենդ Էլ-Ջեմալիի միջոցով հայերը գրավեցին այն և կառուցեցին նոր և շատ ավելի մեծ մի եկեղեցի, բազմաթիվ գմբեթներով: Հետագայում երբ դժբախտ դեպքեր պատահեցին հայերին, այդ նորակառույցը դարձալ վերադարձվեց դպտիներին: Արու Սալիհը գրում է, որ մի ուրիշ ձեռագրում հիշում է, թե Թուրայում մի վանք է եղել **Ս. Գևորգ** անունով, որը 1164 թ. հայերից դպտիների ձեռքն է անցել: Հայկական այս վանքն ունեցել է աշտարակ, ջրաղաց և պարտեզ, սակայն երբ հայերը 1204 թ. հեռացել են այդ վայրից, Ս. Գևորգ վանքն ևս ունեցել է դպտիների ձեռքը<sup>75</sup>:

9. Մաքրիզու գրածից պարզվում է, որ Կահիրեից դուրս, դեպի Մըսր տանող ճամփի վրա, հողակույտերի մեջտեղ կար մի եկեղեցի **Ս. Միհնա** անունով: Ավելի ճիշտ սա սահմանակից երեք եկեղեցիների մի համալիր էր, որոնցից առաջինը պատկանում էր դպտիներին, երկրորդը՝ ասորիներին, իսկ երրորդն էլ՝ հայերին<sup>76</sup>:

10. Վերոհիշյալից բացի հիշված է նաև մի մասուն **Ս. Միհնա** անունով, որի մոտակա բլուրների վրա, որոնք մինչև այսօր Քոմ Էլ-Էրմեն (հայոց բլուր կամ հողակույտ) են կոչում: ԺԴ դպրում Կիլիկիական քերված հայ գերիները այստեղ բնակություն էին հաստատել: Մաքրիզին երկրորդում է Վերոհիշյալը, գրելով, որ 1343-ին հայ և ֆրանք գերիներ են բնակություն հաստատել Մըսրի հողաբլուրների վրա: Ըստ երևույթին, ինչպես Մըսրը յանձն է գրում, այդ բլուրների մոտ «հաստատված հայ խյակների խնդրամբին վրա դպտիների ընդարձակ» վաճրից մի մասուն իր հարակից հողամասով տրված է եղել հայերին ԺԵ դարում և գուցե ավելի շուտ<sup>77</sup>:

<sup>72</sup> Գ. Մըսրիան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 160:

<sup>73</sup> Նոյն տեղում, էջ 161:

<sup>74</sup> Թ. Արք. Գուշակեան, Եգիպտոսի հայոց հիմ և արդի եկեղեցիներ, էջ 18; Գ. Մըսրիան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 149:

<sup>75</sup> Գ. Մըսրիան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 163—4: The Churches & Monasteries of Egypt..., pp. 143—4.

<sup>76</sup> Գ. Մըսրիան, նոյն տեղում, էջ 165:

<sup>77</sup> Նոյն տեղում, էջ 166—7:

11. Արու Սալիհը գրում է, որ Խթֆինի վիճակում կային յոթ եկեղեցիներ, որոնցից վեցը պատկանում էին ղպտիներին, իսկ յոթերորդն էլ հայերին: Այս վերջիններին եկեղեցին նվիրված էր Ս. Գևորգի ամվան<sup>78</sup>: Հայվանարար Խթֆինում հայերն ունեին կարևոր մի համայնք, որովհետև, ինչպես տեսանք վերևում, այս եկեղեցին և տեղպոյզ հայկական համայնքն ունեին եպիսկոպոսական աստիճանով իրենց հոգևոր դեկանարը, որ հետագայում դարձավ եգիպտահայերի առաջնորդը, նոյնիսկ ոմանց կողմից պատրիարք ճամաչվելով, և որ հետագայում, քաղաքական դեպքերի բերումով, մեկնեց Երուսաղեմ և վախճանվեց այնուղի շուրջ 80-ամյա տարիքում:

12. Վերին Եգիպտոսի Ել-Մարաղադ վիճակում գտնվող Քալուսանք գյուղում ղպտիներն ունեին մի եկեղեցի: Այստեղ հայերն էլ ունեին մի եկեղեցի, որի անունը Արու Սալիհը չի հիշում<sup>79</sup>:

Վերին Եգիպտոսում, Նեղոսի արևմտյան ափին, Մինհայի համանգում, Ֆաշչի դիմաց, կար Ծինարար վիճակը, որ գոյություն ունի մինչև այսօդ, որտեղ ըստ երևոյթին հայերն ունեին բավականին հոծ և կարևոր մի համայնք, որը համաձայն Արու Սալիհի տված տեղեկության, հայերն ունեին յոթ եկեղեցի (սակայն անմիջապես թվարկում է ութ անուն: Մեզ թվում է, թե այս սահալն առաջացել է ձեռագրի արտագրող գրիչի կողմից—Ն. Տ. Մ.):

Սոորու ներկայացնում ենք այդ ութ եկեղեցիների անունները.

13. Տիրուու և Անարատ Կուզ Մարիամի եկեղեցին:

14. Փառավորյալ Միքայել հրեշտակապետի եկեղեցին:

15—16. Սոոր Մաքսիմոսի անվան եկեղեցին:

17—18. Գաբրիել հրեշտակապետի անվան երկու եկեղեցին:

19. Բասդիտարի անվան եկեղեցին:

20. Սոոր Գևորգ փառավորյալ վկայի անվան եկեղեցին<sup>80</sup>:

Այժմ քննենք Ծինարայի այս ութ եկեղեցիների հարցը: Ալիշանը հարցականի տակ է դնում Բասդիտարի անունը գրելով. «անոնն և իսկ անձանոյ է մեզ»<sup>81</sup>, իսկ արաբագետ Մըրոյանն ավելի խորը կերպով ուսումնասիրելով Ծինարայի պարագան, նախ գտնում է, որ Եվեց արաբերենից անգիրեն թարգմանության մեջ որոշ թյուրիմացության մեջ է ընկել, որ այդ յոթ կամ ութ եկեղեցիները հայկական լինեն: «Ծառ ալ տրամարանական չենք գտնենք,—գրում է Մըրոյանը,—որ ԺԲ դարի եգիպտահայ գաղութը «քահանաներով և ժողովրդով բարգավաճ յոթ եկեղեցիներ» ունեցած ըլլա Ծինարայի պես գյուղի մը մեջ, երբ այդ թվով եկեղեցի չէ ունեցած նոյնիսկ Կահիրեի կամ Մըրոյի մեջ»<sup>82</sup>:

Այս ութ եկեղեցիներից գտնեն երեքի անունները մեզ համար տարակութելի են թվում: Հայերը չունեն Մաքսիմոսի (2 հատ) և Բասդիտարի անվան եկեղեցիներ: Ասպա և տարակութելի է, թե ինչո՞ւ Ծինարայի համար փոքր և երկրորդական մի պահանում պետք է լինեն երկու եկեղեցի Ս. Մաքսիմոսի և երկուուն էլ Գաբրիել հրեշտակապետի անվան նվիրված: Այստե-

<sup>78</sup> Նոյն տեղում, էջ 168: The Churches & Monasteries of Egypt..., pp. 162—3.

<sup>79</sup> Գ. Մըրլեան, Ականատոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 169: The Churches & Monasteries of Egypt..., p. 255.

<sup>80</sup> The Churches & Monasteries of Egypt..., p. 255.

<sup>81</sup> Ա. Ալիշան, Արուամահ հայ, Պատմութին եկեղեցեաց..., էջ 55:

<sup>82</sup> Գ. Մըրլեան, Ականատոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 169:

ոից էլ որոշ կանկած է առաջանում մեր մեջ: Կամ այն այս ովք եկեղեցիների մի մասը դպտիներին էր պատկանում (որով Աբու Սալիհը սխալ ուղղություն է հայորդում—Ն. Տ. Մ.), և կամ դպտիներն արտագալթել են և Ծինարայի այս եկեղեցիներն անցել են հայերի ձեռքը, որոնք հետագայում ևս պահել են դպտի աղոթավայրի սկզբանական անունները:

Աբու Սալիհի էվեցյան թարգմանությունից վերցնելով Ալիշանն այսին է թարգմանել. «Ծինարա վիճակին մեջ հայոց քրիստոնեց գաղթակայան մի հաստատված էր, որք յոթն եկեղեցի ունեին, շատ բարեկարգ, քահանաներով և միաբաններով»<sup>83</sup>: Արաբերնենի հմուտ Մըսրլյանը գտնում է, որ այս համադասությունը սխալ է թարգմանված բնագրից և տալիս է ճիշտ թարգմանությունը այսպես. «Ծինարա կոչված վիճակը, որ իր ավատ տրված էր քրիստոնյա հայերու միաբանության մը, կպարունակէ քահանաներով և ժողովրդով բարգավաճ յոթ եկեղեցիները»<sup>84</sup>: Այս թարգմանությունը ճշտելուց հետո, Մըսրլյանը գտնում է, որ կանկածելի է այդ յոթ եկեղեցիների հայերին պատկանելությունը, քանի որ «վիճակի մը ավատատեր դառնալ՝ այդ վիճակի եկեղեցիներուն ալ տիրանալ չի նշանակեր անպայման»<sup>85</sup>:

Համեմայն դեպք, հակառակ որոշ կանկածների, մենք նարկադրված ենք ցուցակում տպու Ծինարայի այս ովք եկեղեցիները, քանի որ Աբու Սալիհին նկատում ենք այդ ժամանակաշրջանի միակ և ամենավաստահելի սկզբանադրյուրն Եգիպտոսի եկեղեցիների վերաբերյալ:

21—23. Աբու Սալիհը գրում է, որ Վերին Եգիպտոսի Ասիութի նահանգի Էլ-Խուսուս վիճակում, Նեղոսի արևելյան ափին, քաղաքի հերսում հայերն ունեին երկու եկեղեցի և մի վանք, որոնց անունները չի հշում<sup>86</sup>:

24—25. Խակ հոյա քաղաքի (Էլ-Խուսուս) դրսում կային ևս երկու եկեղեցի, որոնք դարձավ մնացել են անանուն<sup>87</sup>:

26. Վերին Եգիպտոսի Բենի Սուելֆ նահանգում գտնվող Սաֆթ Մելուս գյուղում կար հասարակաց մի եկեղեցի պատարագի երեք սեղաններով, որոնցից կենտրոնականը պատկանում էր դպտիներին, երկորորդ՝ մելքիօններին, իսկ երրորդն էլ՝ հայերին: Հայերի պատարագի սեղանը նվիրված էր **Ս. Գևորգ** գորավարի անվան<sup>88</sup>:

27. Վերին Եգիպտոսում, Նեղոսի արևմտյան ափին, Բությարայի և Ֆեյյումի միջև, Վաղի Հարիր կամ Վաղի Նաթրուն կոչված անապատում եղել է հայկական մի վանք, որ հիշված է միայն Մաքրիզի կողմից երբ այն արդեն ավերակ էր<sup>89</sup>:

28. Խոսկով Ֆեյյում քաղաքի մասին, Աբու Սալիհը գրել է, որ մելքիօնները մի եկեղեցի ունեին Հարեթ Էլ-Էրմենում (Հայկական թաղամասում)<sup>90</sup>, որից Մըսրլյանն ենթադրում է, որ թերևս հայերն էլ մի եկեղեցի պետք է ունենացին, քանի որ Հայկական թաղամասի առկայությունը ցուց է տալիս, որ այդ կարևոր բնակավայրում եղել է հայկական մի հոծ համայնք<sup>91</sup>:

<sup>83</sup> Պ. Ալիշան, Աբուսամի հայ, Պատմութին եկեղեցեաց..., էջ 55:

<sup>84</sup> Գ. Մըսրլյան, Աշված աշխ., էջ 168—9:

<sup>85</sup> Խոսկ տեղում, էջ 168—9:

<sup>86</sup> Խոսկ տեղում, էջ 170: The Churches & Monasteries of Egypt..., p. 249.

<sup>87</sup> Խոսկ տեղում (երկու գրեթեմ էլ):

<sup>88</sup> Գ. Մըսրլյան, Աշված աշխատ., էջ 170: The Churches..., p. 188.

<sup>89</sup> Գ. Մըսրլյան, Աշված աշխատ., էջ 170:

<sup>90</sup> The Churches & Monasteries of Egypt..., p. 205.

<sup>91</sup> Գ. Մըսրլյան, Աշված աշխատ., էջ 171:

29. Ասիոր քաղաքում և պատմիշները չեն հիշատակում հայկական որևէ եկեղեցի, սակայն Արու Սալիմը գրում է, որ յոթ դռներից մեկը կոչվում էր Բար Էլ-Էրմեն (Հայոց դուռ): Սա ենթադրել է տալիս Մըսրլյանին, որ այդ կարենոր քաղաքում հայկական համայնք և եկեղեցի է գոյություն ունեցել, ինչը որ շատ հավանական էր<sup>92</sup>:

30. Վերին Եգիպտոսում Սոհակ քաղաքի մոտակայքում գոյություն ուներ մի վանք, Դեյր Էլ-Արխադ (Սպիտակ վանք) անունով (Ըստ Երևալյան շինարարի գոյմի պատճառով—Ն. Տ. Մ.), որ ժամանակին պատկանում էր դպտիներին, սակայն Բեդր Էլ-Ջեմալիի օրերին այն հանձնված էր հայերին: Սա Եգիպտոսի միջնադարյան միակ հայկական վանքը է, որ իր գոյությունը պահպանել է մինչև այսօր (տեսնել Ակարներն և հայերեն արձանագրությունները), սակայն Աերկայիս այն պատկանում է առաջվա տիրոջ՝ դպտիներին: Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոն Արքեպիսկոպոս Գուշակյանն արժեքավոր երկու ուսումնասիրություն ունի այս վանքի մասին<sup>93</sup>: Վանքը նվիրված է դպտի սրբերից Ամբա Շընուդայի անվան: Այս վանքի մասին գրել են նաև հետագայում Ալպոյանյանը, Մըսրլյանը, Գարտաշյանը, Անձել Գափոյան-Գուլյումճյանը և այլ բազմաթիվ պատմաբաններ և բանասերներ:

Սպիտակ վանքը ԺԱ—ԺԲ դարերում պատկանել է հայերին հետևյալ երկու կարենոր փաստերի պատճառով, որ առաջ է քաշել Գուշակյան Մըրազանը: Այս վերջինս, որ հանդիսացել է Եգիպտահայոց թեմի առաջնորդ՝ 1914—32 թթ., 1920-ական թվականներին այցելել է այս վանքը և հայտնաբերել, որ վանքի եկեղեցու «խորանի կամարին Ակարազարդությունը հայկական է բոլորովին»: Եգիպտահայ միջնադարյան Ակարիշն այստեղ պատին վրա գրել է երեք արձանագրություն, որոնք հետևյալներն են.

## 1.

+ԹԵՌԴՈՐՈՍ  
ՆԿԱՐԻՉ ԵՒ ԳՐԻՉ  
Ի ԳԱՒԱՌՈՒՆ  
ՔԷՄՆՈՅ. ՄԵՐՉ  
Ի ԿԱՄՈՒԽՌՁՆ  
ՇՆՁԵՈՅ: Ի Գ-  
ԵՂՁԵ ՈՐ ԿՈՉԻ  
ՄԱԻԹԼԵ: և ՀԱ-  
ՅՐ ԻՄ ՔՐԻՍՏՍԱՓ-

## 2.

ՏԱ-  
ՐԱԾՈՂՆ  
ԼՈՅՍ Ի ՄԵ-  
ՏԱՂՍ ՔՐԵԱԿԱՆՍ  
ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ  
ԽԱՇԱ-  
ՏՐՈՅ.

<sup>92</sup> Նոյն տեղում, էջ 170:

<sup>93</sup> Թ(որգոն) Եպս. Գ(ուշակյան), Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները..., Գամիրէ, 1927, էջ 16—22 («Ծերմակ վանք»): Տեսնել նաև Թէոդիկի «Ամենուց տարեցյցը» (ԺԷ: տարի, Կ. Պոլիս, 1923, էջ 374—380, «Հայերեն արձանագրություններ Վերին Եգիպտոսի դպտի վանքի մը մէջ»), (Թորգոն Արքեպակ):

Թորգոն սրբազնի տված արձանագրության մեջ մի քանի մամբ փոփոխություններ ենք կատարել, իմբ ունենալով Անձել Գափոյան-Գուլյումճյանի գրքում տրված գեղեցիկ լուսամկարների ճշգրիտ գրությունները (Angèle Kapoian, Kouymjian, L'Égypte vue par des Arméniens, Paris, 1988, Planches I, II & III, photos Basile Psiroukis).

3.

ՈՐ ՔԱՐԳՈՐԾ. ԱԾ	ՔՍ ՈՂՈՐՄԵՍՅԻ ՍԱՐ-
ՆՄԱ ՈՂՈՐՄԵՍՅԻ	ԳԱԻ . . .
և ԶԵԶ և ՄԵԶ ԱՅՑ	. . . .
ԱՐԱՍՅԷ ԱՄԵՆԱՅՆ	. . . .
ՀԱՅԻՈՑՍ ՈՐՔ ԵՄՔՍ	. . . .
Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ	Ի ՄԵ-
յԵԳԻՊՏՈՍՍԻ. Ի ՀԱՅ-	ՏԱՂԱ.
ՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ	
ՏՆ ԳՐԻԳՈՐԻ ՔԻԵՐՈՐ-	
ԴԻՈՑ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՈՐ	
ՏՐ ՎԱՀՐԱՄՆ ԿՈՉԻ:	

Վերոնիշյալ երեք արձանագրությունները տրված են Թորգոմ Սրբազնի կողմից: Կա նաև մի 4-րդ արձանագրությունը գրված Հովհաննես ավետարանից նկարի կողքին, որ հետևյալն է.

«Ի ՍԿՃԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ և ԲԱՆՆ ԷՐ ԱՌ ԱԾ և ...»

(առաջին շրջ բառերը կրկնված են: Մովճը տեսմել վերոնիշյալ գրի 2-րդ պատկերում):

Թորգոմ Սրբազնը գրում է, որ սույն Սպիտակ վանքը Դ դարի դպտի շինություն է, որ Ֆաթիմյան հարատոթյան ժամանակ պատկանել է հայութին: Այս կառուցք ոչ մի նմանություն չունի բուն հայկական վանքերին: Թեռողորս նկարիչն ու արձանագրությունների գրիշն եկած է Կիլիկիայի Քեսուն քաղաքից: Նրա հայրը՝ Քրիստոփորը երկի վանքի նորոգող քարագործներից է եղած: Գալով Խաչատորին և Սարգիսին, Գուշակյանը գրում է, որ «հայտնի է, թե քարահանճերու մեջ տաճանակիր աշխատոթյանց մատնված հայեր էին, որոնք որևէ կերպով նպաստեր են տաճարին պայծառության կամ նորոգության: Այս ևս ապացուց մը չէ՝ արդյոք հաստատելու համար սրբավայրին հայկական հանգամանքը՝ գեթ այս թվականնեն»<sup>94</sup>:

Գուշակյանը շատ իրավամբ գտնում է, որ Թեռողորս հայ նկարիչը իրավունք ուներ եկեղեցու որմնազարդումը կատարել մերոպյան տառերով և հայկական արձանագրություններով, քանի որ այն պատկանում էր հայերին: Եթե այդ վանքը հայերին չպատկաներ, ոչ մի հայկական արձանագրություն չէր կարող մուտք գործել այդ դպտի եկեղեցում: Գտնում ենք, որ իրոք արդարացի և ճշմարտացի է այս փաստարկումը: Բացի այդ Արու Սալիին գրում է, որ Եգիպտոսի քրիստոնյա վեզիր Վահրամ Պահլավոնին, Կամիրեցի փախչելու հետո, ապաստանել է Վերին Եգիպտոսի Սպիտակ վանքում, որտեղ հոգևորական է դարձել և ապրել որոշ ժամանակ, որից հետո նա կրկին վերադարձել է Կամիրե և ապրել խալիֆայի պալատում, որտեղ և մահացել է հետագայում: Այս պարագան ևս պարզ կերպով ցուց է տալիս, որ Սպիտակ վանքը ԺՄ—ԺԲ դարերում հայկական է եղել, որովհետև «արյամբ և հոգով հայ և հայադավան այս իշխանը պիտի չկրնար երբեք ոչ հայկական վանք մը ընտրել իրըն իրըն հոգեկան մխիթարության մենարան»<sup>95</sup>:

<sup>94</sup> Թեռողիկ, Ամենառ տարեցոյցը, էջ 879:

<sup>95</sup> Թ. Գուշակյան, Եգիպտոսի հայոց նիմ և արդի եկեղեցիները. Կամիրե, 1927, էջ 18:

Աբո Սալինից, Մաքրիզիից և Մըսրլյանից առնելով Վերոհիշյալ եգիպտական երեսուն վանքերն ու եկեղեցիները, բահասերներից ունաք գտնում են, որ հայերը դեռ ավելին են ունեցել: Այսպէս Մըսրլյանը գրում է, որ «ըստ ჩայ և օտար ժամանակագրիներու վկայության, Յաթիմյաններու շրջանին (969—1171) հայերը Եգիպտոսի մեջ ունեցած են մինչև 35 վանքեր և եկեղեցիներ, որոնց անհայտ մեկ մասը միայն հանվանե հիշատակված կգտնենք պատմագիրքերու մեջ»<sup>96</sup>:

Հետագայում սակայն Եգիպտոսի եկեղեցիներից մեծ մասը բանդվեցին և ավերակների վերածվեցին 1322 թ.<sup>97</sup>: Այս ժամանակ հիմնահատակ Կործանվեցին նաև հայկական եկեղեցիների մեծ մասը, մնացյալն էլ անցնելով դպտիների ձևորք:

Վերոհիշյալ երեսուն աղոթավայրերի և սրբատեղիների թվարկումը պարզ և հստակ կերպով ցույց է տալիս, որ առհասարակ միջնադարյան Եգիպտոսում, և մասնավորապես ԺԱ—ԺԲ դարերում հայկական համայնքներն որտե՞ղ էին սփռված Նեղոս գետի երկայնության և որքա՞ն հոծ էին դրանք: Այսպէս, պարզվում է, որ հայերի մեծ մասը ապրում էր Կահիրեսում, որտեղ ունեին բազմաթիվ եկեղեցիներ այն թաղերում և թաղամասերում (Այգեստան—Էլ-Բասարին, Հարեթ Էլ-Զուելա, Զումրի, Դեյր Էլ-Խամդաք), որը հրանք ապրում էին բռվ-բռվի: Բացի մայրաքաղաքից հայկական համայնքներ գոյություն ունեին Թուրայում, Իթֆիրում, Քալուսանայում, Շինարայում, Էլ-Խուտուսում, Սաֆթ Մելումում, Ֆեյտում, Ասիտում, Վադի Նաթրունում և Սոհակում: Բացի այդ բաղաքներից և գյուղերից շատ հավանաբար հայեր կային նաև այլ բնակավայրերում (Աղեքսանդրիա և այլն), որոնց մասին Աբո Սալին երկի գրած է եղել իր ձեռագրի Կորած առաջին 22 թերթերում: Անշուշտ հայերը ցոված են եղել Եգիպտոսի այլ բնակավայրերում նաև, որտեղ չէին եղել հայկական աղոթավայրեր, գաղթօջախի հոր լինելու հետևանքով:

Պետք է նշել, որ գործող այս վանքերն ու եկեղեցիները ոչ միայն աղոթատեղիներ են եղած, սակայն իրականում հանդիսացել են ազգային ինքնագիտակցությունը պահպանող հիմնարկներ, հայության պահպանության վառ օջախներ, որտեղ գոյություն են ունեցել հայկական դպրոցներ և որտեղ, հատկապես վաճքերում, ծաղկել է հայերներ գիրն ու գրականությունը, ինչպես նշում են աղբյուրները:

### (Ծարունակելի)

<sup>96</sup> Գ. Մըսրլյան, նշված աշխատությունը, էջ 147:

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 140:



## ՑԱՆԿ

### «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1993 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ամենորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոյք Եկեղեցների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա—Բ—Գ 5:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամենորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյաց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա—Բ—Գ 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Ամենորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ, Ա—Բ—Գ 9:

Վեհափառ Հայրապետի խոսքը տարեմուտի համեստին, դեկտեմբերի 31-ին, Ա—Բ—Գ 15: Խրիմյան Հայրիկի և Բարիք Շեխսուլ-խասմի համատեղ կոչը հայ և աղրթեշանցի ժողովուրդներին 1905 թվականին, Ա—Բ—Գ 41:

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոյք Եկեղեցների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ—Ե—Զ 9:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյաց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Դ—Ե—Զ 12:

Վեհափառ Հայրապետի խոսքը հոգևոր ճեմարանի ամավերջի համեխտությանը, Դ—Ե—Զ 28: Վեհափառ Հայրապետի օրննության խոսքը Սուրբ Աստվածածին կիրակմօրյա վարժարանի 1992—1993 ուսումնական տարիս փակման համեստին, Է—Ը 6:

Բ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի Ս. Ծննդեան քարոզը խօսուած Ս. Էջմիածնի Մայր տաճարում, 6 հունվար 1993 թ., Ա—Բ—Գ 3:

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում Լուսին Զաքարյանի նոգեհանգստյան առթիվ, Ա—Բ—Գ 57:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վագգեն Ա. Հայրապետի գատկական քարոզքը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե—Զ 3:

Վեհափառ Հայրապետի քարոզքը Մայր տաճարում Կաթողիկոս Սուրբ Էջմիածնի տոմին,  
Դ—Ե—Զ 6:

Գ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Սուսկա, Ա—Բ—Գ 19:  
Հոգևոր պիտերը խաղաղության ավետարեր, Ա—Բ—Գ 35:

Դ. ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾԱՆՈՒՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհանդեսության Սուսկա, Ա—Բ—Գ 19:  
Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 85-ամյակի առջիվ, ԺԱ—ԺԲ 3:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ողջույնի ուղերձը,  
ԺԱ—ԺԲ 4:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սայրության Հիմնադրամի նախագահության  
շնորհանդեսության ներակիրը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագգեն Ա. Ամենայն Հայոց  
Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակի առջիվությունը, ԺԱ—ԺԲ 6:

Հայաստանի Խաղաղության Ֆոնդի շնորհանդրական ուղերձը Ամենայն Հայոց Վեհափառ  
Հայրապետին՝ ծննդյան 85-ամյակի առջիվ, ԺԱ—ԺԲ, Էջ 6—7-ի ներդիր:

Գյուղական նատաշրջան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակա-  
դեմիայի նիստերի դահլիճում նվիրված Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագգեն Ա  
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակին, ԺԱ—ԺԲ 7:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի քաց-  
ման խոսքը գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում կայացած  
գիտական նատաշրջանում նվիրված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան  
85-ամյակին, ԺԱ—ԺԲ 7:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրինության և շնորհանդեսության խոսքը Հայաս-  
տանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում  
կայացած գիտական նատաշրջանում նվիրված իր ծննդյան 85-ամյակին, ԺԱ—ԺԲ 9:

ՊԻՌԱ ՀԱՅՈՒՅՑԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վագգեն Սուաշինի գիտաեւ-  
տագործական վաստակ, ԺԱ—ԺԲ 12:

ԴԿԿՏ. ՊՊՈՒ. Հ. Մ. ԹՌՈՒԹՈՒՆՑԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վագգեն Ա-ի հոգե-  
ի բանական աշխատությունները, ԺԱ—ԺԲ 29:

Նկարիչ Գրիգոր Խանջյանի շնորհանդրական խոսքը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրա-  
պետի ծննդյան 85-ամյակի առջիվ, ԺԱ—ԺԲ 37:

ՊՐՈՖ. ՎԱՐՍՉԴԱՏ ՀԱՅՈՒՅՑԱՆ—Մեր շինարար Կաթողիկոսը, ԺԱ—ԺԲ 41:  
ՄԱՅԱ ՀԱՅՈՒՅՑԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վագգեն Ա-ի բանգարանային գոր-  
ծունեությունը, ԺԱ—ԺԲ 47:

Հ. Պ. ՓԱՓԱՅՑԱՆ—Մեծագործ Հայրապետը, ԺԱ—ԺԲ 51:

Հայաստանի Հանրապետության գրողների միության նախագահ Վահագն Դավթյանի շնոր-  
հիքորական ուղերձը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 85-ամյակի  
առջիվ, ԺԱ—ԺԲ 58:

Բանաստեղծություն Միլվա Կապուտիկյանի խոսքը ստ Հայրապետն Հայոց՝ ծննդյան 85-ամ-  
յակի առջիվ, ԺԱ—ԺԲ 60:

ՆՍՉԿ ՀԱՅՈՒՅՑԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վագգեն Սուաշինը մանկա-  
վարժ, ԺԱ—ԺԲ 61:

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՈՒԿՅԱՆ—Կյանք՝ բանում մեծ գոյամարտի (Ամենայն Հայոց Վեհափառ  
Հայրապետի ծննդյան 85-ամյակի առջիվ), ԺԱ—ԺԲ 70:

## Ե. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՂԻ

Հաղորդագրութիւն, Ա—Բ—Գ 33:  
 Հաղորդագրություն, Դ—Ե—Զ 14:  
 Հաղորդագրութիւն, Դ—Ե—Զ 16:  
 Հաղորդագրութիւն, Դ—Ե—Զ 18:  
 Հաղորդագրութիւն Ս. Էջմիածնից, Է—Ը 8:

## Զ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դ խնդիր ոգևորեանի, ԺԱ—ԺԲ 3:

## Է. ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ

Ամանորը Մայր Աթոռում. Ա—Բ—Գ 12:  
 Եկեղեցական թեմ. լորեր, Ա—Բ—Գ 42, Դ—Ե—Զ 30, Է—Ը 12, Թ—Ժ 76, ԺԱ—ԺԲ 12:  
 Սուրբ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի 1992—1993 ուսումնական տարիա փակման  
 հանդեպ, Է—Ը 3:  
 Սուրբ Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն, ԺԱ—ԺԲ 6:  
 ԱՆԴՐԱՄԱՆԻԿ ԱՍՏՎԱՎԱԳ ԺԱՄԿՈՂՑԱՆ—Սարկավագական ձեռնադրություն Ս. Աստվա-  
 ծածին եկեղեցում, ԺԱ—ԺԲ 10:

## Ը. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ավարտաճառերի պաշտպանություն և հոգևոր ճեմարանի 1992—1993 ուսումնական տար-  
 իա փակման հանդիսություն հոգևոր ճեմարանում, Դ—Ե—Զ 26:  
 Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսությունը, ԺԱ—ԺԲ 74:

## Թ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Քենթքերի Արքեպիսկոպոս Նորին Գերազնորհություն դոկտ. Զորշ Քերիի քարոզը Սուրբ  
 Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե—Զ 19:  
 Գերազնորի Տ. Շամիլ արքեպս. Ամեմեանի քարոզը Մայր տաճարում՝ Հոգեգալստեան տօ-  
 նին. Դ—Ե—Զ 22:  
 Գերազնորի Տ. Շամիլ արքեպս. Ամեմեանի քարոզը Մայր տաճարում՝ Վարդապահ տօնին,  
 Է—Ը 16:  
 Ներեւա արքեպիսկոպոս Պողապալյանի քարոզը Մայր տաճարում Ս. Աստվածածին տո-  
 նին, Է—Ը 20:  
 Անցյալի լուսավոր էջերից (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Ալետարանն ու աղ-  
 բատությունը), ԺԱ—ԺԲ 24:  
 Գերազնորի Տ. Հովհանն արքեպիսկոպոս Տերեկյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճա-  
 րում, ԺԱ—ԺԲ 31:

## Ժ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԴՐՈՒՅ, ՎԱՐՍԶԴԴԱՏ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՑԱՆ—Խորան լուս և հավատք, Ա—Բ—Գ 49;

## ԺԱ. ԹԵՍՄԱԿԱՆ

ԱՆԴՐԱԾՈՒԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԺԱՄԿՈՑՅԱՆ—Ա. ԾԱՌԻՋԱՆ տոնը Վրաստանի հայոց Ա. Գևորգ Մայր եկեղեցում, Ա—Բ—Գ 46:

Մթոռավագործություններ Քյոլնում, Ա—Բ—Գ 47:

Վիրահարց թեմում, Է—Ը 24:

Կոստանդնուպոլիս Տեղապահության և օծում Խրաքի հայոց թեմէն ներս, Է—Ը 26:

Հաղորդագրություն Սյունիաց թեմից, ԺԱ—ԺԲ 15:

ԱՌՈՂԴՅԱՆ ԱՐԴՎԱՍՏԱՆ—Բոգդանվկայի Ա. Սարգիս եկեղեցու օծումը, ԺԱ—ԺԲ 16:

Հաղորդագրություն Ուկրաինայի հայոց նոգեսր նովությունից, ԺԱ—ԺԲ 18:

## ԺԲ. ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Աստվածաշունչ Մատյանից, ԺԱ—ԺԲ 21:

## ԺԳ. ԳՐԱԿԱՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Եկեղեցին իմ հայոց, Ա—Բ—Գ 53:

Պիտի հաւատաս..., Ա—Բ—Գ 55:

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ—Հոգեբանգիստ (Լուսին Զաքարյանի հիշատակին), Ա—Բ—Գ 59:  
ՆԵՐՍԵՆ ՎԱՆԱԿԱՆ

Սուրբ Էջմիածին, Դ—Ե—Զ 36:

Հորդոր, Դ—Ե—Զ 37:

Գարնան անձրև, Դ—Ե—Զ 38:

## ԺԴ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲԵԼ ԱԲԵՂԱՅ—Հայ Եկեղեցու սարկաւագությները կանոնական տեսանկինից դիտուած,  
Ա—Բ—Գ 81:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Ա. Վ.—Ազգային ինքնուրույնության գաղափարը դավանաբանական թղթերում, Դ—Ե—Զ 88:

ԱՄՄՈՒՋԱՆՅԱՆ Ս.—Գտչա վանքի Առաքել վարդապետը, Է—Ը 70:

ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ—Քրիստոս անոնք հայերեն կայուն բառակապակցություններում,  
Դ—Ե—Զ 80:

ԴԵՎՐԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ—Ժողովրդական երազանքի խորհրդանշիցը, ԺԱ—ԺԲ 65:

ԽԱՐԱՍՏԱՆ ՀԵՆՐԻԿ—Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը Հաղարծնի բարենորդող,  
Դ—Ե—Զ 60:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍԱՄԴ-ԱՆԴՐԱՆԻԿ—Կուտինարայությունը և նրա մի նորահայտ ձեռագիրը,  
Դ—Ե—Զ 107:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԻԱՏ—ԾԱնկել էր ճարտարապետ լինելու համար, ԺԱ—  
ԺԲ 75:

ՂԱԶԻՆՅԱՆ ԱՐԵԱԿՈՒՅՑ Նարեկացու գնահատությունը դարերի նորվություն, ԺԱ—  
ԺԲ 34:

ՄԱԹԵՎՈՅՈՅԱՆ ԱՐՏԱՃԵՍՄԱՆ Մարգմանչաց ավետարանը, Ա—Բ—Գ 105:

ՄԱԹԵՎՈՅՈՅԱՆ ԿԱՐԵՆ—Ամենայն Հայոց Կարողիկոսությունը և բաղաքամայր ԱԾին,  
Ա—Բ—Գ 119: —Հողոմոսի վանքի պատմության նոր էջը (ԺԴ—ԺԹ դր.), Դ—Ե—Զ  
72:—Ազի բարպար հոգևորականությունը, ԺԱ—ԺԲ 44:

ՄԽՍԵՆԱՆ ՄԻՓԱՆ ՔԱՀԱՆՅԱՅԻ Սիրոյ Սուարեալլ Յովհաննես, Ա—Բ—Գ 97:

ԶԱՓՈՒՋՅԱՆ ՍԱՐԳԻՒՄ—Բարեկեն Կոյլեսելիան, ԺԱ—ԺԲ 70:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵԶՈՒԿ ՎԱՐԴԱՊԵՏ—Հայ Եկեղեցու բրհտուաբանությունը, Ա—Բ—Գ 60:

ՍԱՐԳՅԱՆ ՎԱՎԱՎ. Օհիկաբար բերդը և շրջակայի հուշարձանները, Է—Ը 78:

ԱՏԵՓԱՆՅԱՆ Գ. Խ.—Երգմակի վաճրերը, Ա.—Բ—Գ 135, Է—Ը 41, ԺԱ.—ԺԲ 54:  
 ԱՏԵՓԱՆՅԱՆ ՀՐԱՀ ԱՂՎԱՆԻ—Հայ ժողովրդի պալքարն ընդդեմ թաթար-մոնղոլ բռնա-  
 կալմերի կրոնական հայածանքների, Ա.—Բ—Գ 155:  
 ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՒԲԱՐ—Հայկական եկեղեցիներ Ֆրանսիայում միշին դարերում,  
 Ա.—Բ—Գ 144: —Եղիպտահայ գաղութը Ժ—ԺԲ դարերում և հայկական եկեղեցիները,  
 Է—Ը 55, ԺԱ.—ԺԲ 81:  
 ՔՅՈՒՆԵՑԱՆ Հ. Հ.—Նորահայտ ճառ Սուրբ Հաղորդության մասին, Ա.—Բ—Գ 102:— Սուրբ-  
 քրային վկազակումները Կորյունի «Վարդ Մաշտոցում», Դ—Ե—Զ 39:— «Վկայու-  
 թինք ի պէտս քարոզութեանց», Դ—Ե—Զ 50, Է—Ը 29:  
 ՖԱՆՅԱՆ Զ.—Մի էշ մեր պատմությունից, Ա.—Բ—Գ 161:

#### ԺԵ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ


Հոգեշնորհ Տ. Տաթև աբեղայ Յակոբյան, Է—Ը 28:

#### ԺԶ. ՄԱՀԱԳՐՈՒԿԱՆԵՐ

Հոգևոր երգի մեծ կորուստ, Ա.—Բ—Գ 56:  
 Հանգիստ Հոգեշնորհ Տ. Պողոս վարդապետ Տեր-Նշանյանի, Ա.—Բ—Գ 167:

«Էջմիածին» ամսագրի յորաքանչյուր համարի վերջում տրվում են բովանդակության հա-  
 մառուս թարգմանությունները ուսւերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:






## «ЭЧМИАДЗИН»

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА  
(НОЯБРЬ—ДЕКАБРЬ 1993 г.)

1. Ведомостная—О духовности (стр. 3—5).
2. Праздник Св. Степаноса и рукоположение диаконов в первоцерковном Эчмиадзине и престольной церкви Св. Саркиса Арагатской Патриархей епархии, 26 декабря 1993 г. (стр. 6—9).
3. Диакон Анастасий Жамковян—Диаконское рукоположение в церкви Св. Богородицы в Эчмиадзине, 3 октября 1993 г. (стр. 10—11).
4. Церковная хроника первоцерковного Эчмиадзина за ноябрь—декабрь месяцы (стр. 12—14).
5. Сообщение из Сюникской епархии. Закладка церкви Св. Трдата. Помещено также отрывок из проповеди самого главы предстоятеля епархии (стр. 15).
6. Вильям Абрамян—Освящение церкви Св. Саркиса в с. Богдановка (Грибан), 13 ноября 1993 г. (стр. 16—17).
7. Сообщение из армянского духовного викариата Украины. Закладка армянской церкви Св. Григория Проповетеля в г. Одессе, 13 ноября 1993 г. Помещено также послание Католикоса всех армян Вазгена I викарию армянской епархии Украины архиепископу Наталю Оганесяну, 3 ноября 1993 г. (стр. 18—20).
8. Фрагменты из Виблия (Псалтырь А. Б. Г.)—(стр. 21—23).
9. Из свиданий минувшего.—Епископ Карапет Тер-Мартычян. Помещена одна из проповедей—«Евангелие и бедность» (стр. 24—30).
10. Проповедь архиепископа Ованеса Тертеряна в Кафедральном соборе Св. Эчмиадзина (стр. 31—33).
11. Аршалуйе Казинян—Оценка Нарекаци на протяжении веков (исследование)—(стр. 34—43).
12. Карен Матевосян—Духовенство города Ани (исследование, продолжение следует)—(стр. 44—63).
13. Г. Х. Степанян—Монастыри Ерзининской местности (исследование, продолжение)—(стр. 64—61).
14. Геворг Деврикян—Символ народной мечты. По случаю 120-ти летия апостола «Давида Сасунского» (исследование)—(стр. 65—69).
15. Саркис Януджян—Бабекен Кюлесерян (исследование)—(стр. 70—74).
16. Профессор Вараздат Арутюнян—Архитектором быть родился. По случаю 85-ти летия со дня рождения Рафаэля Исраеляна (исследование)—(стр. 75—80).
17. Нуubar Тер-Микояян—Армянская община Египта в X—XII вв. и армянские церкви (исследование, продолжение следует)—(стр. 81—92).
18. Список напечатанных статей в журнале «Эчмиадзин» за 1993 год (стр. 93—97).

"ETCHMIADZIN"  
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN  
(NOVEMBER—DECEMBER 1993)

1. Editorial—For the spirituality (pp. 3—5).
2. The festival of St. Stephen and deaconal ordination in the Mother See and in the curacy of Patriarchal diocese's church Holy Sarkis, 25-th December 1993 (pp. 6—9).
3. Deacon Andranik Jamgotchian—Deaconal ordination in the Holy Virgin's church of Etchmiadzin, 3-rd October 1993 (pp. 10—11).
4. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of November—December 1993 (pp. 12—14).
5. Communiqué from the diocese of Syunik, Foundation of Hely Dertad's church. There is also a segment from the address of the primate Bishop (p. 15).
6. Vartevya Abrahamian—The consecration of Bugdanovka's (Georgia) Holy Sarkis church, 18-th November 1993 (pp. 16—17).
7. Communiqué from the Armenian spiritual pastorship of Ukraine, Foundation of the Armenians' Holy Gregory the Illuminator church of Odessa, 18-th November 1993. It is given also the address of His Holiness Vasken I to the locum tenens of the primate Father Nathan Hovhannessian of Ukraine's Armenians, 3-rd November 1993 (pp. 18—20).
8. Segments from the Bible (Psalms A,B,C)—(pp. 21—23).
9. From the bright pages of the past, Bishop Karapet Ter-Mekerchian. From the sermons of «The Gospel and the poverty» (pp. 24—30).
10. The sermon of Archbishop Hovnan Terterian in the Holy Cathedral of St. Etchmiadzin (pp. 31—33).
11. Arshaluys Ghazinian—The estimation of Narekatsy during the centuries (study)—(pp. 34—43).
12. Karen Mathevossian—The clergy of the city Ami (study, to be continued)—(pp. 44—53).
13. G. Kh. Stepanian—The monasteries of Yerzenka (study continuation)—(pp. 54—64).
14. Gevorg Bevrirkian—The symbol of popular dreaming. On the occasion of the 120-th anniversary of the writing of Sasoontsi David epic work (study)—(pp. 65—69).
15. Sarkis Vayroodjian—Babgen Gulessarian (study)—(pp. 70—74).
16. Prof. Varazdat Hareootianian—He has been born to be architect. On the occasion of Raphael Israelian's 85-th birthday (study)—(pp. 75—80).
17. Nubar Der Mikaelian—The Armenian colony of Egypt during the X—XII centuries and the Armenian churches (study—to be continued)—(pp. 81—89).
18. List of the materials printed in the «Etchmiadzin» monthly during the year 1993 (93—97).



## „ETCHMIADZINE“

### ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (NOVEMBRE—DECEMBRE 1993)

1. Editorial: En vue de la spiritualité (pp. 3—5).
2. Célébration de la fête de Saint Etienne et ordination de diacres au Saint-Siège d'Etchmiadzine et dans l'église métropolitaine St. Sarkis d'Erévan (25 décembre 1993) — (pp. 6—9).
3. Diacre Andranik Jamkotchian—Ordination de diacres à Etchmiadzine dans l'église de la Sainte Vierge (3 octobre 1993)—(pp. 10—11).
4. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois novembre-décembre 1993 (pp. 12—14).
5. Communiqué du diocèse de Siounik: cérémonie de la fondation de l'église Saint Tiridate. (Texte de l'allocution du prélat du diocèse de Siounik prononcée à cette occasion)—(p. 15).
6. Volodia Abrahamian—La consécration de l'église arménienne Saint Sarkis à Bogdanovka (Géorgie)—(13 novembre 1993)—(pp. 16—17).
7. Communiqué du diocèse des Arméniens de l'Ukraine: cérémonie de la fondation de l'église arménienne St. Grégoire l'Illuminateur à Odessa (13 novembre 1993). (Texte du message de Sa Sainteté Vasken Ier adressé à cette occasion au Père Natan Hovhannessian, vicaire du prélat)—(pp. 18—20).
8. Extraits de la Sainte Bible (Psaume I, II, III)—(pp. 21—23).
9. De belles pages du passé: reproduction du sermon de l'évêque Karapet Ter-Mekerlelian intitulé «L'évangile et la pauvreté» (pp. 24—30).
10. Sermon de l'archevêque Hovnan Terterian, prélat du diocèse des Arméniens du Canada, prononcé dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 31—33).
11. Archalouïs Ghazinian—L'œuvre de Grégoire de Narek appréciée au cours des siècles (étude)—(pp. 34—43).
12. Karen Matévoian—Le clergé de la ville d'Ani (étude, à suivre)—(pp. 44—53).
13. G. Kh. Stépanian—Les monastères d'Erzincan (étude, suite)—(pp. 54—64).
14. Guévorg Devrikian—Le symbole du rêve populaire (A l'occasion du 120e anniversaire de la publication de l'épopée «David de Sassoun» (étude)—(pp. 65—69).
15. Sarkis Yapoudjian—Babken Gulessérian (étude)—(pp. 70—74).
16. Prof. Varazdat Haroutounian—«Il était né pour devenir architecte» (A l'occasion du 85e anniversaire de la naissance de Raphaël Israélian (étude)—(pp. 75—80).
17. Noubar Ter-Mikaélian—La colonie arménienne d'Egypte aux Xe—XIIe siècles et les églises arménienes (étude, à suivre)—(pp. 81—82).
18. Table des matières publiées dans la revue «Etchmiadzine» au cours de l'année 1993.

Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ ՈՒ Թ Ց ՈՒՆ

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ—Ի խմելիր ոգեշնչնի	8
Սուրբ Սուտիանոսի տոմք և սարկավագական ձեռնադրություն	6
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՄԻԿԱՎԱԳ ԺԱՄԿՈՉՅԱՆ—Սարկավագական ձեռնադրություն	10
Աստվածածին եկեղեցում	10
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բաժ. լուրեր	12
Հաղորդագրություն Այունյաց թեմից	15
ՎՈՂՈՒՅԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Բոգդանովիայի Ս. Սարգիս եկեղեցու օծումը	16
Հաղորդագրություն Ռէկրամայի հայոց հոգևոր հովվությունից	18
Աստվածաշունչ Մատյանից	21
Անցյալի լուսավոր էջերից	24
Գերաշնորհ Տ. Հովհաննեսիսկովու Տերտերյանի բարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում	31
ԱՐԺԱՎՈՒՅՑ ՊԱԶԻՆՅԱՆ—Նարեկացու գմանատությունը դարերի նորմություն	34
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՅՈՍՅԱՆ—Անի բաղադրի նոգնորականությունը	44
Գ. Խ. ԱՏԵՓՈՒՆՅԱՆ—Երզմակի վամբերը	54
ԳԵՎՈՐԳ ՂԵՎՈՒՆԿՅԱՆ—Ժողվրդական երազանքի խորհրդանշը	65
ՄԱՐԳԻՒՄ ՑԱՓՈՒԶՅԱՆ—Բարգեն Կյուլեսերյան	70
ՊՐՈՖ. ՎԱՐՍՉՈՒԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Ծնվել էր ճարտարապետ լինելու համար ՆՈՒՐԱՅՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Եղիպտամայ զաղութք Ժ—ԺԲ դարերում և նայկական եկեղեցիները	75
Ցանկ «Էջմիածնի» ամսագրում 1993 թվականի ընթացքում տպագրված պարտերի	81
«Էշմիածն» օֆիցիալ ժուրնալ Էշմիածնի Կատոլիկոսата	98
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	99
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	101

ԴՐԱՄ ԵԼՊԱՆ ԾԱՀԱՆ ԷՇԳԻՑՈՒՅԹ ԽԵՎՈՎՈՒՅԹ

Տպագիրներ 6,5 մատին + 8 ձեղին, ուղղությունը՝ 70×108/16, սահմանը՝ 840:

Համացիւ և սահմանափակ 10.12.1998 թվ. Դպրոցական և սահմանափակ 11.02.1994 թվ.

Բերդաշներ Ապենին, Զարաբան, Պետրոս Կիրազյան, Քանիանսկին, Բեթմաձին, Արմենի:

«ԵՎՐՈՊԻ» ՄԱՐԱԳԻ ԽԵՎՈՎՈՒՅԹ

ՀԱՅՈՍԴԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՏՐԱՎԵՐՏԻ

ԽՐԱՄԱԳԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՏՐԱՎԵՐՏԻ

Խելպարբեկու, Խաղողիկ բարեկանություններուն







